



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

The image shows a close-up of a marbled paper pattern, likely used for book covers or endpapers. The pattern consists of irregular, organic shapes in shades of green, blue, and red, set against a background of gold or tan. The colors are distributed in a complex, non-repeating fashion, creating a rich, textured appearance. A small, rectangular, light-colored label is affixed to the bottom left corner of the image.

5627

$\frac{9}{7}$  ~~73~~ 1

A



3262

1457

# ԵԻՏՈՒՇԵԻՍԿԻ

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՆԵՐԻ

I մասն. ամբողջ թուեր

ԵՐԿՐՈՐԳ ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Նոր փոփոխութիւններով եւ յաւելումներով

Փոխադրուած իւն

**ՍԱՐՑԻՐՈՍԻ ՍԻՄԵՆՆԵԱՆՑ**

Տ Փ Թ Ի Ս

ՅՊԱՐԱՆ 2. ԵՆՏԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԲՆԿ.

1875



Handwritten numbers in purple ink: 488 and 1875.

Дозволено цензурою Тифлисъ. 15-го Марта 1875-го г.

|   | <i>Երես</i> |
|---|-------------|
| <b>Յառաջարան</b> . . . . .  | I           |
| 1. <b>Խնդիրներ</b> 1— 10 . . . . .  | 1           |
| 2. — — 11— 20 . . . . .   | 11          |
| 3. — — 21— 30 . . . . .   | 21          |
| 4. — — 31— 40 . . . . .   | 30          |
| 5. — — 41— 50 . . . . .   | 39          |
| 6. — — 51— 60 . . . . .   | 47          |
| 7. — — 61— 70 . . . . .   | 55          |
| 8. — — 71— 80 . . . . .   | 64          |
| 9. — — 81— 90 . . . . .   | 72          |
| 10. — — 91—100 . . . . .  | 80          |
| 11. <b>Ընդեղէնների չափերը</b> . . . . .   | 89          |
| 12. <b>Երկարութեան չափերը</b> . . . . .   | 93          |
| 13. <b>Ծանրութեան չափերը</b> . . . . .  | 101         |
| 14. <b>Բերանացի վճուելու խնդիրները</b> 1—1000 . . . . .                                 | 108         |
| 15. <b>Գրաւոր խնդիրներ չորս գործողութեան իւրա-<br/>քանչիւրի վերայ առանձին</b> . . . . . | 116         |
| 16. <b>Գրաւոր վճուելու իսաւր խնդիրներ չորս գործո-<br/>ղութեանց վերայ</b> . . . . .      | 126         |
| 17. <b>Խնդիրներ բարդ սնուանական թուերով</b> . . . . .                                   | 136         |
| 18. <b>Աղիւսակներ</b> . . . . .   | 149         |
| 19. <b>Պատասխանիք</b> . . . . .   | 3           |

## ՅԱՌԱՋԱԲԱՆ



Թուաբանական խնդիրների այս առաջին մասը գործ դնելու ժամանակ ուսուցիչները պետք է ուշադրութիւն դարձնեն հետևեալ առանձնութիւնների վերայ:

Ա. Խնդիրների դասաւորութիւնը առաջին տասը (Ա—Ժ) բաժանմունքի մէջ համապատասխանում է թուաբանութեան սայրական ընթացքին ԳՐՈՒԲԷԻ մէթոդով, որ պահանջում է ուսանել առաջին հարիւրեակի իւրաքանչիւր թիւը կարգով: Այդ նպատակով խնդիրները դասաւորած են առաջին հարիւրեակի թուերի կարգով: Միևնոյն ժամանակ խնդիրների բաժանմունքները զանազան տասնեակների՝ համապատասխանում է թուաբանութեան ընթացքի դասաւորութեանը ԳԻՍՏՆՈՎԵՂԻ և ՀՆՆ-ՉՆԻ մէթոդով, որ պահանջում են մանրամասն ուսանել առաջին հարիւրեակի թուերը տասնեակներով և ոչ թէ ամեն-մի թիւը առանձին, ինչպէս Գրուբէն է անում:

Բ. Խնդիրների առաջին բաժանմունքի մէջ 1—10, թուերը գրած են բառերով և ոչ թուանշաններով, ի նկատի ունենալով որ շատ անգամ վարժապետները յարմար են դատում սկզբումը այդ առաջին բաժնի մէջ գործ չդնել թուանշաններ:

Գ. Թուաբանական խնդիրների ծողովածուն բովանդակում է իւր մէջ ըստ մեծի մասին բարդ խնդիրներ, այսինքն այնպիսիք, որոնց վճռելը պահանջում է ոչ պակաս երկու թուաբանական գործողութիւնից: Իսկ այն խնդիրները, որոնց վճռելը պահանջում է մի թուաբանական գործողութիւն, աւելի յարմար է որ նոյն ինքը վարժապետը կազմի և առաջարկի աշակերտներին դասի ժամանակ յարմարվելով իւրաքանչիւր աշակերտի ընդունակութեանը և դասատան կարողութեանը:

Դ. Ծողովածուն իւր մէջը պարունակում է բոլոր բաժանմունքների համար շատ մեծ պաշար խնդիրների թէ դասի ժամանակ թէ դասիցը դուրս վճռելու համար: Վարժապետը խըն

դիրները դասաւորութեանը համեմատ հեշտութեամբ կարող է ընտրութիւն անել դոցա մէջ աշակերտների ընդունակութեանը, զարգացմանը և զխտութեանը յարմար: Աւելի դժուար և սրամըտութիւն պահանջող խնդիրները ամեն բաժնում դասաւորած են վերջումը: Միևնոյն բաժանմունքի խնդիրները ուսանելիս աւելի դժուար աշակերտներին պէտք է առաջարկել դժուար խնդիրներ իսկ թոյլերին հեշտ խնդիրներ:

Ե. Խնդիրների պարունակութիւնը վերցրած է հասկացողութեան այն շրջանից, որ ըմբռնելի է երեխայական հասակին, ուստի և ժողովածուի սկզբիցը մինչև վերջը խնդիրները պարունակութիւնը աստիճան առ աստիճան բարդվում է: Գլխաւորապէս ուշադրութիւն է դարձրած, որ աստիճանաբար բարդվին հասկացողութիւնը:

Զ. Առաջին տասը բաժանմունքի խնդիրները այնպէս են կազմած, որ աշակերտները կարող են վճռել ընթանացի. թէպէտ դոցա կարելի է վճռել և դրաւոր, որպէս զի աշակերտները ծանօթանան խնդիրը վճռելու դասաւորութեան եղանակին: Հետեւեալ բաժանմունքների մէջ (ԺԱ.—ԺԳ.) պարտը վճռելու խնդիրներից առաջ դրած են բերանացի վճռելու խնդիրներ. բայց դրանից չպէտք է հետեացնել, որ պէտք է որևիցէ բաժնի ընթանացի բոլոր խնդիրները վճռել աշակերտների հետ և ասպա սխել զրաւորը: Բերանացի վճռելու խնդիրները աշակերտին հասկացողութիւն են տալի նոր բաժանմունքի պարունակութեան մասին և ծանօթացնում են մտածողութեան այն եղանակին, որ յարմար է այդ բաժանմունքի շրջանում: Աւելի լաւ է որ բերանացի և պարտը վճռելու խնդիրները փոփոխակի հետեեն միմեանց:

Է. Առաջին տասը բաժանմունքի մէջ գտանվում են շատ անորոշ խնդիրներ, որոնք պահանջում են թուերի լուծումն բազմապատկիչների և գումարելիների: Դոցա նպատակն է ինչպէս թուերի կազմութեան եղանակների զանազանակերպութեանը ծանօթացնելու, նոյնպէս և ուսանելի թուի բոլոր յատկութիւնները աշակերտի գիտակցութեան մէջ ամրացնելու համար:

Ը. Հետեւեալ բաժանմունքների մէջ (ԺԱ, ԺԲ, ԺԳ.) բարդ

անուանական թուերի խնդիրները առաջին հարիւրեակի սահմանում իւրաքանչիւր չափի համար առանձին են դրած, այն պատճառով, որ հեշտ լինի նոցանից ընտրութիւն անել զանազան չափերի միութեանական յարաբերութեանց համար: Ուսուցչի կամքին է թողվում այդ խնդիրների գործադրութեան դասաւորութիւնը առաջին հարիւրեակի թուերը ուսանելու ժամանակ, նոյնպէս և բարդ անուանական թուերի խնդիրների դասաւորութիւնը: Այդ երեք բաժանմունքի խնդիրները ծառայում են նախ՝ առաջին հարիւրեակի թուերը ուսանելու ժամանակ, զանազանակերպութիւն տալու համար և երկրորդ՝ վերին կարգի թուերի թուարկութիւնը ուսանելուց առաջ՝ չորս գործողութեան մեքենայական կանոններին ծանօթանալու համար:

Թ. Ժողովածուի մէջ զրաւոր վճռելու խնդիրների կարգում պատահում են երկու կամ երեք խնդիր միատեսակ պարունակութեամբ, որոնք վճռվում են միևնոյն ձևով: Այդ բանը մտքըրած է այն պատճառով, որ ուսցիչը միշտ կարող լինի առաջարկել աշակերտին դասիցը դուրս վճռելու այնպիսի խնդիրներ, որոնց նմանը իւր ներկայութեամբ վճռել է դասատան մէջ: Խնդիրների միատեսակութիւնը հարկաւոր է ոչ այն պատճառով, որ աշակերտը սովորի վճռել միանգամ իրան յայտնի եղանակով, որից ընդհակառակն պէտք է շատ զգուշանալ, այլ նորա համար, որ նա երկրորդ խնդրի վերայ տանը կրկնի ինքնուրոյն կերպով այն, ինչ որ շինել էր դասատանը բոլորովին հասկանալով և ըմբռնելով:

Ժ. Ժողովածուի այս մասի վերջումը դրած են բազմապատկութեան և չափերի աղիւսակները, որոնք հարկաւոր են աշակերտին թուարանութիւնը ուսանելու ժամանակը, նոյնպէս խնդիրները լուծելու դասաւորութեան ձևը և խնդիրների պատաստախանիքը: Երբ խնդիրների գիրքը դրվում է աշակերտի ձեռքը օգուտ քաղելու, այն ժամանակը աւելի լաւ է պատասխանիքը բաժանել գրքիցը, այդ պատճառով նոքա դրած են գրքի վերջը բոլորովին առանձին:

# ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻՒՐԵԱԿԻ ԹՈՒԵՐԸ

Ա.

Թ Ն Գ Ի Ր Ն Ե Ր

1—10

1. Մի երեկայ երկու տարեկան էր, իսկ նորա եղբայրը մի տարով նորանից մեծ էր: Քանի՞ տարեկան էր եղբայրը:

2. Երկու երեկայ սլառահեղին իւրեանց ընկերին և սկսեցին միասին խաղալ: Քանի՞ հոգին էի խաղում:

3. Երեկան իւր հօրիցը ստացաւ երեք կոպէկ. նորա մի կոպէկը տուեց խնձորի, իսկ մնացած փողովը առաւ երկու զրէ: Ամեն-մի զրէն ո՞րքան փող տուեց:

4. Աթուի մի ոտը կտորած էր: Քանի՞ ոտն էր ամբողջ:

5. Պատուհանումը չորս աղակի կար, բայց երեքը կտորած էր: Քանի՞սն էր ամբողջ:

6. Մի աղջկի ծառի տակիցը չորս խնձոր վերցրեց, բայց նոցա կէսը փտած էր: Քանի՞սն էր լաւ:

7. Տանտիկիկը երկու զոյգ բաժակ ունէր, նոցանից մինը կտորվեց: Քանի՞սը մնաց ամբողջ:

8. Երկու սայլում լծած էր չորս եղը: Ամեն-մի սայլում քանի՞ եղն էր լծած:

9. Երեկան չորս կոպէկ փող ունէր, որ բաղկացած էր երեք զրամից. այդ զրամներից երկուսը փոխեց մէկի

հետ, այնպէս որ նա ունեցաւ երկու միմեանց հաւասար դրամ: Առաջ նա քանի՞ կոպէկանոց դրամներ ունէր և փոխելիս քանի՞ կոպէկանոց ստացաւ:

7-10. Մի տան կային երկու տղայ և մի աղջիկ. փոքրիկ տղան մի տարեկան էր, աղջկը երեք անգամ նորանից մեծ էր, իսկ երկրորդ տղան մի տարով աղջկանիցը մեծ էր: Քանի՞ տարեկան էր երկրորդ տղան:

11. Գերդաստանի հայրը և մայրը ունէին մի տղայ և մի աղջիկ: Քանի՞ հողի կար այդ գերդաստանում և նոցանից քանի՞ն էր տղամարդ և քանի՞սը կինարմատ:

12. Մի երեխայ ունէր երկու թերթ թուղթ, իսկ միւսը երկու անգամ նորանից աւելի. երկրորդը առաջինին տուեց մի թերթ: Ամեն-մէկը այժմ քանի՞ թերթ ունի:

13. Մի ընտանիք զըռնում էր այդիումը. առաջևիցը գնում էին երկու քոյրը, նոցանից յետոյ երկու եղբայրը, իսկ ետևիցը հայրը: Քանի՞ հողի էին զըռնում:

14. Աշակերտը խնձորներ բերեց ուսումնարան. նոցանից իւր երկու ընկերին տուեց մի-մի զոյգ և իւր մօտ մնաց մի խնձոր: Նա քանի՞ խնձոր էր բերել:

15. Մի աղջիկ հինգ կոպէկ ունէր, դորանից մի կոպէկ տուեց մի աղքատի, իսկ մնացածը հաւասար բաժանեց երկու ուրիշ աղքատի: Ամեն-մի աղքատին նա քանի՞ կոպէկ տուեց:

16. Հայրը իւր աղջկանը ընծայից հինգ պատկեր. նա երեքը պահեց իւր համար, իսկ մնացածը տուեց իւր քոյրերին մի-մի հատ: Նա քանի՞ քոյր ունէր:

17. Ի՞նչպիսի հաւասար դրամներէ հետ կարելի է փոխել հինգ-կոպէկանոցը, ի՞նչպիսի երկու անհաւասար դրամի հետ, ինչպիսի երեք անհաւասար դրամի հետ և ի՞նչպիսի չորս անհաւասար դրամի հետ:

18. Աշակերտը զնաց վարժապետի մօտ և երկու ժամ պարապեց հայերէն լեզուով, մի ժամ հանգստացաւ, մի ժամ զրեց, դարձեալ մի ժամ հանգստացաւ, յետոյ մի ժամ ևս պարապեց թուաբանութիւնով ու զնաց տուն: Նա որքան ժամանակ մնաց վարժապետի մօտ:

19. Սայլումը լծած էին մի զոյգ զոմէշ և երկու զոյգ եղջ: Բոլորը քանի՞ կենդանի էին լծած:

20. Գիւղացին վեց հատ եզն ունէր. նա քաղաքը փայտ տանելու համար ամեն-մի սայլումը լծեց մի զոյգ: Քանի՞ սայլ փայտ տարաւ:

21. Մի երեխայ հինգ կոպէկ ունէր, իսկ միւսը մի կոպէկ. նոքա իւրեանց բոլոր փողովը միասին առան երկու հաց: Ամեն-մի հացը քանի՞ կոպէկ արժէր:

22. Ի՞մ մէկ զրպանումը կայ երկու խնձոր, իսկ միւսումը երկու անգամ դորանից աւելի: Քանի՞ խնձոր պէտք է երկրորդ զրպանիցս դնեմ առաջինում, որ չկուսուամ էլ հաւասար լինի և ես քանի՞ խնձոր ունեմ:

23. Երկու տանձին երկու անգամ աւելի փող տուին, քան թէ երկու սալորին: Ամեն-մի սալորը որքան արժէր, եթէ որ բոլորին տուին վեց կոպէկ:

24. Մի երեխայ առաւ մի խնձոր, իսկ միւսը երկու խնձոր հաւասար զնով և երկրորդը իւր խնձորներին երկու կոպէկ աւելի տուեց առաջինից: Ո՞րքան արժէր բոլոր երեք խնձորը:

25. Մի շաբաթը քանի՞ օր է: Շաբաթուայ մէջը բացի կիւրակէից հինգշաբթի օրն էլ տօն էր: Այդ շաբաթուայ մէջը քանի՞ հասարակ օր կար:

26. Ուսումնարանումը եօթը դասատուն կար. աշակերտը մտաւ հինգերորդ դասատունը: Նա էլի քանի՞ տարի պէտք է մնայ այդ ուսումնարանում:

27. Երեկային տունն երեք դրամ. երկուսը երեք—  
կուպէկանոց, իսկ մէկը՝ մի-կուպէկանոց: Նա այդ փողերէց եր-  
կու կուպէկ տուեց մատիս առաւ, իսկ մնացած փողովը  
տանն առաւ. ամեն-մէկին վճարելով մի կուպէկ: Նա քանի՞  
տանն առաւ:

28. Քանի՞ դրամից կարելի է եօթը կուպէկ կազմել:

29. Երեկան ամեն—մի ձեռին ունէր չորս բա-  
ժակ. դոցանից երեքը նա վայր գցեց և կտորեց: Քանի՞սը  
մնաց ամբողջ:

30. Մեծ եղբօրը տունն հինգ կուպէկ, իսկ փոքրին՝  
նորանից երկու կուպէկ պակաս: Նորա իւրեանց բոլոր փո-  
ղերովը առան չորս խնձոր: Ո՞րքան արժէք մի խնձորը:

31. Մի հաւ երեք ձու դրեց. իսկ միւսը դորանից  
երկուսը աւելի: Այդ ձուաները բաժանեցին երեխանցը և  
ամեն-մէկին ընկաւ երկու ձու: Քանի՞ երեխայ էին:

32. Հայրը իւր երկու որդուն հինգ խնդիր առա-  
ջարկեց լուծելու և խոստացաւ, որ ամեն-մի ուղղի  
վճռած խնդրի համար երկու տանն տայ: Մի որդին ստա-  
ցաւ ութ տանն, իսկ միւսը՝ երկու անգամ նորանից պա-  
կաս: Ամեն-մի երեխան քանի՞ խնդիր չկարողացաւ լուծել:

33. Քանի՞ օրու՞մը կարելի է սովորել զրբի ութ և-  
բնուր, եթէ որ օրէնը սովորեն երկու կամ չորս երես:

34. Աշակերտի տետրակը բաղկացած էր ութ երե-  
սից. դորանից երկու երես նա փչացրեց և դուրս կո-  
րեց, իսկ մի երեսը գրեց: Քանի՞ մաքուր երես մնաց  
տետրակու՞մը:

35. Երեխան չորս անգամ դնաց պղին և ամեն-մի  
անգամու՞մ բերեց երկու խնձոր: Այդ խնձորներիցը նա իւր  
երկու եղբօրը տուեց երեք-երեք խնձոր, իսկ մնացածը հա-

ւասար բաժանեց իւր երկու քրոջը: Ամեն-մի քոյրը քանի՞  
խնձոր ստացաւ:

36. Մի ընտանիքի մէջ կային ութ հոգի՝ հայրը, մայ-  
րը, աղերք և աղջկերք. աղերքը երկու անգամ աւելի էին  
աղջկաներից: Քանի՞ աղջկի կար այդ ընտանիքի մէջ:

37. Սենեակու՞մը ութ աթոռ կար. դոցա կէսը ու-  
ղարկեցին նորոգելու, բայց երկուսը բոլորովն ջարդուած  
էին: Քանի՞ աթոռ մնաց սենեակու՞մը:

38. Երկու երեխայ ութ խնձոր առան. նոցանից միւսը  
երեք անգամ աւելի փող տուեց քան միւսը: Ամեն-մէկը  
քանի՞ խնձոր պէտք է վերցնէր:

39. Տան երկարութիւնը ութ սաժէն էր, իսկ լայ-  
նութիւնը վեց սաժէն. աշակերտը դորա պատկերը քաշելու՝  
երկարութիւնը թղթի վերայ նշանակեց չորս վերջով: Լայ-  
նութիւնը քանի՞ վերջով պէտք է նշանակի:

40. Աշակերտը տետրակիցը դուրս գրեց ութ երես,  
էլի մնաց դուրս գրելու մի երես: Քանի՞ ժամու՞մը նա բո-  
լորը կ'աւարտէր, եթէ որ մի ժամու՞մը դուրս էր գրու՞մ  
երեք երես:

41. Մրդավաճառը երեք թարախ ունէր, ամեն-մէ-  
կի մէջը կար երեք ձմերուկ. դոցանից նա չորսը վաճառեց:  
Քանի՞ ձմերուկ մնաց:

42. Մի մարդ աղքատներին ինը կուպէկ բաժանեց.  
երեք հոգու ամեն-մէկին հասաւ մի կուպէկ, իսկ մնա-  
ցածներին մի—մի կուպէկ նոցանից աւելի: Բոլորը քանի՞  
աղքատ էին:

43. Մեծ եղբայրը ինը տարեկան է, իսկ փոքրը ե-  
րեք անգամ նորանից ջահիլ է: Մեծ եղբայրը քանի՞ տա-  
րով է մեծ փոքրիցը:

44. Երկու երեխայ միասին ինը դեղձ ունէին. նոցանից մինը կերաւ երկուսը, իսկ միւսը՝ երեքը և նոցա մօտ հաւասար մնաց: Ամեն-մի երեխան քանի՞ դեղձ ունէր:

45. Սենեակումը կային աթոռներ և բազկաթոռներ, բոլորը միասին ինը հատ էին, բայց աթոռները երկու անգամ աւելի էին բազկաթոռներից: Քանի՞ բազկաթոռ կար սենեակումը:

46. Մի ընտանիքի մէջ որքան տղերք կային, այնքան էլ աղջկերք կային: Ամեն-մի տղային տուին երկու խնձոր. իսկ ամեն-մի աղջկանը՝ մի խնձոր, յետոյ տեսան որ բոլոր տղերքը երեք խնձոր աւելի են ստացել աղջկներից: Քանի՞ երեխայ կար այդ ընտանիքի մէջ:

47. Երեխան ունէր մի կոպէկ. նա իւր հօրիցը ստացաւ էլի երեք հատ երեք-կոպէկանոց: Այդ բոլոր փողովը նա թուղթ առաւ և ամեն-մի թերթին տուեց մի կոպէկ: Նա քանի՞ թերթ թուղթ առաւ:

48. Երեք եղբօր տարիները ինն է: Մեծը հինգ տարեկան է, իսկ միջնակը երկու տարով նորանից փոքր է: Քանի՞ տարեկան է փոքր եղբայրը:

49. Հինգ երեխայ ծաղիկներ ցանելու համար պարտիզումը մի մարկ շինեցին, որի երկարութիւնը տասը արշն էր. յետոյ այդ մարկը իւրեանց մէջը հաւասար բաժանեցին: Ամեն-մէկին քանի՞ արշն ընկաւ:

50. Երկու երեխայ միասին տասը տանձ ունէին, երբոր նոքա հաւասար կերան իւրեանց տանձերից, այն ժամանակը մէկի մօտ մնաց մի տանձ, իսկ միւսի մօտ երեք տանձ: Ամեն-մի երեխան քանի՞ տանձ ունէր:

51. Մի տակառ տանում էր տասը վեղբօ ջուր. եթէ բանում էին նորա մի խողովակը, բոլոր ջուրը դուրս

էր թափվում երկու բոպէումը. իսկ եթէ բանում էին միւս խողովակը, բոլոր ջուրը դուրս էր թափվում հինգ բոպէումը: Առաջին խողովակից մի բոպէումը քանի՞ վեղբօ ջուր աւելի էր թափվում երկրորդից:

52. Երեք երեխայ փող վէր եկան և տասը խնձոր առան: Մինը տուեց մի կոպէկ, իսկ մնացած երկուսը տուին երկու-երկու կոպէկ: Ամեն-մի երեխան քանի՞ խնձոր պէտք է վերցնէր:

53. Մի երեխայ երկու կոպէկ ունէր, իսկ միւսը երեք. այդ փողերովը նոքա միասին տասը դեղձ առան: Ամեն մէկը իւր փողին քանի՞ դեղձ պէտք է վերցնէ:

54. Մի աշակերտի տուին երկու տետրակ, իսկ միւսին երեք. յետոյ տեսան որ երկրորդ աշակերտը երկու թերթ աւելի է ստացել առաջինից: Ամեն-մէկի տետրակները քանի՞ թերթ էին:

55. Երկու երեխայ թուաբանական խնդիրներ էին լուծում և ամեն-մի ճիշտ վճռած խնդրի համար իւրեանց հօրիցը ստանում էին երկու կակալ: Երկուսը միասին ստացան տասը կակալ. բայց առաջինը երկու կակալ պակաս ստացաւ երկրորդիցը: Նոցանից ամեն-մինը քանի՞ խնդիր էր լուծել:

56. Մրգավաճառը տասը կոպէկով տալիս է հինգ սերգէլի: Նա քանի՞ խնձոր կ'տայ տասը կոպէկի, եթէ որ խնձորը երկու անգամ արժան է սերգէլից:

57. Մի երեխայ երկու մատիտ առաւ, իսկ միւսը հինգ մատիտ, միայն երկրորդը առաջինից վեց կոպէկ աւելի տուեց: Իւրաքանչիւրը որքան փող տուեց:

58. Մի մարդ աղքատներին բաժանեց տասը կոպէկ:

երեքին տուեց երկու-երկու կուպէի. իսկ մնացածներին՝ մի-մի կուպէի Բողորը քանի՞ աղքատ էին:

59. Աշակերտը դրեցը դուրս էր դուռ՝ տեսարակի վերայ. դրբն երկու երեւոյ մտնում էր տեսարակի չորս երեսուսումը: Նա իւր տեսարակի տասը երեսը լըրեց: Պրքի քանի՞ երեսն էր դուրս դրել:

60. Յրկորդը տասը կուպէի ունէր. դորանից երկու աղքատի տուեց երկու-երկու կուպէի: Ելի քանի՞ աղքատի կարող էր նա տալ մէկ-մէկ, երկու-երկու կամ երեք-երեք կուպէի:

61. Երեխան երկու անգամ կերաւ երեք-երեք կախալ, երկուսն էլ տուեց եղբորը, իւր մօտ էլի մնաց երկու կահար: Նա ընդամենը քանի՞ կահալ ունէր:

62. Աշակերտը երկու մատիտ առաւ. ամեն-մինը երեք կուպէկով, էլի առաւ երեք քարէզրիչ, մինը մի կուպէկով. նա տուեց երկու-շայանոց: Ո՞րքան փող պէտք է յետ ստանար:

63. Թուխը ձուտեր հանեց, նոցանից երկուսը կատուն կերաւ, երեքը ուրուրը տարաւ, այլքան էլ մնաց: Թուխը քանի՞ ձուտ էր հանել:

64. Երեխան տասը կուպէի ունէր. դորանով առաւ մի քանի մատիտ, մինը երկու կուպէկով. էլի մնաց երկու կուպէի, որոնցով առաւ երկու դրիչ: Նա քանի՞ մատիտ առաւ:

65. Հայրը որդուն տուեց տասը կուպէի. նա առաւ երկու խնձոր, մինը մի կուպէկով և էլի երկու մատիտ, մինը երեք կուպէկով. իսկ մնացած փողը հաւասար բաժանեց երկու աղքատի: Ամեն-մի աղքատը ո՞րքան ստացաւ:

66. Ծառան մրդավաճառին երկու-շայի տուեց և առաւ երկու սերգեիլ. ամեն-մի շայուցն էլ երկու կուպէի յետ ստացաւ: Ամեն-մի սերգեիլը ո՞րքան արժէր:

67. Մեծ եղբայրը տասը տարեկան էր, իսկ երկրորդը եւթը տարով նորանից վեցը էր, քոյրն էլ երկու անգամ մեծ էր երկրորդիցը: Քանի՞ տարեկան էր քոյրը:

68. Եթէ մեց կահալը հաւասար բաժանենք երեխանցը, քանի՞ երեխայի կ'հասնի և ամեն-մէկին քանի՞ հատ:

69. Ինը դեղձը պէտք է բաժանել երեք երեխայի ինչպէս կ'ամենան: Ամեն-մէկին քանի՞ք կ'հասնի:

70. Տասը խնձոր հաւասար բաժանեցին մի քանի աղջկայ: Քանի՞ աղջիկ էին և քանի՞ խնձոր ընկաւ ամեն-մէկին:

71. Տասը կուպէիլ պէտքէ բաժանել երեք, չորս կամ հինգ աղքատի, ինչպէս կ'ամենան: Երեք, չորս կամ հինգ աղքատներից ամեն-մինը ո՞րքան կ'ստանայ:

72. Ութ երեխայ պէտք է կարգ-կարգ կանգնեն Բանի կարգ դուրս կ'գայ:

73. Աէս գրվանքայ հացը արժէ մի կուպէի, չորս մարդ միասին առան ութ կուպէիլի հաց և հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Ամեն-մէկին քանի՞ գրվանքայ ընկաւ:

74. Ինչպիսի երեք, չորս կամ հինգ անհաւասար դրամներից կարելի է տասը կուպէի կազմել:

75. Աղջկերբը երեք թոկ կապեցին միմեանցից և ճյուրթի շինեցին. մի թոկը երկու արշին էր, միւսը երկու և կէս արշին, իսկ երրորդը չորս ու կէս արշին: Ճյուրթու երկարութիւնը ո՞րքան դուրս եկաւ:

76. Աշակերտը երկու թերթ թուղթ չորստակեց և տեսարակ կարեց. այդ տեսարակի մեց երեսի վերայ թարգ-

մանութիւն արեց. իսկ մնացած իւրաքանչիւր երկու երեսի վերայ դրեց երկու դաս: Նա քանի՞ դաս դրեց:

77. Մի զիւղիցը մինչև միւս զիւղը երեք վերստ էր. սայլը առաջին զիւղիցը ճանապարհ ընկաւ դէպի միւսը և մէկ ու կէս վերստ դնալիցը յետոյ վերադարձաւ. յետոյ կրկին ճանապարհ ընկաւ և հասնելով միւս զիւղը՝ նոյն օրը վերադարձաւ տուն: Սայլը այդ օրը քանի՞ վերստ մանեկաւ:

78. Երեխայի քայլը կէս արշին էր. նա սենեակի մի պատիցը միւսը հասնելու համար տասը քայլ փոխեց: Պատերի հեռաւորութիւնը որքան էր:

79. Երկու երեխայ իւրեանց մրդերը միմեանց հետ փոխեցին, մինը տուեց երեք նուռը, իսկ միւսը դորա փոխարէն տուեց ինը տանձ: Ո՞րքան արժէք ամեն-մի տանձը, եթէ որ մի նուռը արժէք մէկ ու կէս կոպէկ:

80. Ոստայնագործը մի ժամուժը պատրաստում է երկու արշին կտաւ: Նա քանի՞ արշին կ'պատրաստի չորս ու կէս ժամուժը:

81. Աշակերտը մի բոպէումը կարդում է երեսի երրորդ մասը: Նա քանի՞ բոպէումը կ'կարդայ երկու կամ երեք երես:

82. Երեխան խնձորներ բերեց ուսումնարան. դոցանից ութ ընկերի ամեն-մէկին տուեց մի խնձորի քառորդ մասը. վեց ընկերի ամեն-մէկին տուեց մի խնձորի երրորդ մասը. իւր մօտ էլի մնաց երկու խնձոր: Նա քանի՞ խնձոր էր բերել:


83. Աշակերտը վեց մատիտ ունէր. դոցանից երկու ընկերին տուեց մի-մի մատիտ. հինգ ընկերին էլ տուեց կէս կէս մատիտ: Նորա մօտ քանի՞ մատիտ մնաց:

84. Գիւղացին եկեղեցումը հինգ կոպէկի մօտ առաւ, մինը կէս կոպէկով և ամեն-մի պատկերի առաջը

նա մինը վառեց: Նա քանի՞ պատկերի առաջ մօտ վառեց:

85. Երեխան երեք թօկ ունէր, մէկի երկարութիւնը երկու և կէս արշին էր, միւսինը երեք և մի քառորդ արշին, իսկ երրորդինը երեք և կէս արշին. նա այդ թօկերը կապեց միմեանց ծայրից: Թօկի երկարութիւնը որքան դուրս եկաւ:

86. Հայրը իւր երեխանցը տասը թերթ թուխթ բաժանեց. մեծ տղան ստացաւ բոլոր թղթի հինգերորդ մասը. միջնակը ստացաւ մնացածի չորրորդ մասը. փոքրը ստացաւ դարձեալ մնացածի երրորդ մասը: Մնացածն էլ հաւասար բաժանեցին երկու աղջիկը: Ո՞րքան թուղթ ստացաւ ամեն-մի տղան և աղջիկը:



Բ.

Խ Ն Գ Ի Բ Ն Ե Բ

11—20

87. Վաճառականը մի արկղումը տասը կիտրոն ունէր, իսկ միւսումը դորանից մէկն աւելի: Նա առաջին արկղիցը վաճառեց վեց հատ, իսկ երկրորդիցը չորս հատ: Քանի՞ կիտրոն մնաց երկու արկղումը:

88. Երեխան ունէր 3 հատ երեք-կոպէկանոց և մի հատ երկու-կոպէկանոց: Նա այդ փողերը մանրացրեց և բաժանեց աղքատներին, ամեն-մի աղքատին ընկաւ մի կոպէկ: Նա քանի՞ աղքատի փող տուեց:

89. Տասնումին արշին քաթանից կարեցին 5 երեսիայի շապիկ, ամեն-մի շապիկի համար դնաց մի արշին.

խի մնացած քաթանիցը կարեցին սիւռոցներ ամեն-մինը 2 արշիկից: Քանի՞ սիւռոց դուրս եկաւ:

90. Ալբանիին ուղարկեցին մի գրվանքայ նաւթ առնելու. դորա համար նորան առին 3 հատ երկու-կոպէկանոց և էլն մի ուրիշ դրամ: Այդ վերջն զբաժնի քանի՞ կոպէկանոց էր, եթէ որ նաւթի գրվանքան արժէքը 11 է:

91. Առի մի թաթումը դրին 11 գրվանքայ, իսկ միւսումը 7 գրվանքայ և էլն երկու հաւասար քար և կշիւր ուղեղ կանգնեց: Արևու քարից ամեն-մինը քանի՞ գրվանքանոց էր:

92. Այգեպանը վաճառեց տասը զլում և նորա մօտ մնաց էլն երկու հատ: Նա ընդամենը քանի՞ զլում ունէր:

63. Սննեակի մէջ կար 12 աթոռ. գոցանից երկու պատերի իւրաքանչիւրի մօտ դարսած էր 5 հատ, իսկ մնացածը դարսած էր սեղանի մօտ: Քանի՞ աթոռ կար սեղանի մօտ:

94. Դասատան մէջ 4 նստարան կար. ամեն-մէկի վերայ նստում էին երեք աշակերտ: Քանի՞ աշակերտ կար դասատանը, եթէ որ մինը չէր եկել:

95. Հայրը իւր փոքր որդուն տուեց հինգ խնձոր, իսկ մեծին նորանից երկուսն աւելի և հրամայեց միւս երկու եղբայրների հետ միասին հաւասար բաժանեն: Իւրաքանչիւրին քանի՞ խնձոր կընկներ:

96. Գիւղացու կովերից երկուսը սև էին, երկուսն առաջ գոցանից աւելի մտխրադոյն էին, իսկ երեք անգամ աւելի կարմիր էին: Ընդամենը քանի՞ կով ունէր գիւղացին:

97. Երեխան զնաց ուսումնարան առաւօտեան 3 ժամին և պարապեց այնտեղ 3 ժամ: Էլն քանի՞ ժամ պէտք է մնար մինչև կես օրը:

98. Աշակերտը տարփայ մէջ երկու ամիս հիւանդ

էր, իսկ երեք ամիս արձակուրդին գիւղումն էր: Նա քանի՞ ամիս էր ուսանում:

99. Ի՞նչ մէկ դրամնումը 3 կակալ փայ, միւսումը 5, իսկ երրորդումը 4: Այդ բոլոր կակալները ես վաճառում եմ ածել ի՞նչ երկու գրվանքը հաւասարապէս: Ամեն-մի գրվանքումն քանի՞ կակալ կ'ընի:

100. Մի աղանայան ունէր 3 եղբ, իսկ միւսը երեք անգամ նորանից աւելի: Նորա վաճառում էին ապրանք տանել քաղաք, դորա համար ամեն-մի սոցրումը լծեցին մի զոյգ: Քանի՞ սոցրով տարան ապրանքը:

101. Ուսումնարանի մի դաստանդը կար 10 աշակերտ, իսկ միւսումը նոցանից 3-ը աւելի: Տնօրին առաջին դասատանիցը զնացին տուն 4 աշակերտ, իսկ երկրորդիցը 6 աշակերտ: Քանի՞ աշակերտ մնաց ուսումնարանումը:

102. Երեք երեխայի համար 13 մատիտ առան. դոցանից մէկին տուին 5 հատ, իսկ մնացածը հաւասար բաժանեցին երկուսին: Ամեն-մինը քանի՞ մատիտ ստացաւ:

103. Դասատանը 5 նստարան կար. երկուսն զմեկը նստած էին երկու-երկու աշակերտ. իսկ մնացածներն զմեկը երեք-երեք: Դասատանը ընդամենը քանի՞ աշակերտ կար:

104. Աշակերտը արձակուրդ առաւ և զնաց գիւղը իւր ծնողների մօտ. նա այնտեղ մնաց մի շաբաթ, զնալ զայլու համար էլ գործ դրեց 6 օր: Նա քանի՞ օր էր արձակուրդ ստացել:

105. Երեխան ունէր մի երկու-շայանոց և մի 3-կոպէկանոց. նա իւր հօրիցը խնդրեց էլն մի կոպէկ և այդ փողերովը առաւ երկու անտրակ հաւասար զնանի: Որքան արժէք ամեն-մի անտրակը:

106. Չորս ձի տարան պայտելու (նախելու), նոցանից

երկու ձիու երեք-երեք ոտը պայտեցին, իսկ մնացածները չորս-չորս ոտը: Ընդամենը քանի՞ պայտ գնաց:

107. Երկու շաբաթուայ մէջ բացի կիւրակի օրերը, երեք օր տօն էր, մնացած օրերումը աշակերտը թարգմանութիւն արաւ, իւրաքանչիւր 3 օրում 4 երես: Նա քանի՞ երես կարողացաւ թարգմանել այդ երկու շաբաթումը:

108. Երկու պատուհանում 14 ապակի կար, բայց նոցանից մէկում երկու ապակի աւելի էր միւսից: ամեն-մի պատուհանում քանի՞ ապակի կար:

109. Դասատան մէջ 14 աշակերտ կար, մի աշակերտ էլ նոր մտաւ. այդ բոլորովին տեղաւորեցին 5 նստարանի վերայ: Իւրաքանչիւր նստարանի վերայ քանի՞ աշակերտ նստեց:

110. Երկու սայլապան ապրանք էին տանում քաղաք. նոցանից մինը ունէր 3 սայլ, ամեն-մէկումը լծած էր 3 ձի. միւսը ունէր նոյնպէս 3 սայլ, բայց ամեն-մէկումը լծած էր երկու ձի: Ընդամենը քանի՞ ձի էր լծած:

111. Մի կին 13 մսխալ թել առաւ. ամեն-մի լոտը 3 կոպէկով և տուեց երեք-շալանոց: Նա քանի՞ կոպէկ պէտք է յետ ստանար:

112. Խոհանոցի տակաւոր տանում էր 15 վեդրօ ջուր. նորա մէջը արդէն կար 3 վեդրօ: Ջրբերը քանի՞ անգամ պէտք է 2 վեդրօ ջուր ածէր, որ տակաւոր լրվէր:

113. Աշակերտը 15 երեսից արտադրել էր 7 երես և մնացածը կամենում էր արտադրել 2 ժամումը: Իւրաքանչիւր ժամումը որքան պէտք է արտադրէր:

114. Երեք-շալանոցը որպիսի 3 հաւասար դրամի հետ կարելի է փոխել. որպիսի՞ 5 անհաւասար դրամի հետ, որպիսի՞ 3 անհաւասար դրամի հետ, որպիսի՞ 4 անհաւասար դրամի հետ, որպիսի՞ 5 հաւասար դրամի հետ:

115. Երեխային 15 կոպէկ տուին, որ խնձոր առնի, բայց առնելիս մի կոպէկ պակասեց, այդ պատճառով միայն 7 խնձոր առաւ: Նա քանի՞ կոպէկ յետ բերեց:

116. Ես ունիմ 2 հատ երեք-կոպէկանոց և 2 հատ 5-կոպէկանոց: Այդ բոլորը քանի՞ կոպէկ է անում:

117. Երեխան 16 սալոր ունէր. դոցանից նա 5-ը կերաւ, 2-ը անպիտան էին, դէն գցեց, իսկ մնացածը հաւասար բաժանեց 3 ընկերին: Իւրաքանչիւր ընկերը քանի՞ սալոր ստացաւ:

118. Մրդավաճառը 16 դեղձ գնեց, զոյգը մի կոպէկով, իսկ ինքը վաճառեց ամեն-մի 4 հատը 3 կոպէկով: Նա ընդամենը որքան աշխատեց:

119. Աշակերտը 16 քարեգրիչ առաւ. իւրաքանչիւր 4 հատը 3 կոպէկով, ինքը վաճառողը 8 հատին տուել էր 5 կոպէկ: Նա որքան աշխատեց դորանում:

120. Պղնձէ լարի արշինը արժէր 16 կոպէկ. մի վանդակ կարկատելու համար արհեստաւորը դործ դրեց այդ լարից 9 վերշոկ, շինելու վարձ էլ ստացաւ 6 կոպէկ: Վանդակի կարկատանը որքան նստեց:

121. Մի երեխայ 12 գրիչ առաւ, իսկ միւսը 16 և երկրորդը իւր գրիչներին երկու կոպէկ աւելի տուեց առջևից: Նոցանից իւրաքանչիւրը որքան տուեց իւր գրիչներին:

122. Ես ունիմ 3 հատ 5-կոպէկանոց և 2 հատ մի-կոպէկանոց. այդ բոլոր փողովը գնեցի 3 խնձոր, ամեն-մինը 3 կոպէկով և տանձեր, ամեն-մինը 2 կոպէկով: Ես քանի՞ տանձ գնեցի:

123. Աշակերտը 17 թերթ թղթից տետրակներ կարեց, որոնց մի հատը 5 թերթից էր. իսկ մնացածները ամեն-մինը 3 թերթից: Ընդամենը քանի՞ տետրակ դուրս եկաւ:

124. Դասատան 5 նստարանի վերայ կար 17 աշակերտ անհաւասարապէս նստած: Ամեն-մի նստարանի վերայ քանի՞ հոգի կար:

125. Աշակերտը 17 հոգեկ ունէր. նա կամենում էր առնել 3 քարէզրիչ. մինը 3 կողէկով և 3 մանտին մինը 4 հոպէկով: Ո՞րքան փող չկապկասեր դորա համար:

126. Սրբօրնին տուէին մի հատ կրկու-շայանոց, մի հատ 5-կողէկանոց և մի հատ 3-կողէկանոց, որ 6 տանձ առնի. նա ամեն-մի տանձին տուեց 3 կոպէկ: Ո՞րքան փող յետ բերեց:

127. Երկրան 18 ծիրան ունէր, զոցանից մի քանի հատ կերաւ. Իսկ Խնացածը հաւատար քաժանեց իւր 4 ընկերին և ամեն-մէկին ընկաւ 3 ծիրան: Ինքը քանի՞ հատ կերաւ:

128. Գիւղացի կինը գործեց 9 զոյգ գուլայ. օրէնը մի հատ: Նա քանի՞ շօքաթում և օրում զործեց բոլոր գուլաները:

129. Եղբայրը 18 կոպէկով առաւ 3 նուռը, իսկ քոյրը 12 կոպէկով առաւ 6 խնձոր. յետոյ քոյրը խնդրեց եղբորից, որ մի նուռը փոխի խնձորների հետ: Նա քանի՞ խնձոր պէտք է տար եղբորը մի նուռն փոխարէն:

130. Գիւղացին գնեց 3 սաժէն թոկ, արշինը 2 կոպէկով: Նա որքան տուեց թոկին:

131. Իմ ծանօթի դահլիճումը դարսած էր 12 աթոռ, գրասենեակումը 3 անգամ դորանից պակաս, իսկ ննջարանումը 6 անգամ դորանից պակաս: Նորա տանը քանի՞ աթոռ կար:

132. Մի երեխայ առաւ 2 խնձոր և 3 տանձ և այդ բոլորին տուեց 16 կոպէկ, իսկ միւսը միւլնոյն խնձորիցը առաւ 3 հատ և տանձիցը նոյնպէս 3 հատ և տուեց 18 կոպէկ: Ամեն-մի խնձորը և տանձը որքան արժէր:



133. Երկու սենակում դարսած էր 18 աթոռ, այն դահլիճումը երկու անգամ աւելի էր, քան գրասենեակումը: Ամեն-մի սենեակումը քանի՞ աթոռ կար:

134. Տանտիկինը դիւժին ու կես ավսէ ունէր. դոցանից 7-ը կոտրվեց: Նա քանի՞ ավսէ պէտք է առնէր, որ մի դիւժինը լրանար:

135. Մի կին 19 կոպէկ ունէր. եկեղեցուցը դուրս գալիս նա ամեն-մի աղքատի տուեց 2 կոպէկ. իսկ վերջինին տուեց մնացած մի կոպէկը: Նա քանի՞ աղքատի փող բաժանեց:

136. Աղեպանը թոյլ տուեց մի քանի երեխայի չորս-չորս վարունկ քաղել: Նորա քաղեցին 19 վարունկ և տեսան որ 3 հատ աւելի են քաղել: Քանի՞ երեխայ էին:

137. Մեծ եղբոր բարձրութիւնը 1 արշին և 3 վերջոկ էր, իսկ փոքրը նորանից 5 վերջոկ ցածր էր: Ո՞րքան էր փոքր եղբոր բարձրութիւնը:

138. Իմ զրպանումը մի քանի կոպէկ կայ. եթէ այնտեղ գնեմ էլի այնքան կոպէկ, ինչքան որ կայ և դարձեալ 5 կոպէկ, այն ժամանակը կ'դառնայ 19 կոպէկ: Քանի՞ կոպէկ կայ զրպանումս:

139. Մրդախաճատի մի թաքախաւմը 10 խնձոր կար, իսկ միւսումը 9-ը. նա երկրորդ թաքախաւմը էլի գրեց մի խնձոր և բոլորը վաճառեց, ասար 5 կոպէկով: Նա որքան փող ստացաւ:

140. Երեխան 2 հատ երկու-շայանոց ունէր. զոցանոյ նով նա առաւ 4 քարէզրիչ, մինը 2 կոպէկով և 4 մանտի, մինը 3 կոպէկով: Նորա մօա որքան փող մնաց:

141. Տանտիկինը 3 հաւ ունէր, նոցանից մինը հանեց 10 ձուտ, երկրորդը դորանից չորսը պակաս, իսկ երրորդը երկրորդից 2-ը պակաս: Ընդամենը քանի՞ ձուտ ունէր տանտիկինը:

142. Մեծ եղբայրը 20 տարեկան էր, ամենից փոքր քոյրը նորանից 5 անգամ փոքր էր, իսկ միջնակ քոյրը 3 անգամ մեծ էր փոքրիցը: Միջնակ քոյրը եղբորիցը քանի՞ տարով էր փոքր:

143. Մի մարդ 4 մանեթ փող ուղարկեց փոստայով. դորա համար նա պէտք է քաշի փող տար 10 կոպէկ, տոմսակի փող 5 կոպէկ և խրաքանչիւր մանեթի ապահովութեան փող 1 կոպէկ: Նա տուեց մի ապաստանոց: Ո՞րքան պէտք է յետ ստանար:

144. Երեկան խրաքանչիւր շաբաթ իւր մօրիցը ստանում էր 20 կոպէկ և ուսումնարան զնալիս օրէնը ստանում էր 3 կոպէկի հաց: Նա ո՞րքան փող յետ կ'ըցէր 5 շաբաթումը, եթէ որ կիւրակի օրերը հաց չ'էր առնում:

145. Մի մարդ 4 որդի ունէր. նա մեծ որդուն տուեց 20 կոպէկ և հրամայեց առնել այնքան խնձոր, որ խրաքանչիւր փոքր եղբայրը մի խնձոր պահաս ստանայ իւր մեծիցը և որ ամենիցը փոքրին ընկնի 1 խնձոր: Քանի՞ խնձոր պէտք էր առնել և ամեն-մինը ո՞րքան կ'արժենար:

146. Չիուն օրէնը տալիս են 2 դարնց դարի: Քանի՞ շաբաթ և օր կ'բաւականանայ նորան 2 չեափերիկ և 4 դարնց դարին:

147. Մեծ եղբոր բարձրութիւնը 1 արշին և 4 վերջոկ է, իսկ փոքրը 6 վերջոկ ցածր է նորանից: Ո՞րքան է փոքրի բարձրութիւնը:

148. Բազի երկարութիւնը 6 սաժէն և 2 արշին էր. նորա երկարութեամբ դարսեցին 4 տախտակ, որոնցից երկուսի երկարութիւնը չորս-չորս արշին էր. միւս երկուսն էլ միմեանց հաւասար էին: Ո՞րքան էր վերջին խրաքանչիւր տախտակի երկարութիւնը:

149. Երեկերը ճլորթու համար միմեանց ծայրից կապեցին երեք թռիկ, որոնց մէկի երկարութիւնը 4 արշին էր, միւսինը 7 արշին, երրորդինը 3 սաժէն: Ո՞րքան դուրս կ'լաւ ճլորթու երկարութիւնը:

150. Մրգավաճառը ծիրան առաւ, խրաքանչիւր 5 հատը 3 կոպէկով. իսկ ինքը վաճառում էր 4 հատը 4 կոպէկով: Նա վաճառեց 20 հատ: Ո՞րքան աշխատեց դորա մէջ:

151. Հայրը իւր որդուն 12 կակալ տուեց և խօստացաւ նորան տալ էլի այնքան անգամ 3 կակալ, որքան անգամ նա կարողանայ 12 կակալը հաւասար բաժիններ անել: Որդին էլի քանի՞ կակալ կարող է ստանալ հօրիցը:

152. Քանի՞ հաւասար կտոր կարելի է անել 18 արշին մահուտը և քանի՞ արշին կ'լինի ամեն-մի կտորը:

153. Քանի՞ տանձ կարելի է առնել 16 կոպէկով, եթէ որ տանձերի դինը հաւասար լինի:

154. Հինգ աղքատի պէտք է բաժանել 19 կոպէկ ում ինչքան կամենան: Ամեն-մինը քանի՞ կոպէկ կարող է ստանալ:

155. Նստարանների վերայ պէտք է տեղաւորել 20 երեխայ հաւասարապէս: Քանի՞ նստարան պէտք է լինի և խրաքանչիւրի վերայ քանի՞ երեխայ:

156. Մի ապաստանոցը ո՞րպիսի հաւասար դրամների է հաւասար, ո՞րպիսի երկու անհաւասար դրամի, ո՞րպիսի երեք անհաւասար դրամի, ո՞րպիսի 4 անհաւասար դրամի, ո՞րպիսի 5 անհաւասարի և ո՞րպիսի 6 անհաւասարի:

157. Երկու երեխայ ձեռնափայտ առան, մէկինը եւրք քառորդ արշին էր, իսկ միւսինը 14 վերջոկ: Որի՞ փայտն էր երկայն և ո՞րքան:

158. Բազի երկարութիւնը քուչայի կողմից 16 արշին է: Այդ տարածութեան կէսը բռնում է տունը, ութ-

երորդ մասը նորա կողքի դուռը, չորրորդ մասը բազի դուռը, իսկ մնացածը չափարը: Ո՞րքան է չափարի երկարութիւնը:

159. Զրբերի տակառոււմը կար 20 վեղրօ ջուր, որի հինգերորդ մասը նա տուեց առաջին տանը, չորրորդ մասը երկրորդ տանը, երրորդ տանը տուեց 6 վեղրօ, իսկ մնացածը տուեց չորրորդ տանը: Նա ո՞րքան ջուր տուեց վերջին տանը:

160. Ուսումնարանոււմը իւրաքանչիւր երեխային ձաշի ժամանակը տալիս են մի-երրորդական զրվանքայ հաց: Քանի՞ երեխայ կային սեղան նստած, եթէ որ ընդամենը դարսած էր 6 զրվանքայ հաց:

161. Վարժապետը աշակերտներին 18 թերթ թուղթ բաժանեց հետեւեալ կերպով. մէկին տուեց բոլորի վեցերորդ մասը, միւսին մնացածի հինգերորդ մասը. երրորդին մնացածի չորրորդ մասը. իսկ մնացած թուղթը բաժանեց 3 աշակերտի հաւասարապէս: Ամեն—մի աշակերտը քանի՞ թերթ ստացաւ:

162. Մի սեղանի երկարութիւնը 17 վերշոկ է, իսկ միւսինը կէս արշին: Առաջինը ո՞րքան է աւելի երկրորդից:

163. Հայրը 20 կակալ ունէր. դոցանից մի որդուն տուեց բոլոր կակալն տասերորդ մասը. միւսին տուեց մնացածի երրորդ մասը. իսկ ինչ որ մնաց այն էլ հաւասար բաժանեց երեք աղջկանը: Ամեն-մէկին քանի՞ կակալ ընկաւ:

164. Վարժապետը աշակերտին մի քանի թերթ թուղթ տուեց և հրամայեց նորա կէսը տալ իւր ընկերին, իսկ մնացածից շինել երկու տետրակ, ամեն-մինը 4 թերթից: Աշակերտը քանի՞ թերթ թուղթ ստացաւ:

Գ.

Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր

21—30

165. Խոհարարը ունէր երկու անդամ 10 ձու և էլի մի ձու: դոցանից առաջին օրը նա դործ դրեց 8 հատ, իսկ երկրորդ օրը 9 հատ: Քանի՞ ձու մնաց:

166. Ճանապարհորդը 3 շաբաթ ման եկաւ. 8 օր նա մանեկաւ շողենուով, 7 օր երկաթուղով, իսկ մնացածը ձիով: Նա քանի՞ օր մանեկաւ ձիով:

167. Թոկի երկարութիւնը 7 սաժէն էր. նորանից 5 արշին կտրեցին ձին կտակու. համար, 8 արշին ձորթու համար, իսկ մնացածը բազումը կտակցին լուածը փռելու համար: Լուացքի թոկի երկարութիւնը ո՞րքան էր:

168. Այդիոււմը 21 ծառ կար. նոցանից ուրբան կենասի էին, այնքան էլ տանձի էին. մի քանիսն էլ խնձորի և 4 հատ ծիրանի: Քանի՞ ծառ կար իւրաքանչիւր տեսակից:

169. Դասատանը 21 աշակերտ կար, մինն էլ նոր մտաւ. նորա հաւասարապէս տեղաւորվեցան 11 նստարանի վերայ: Ամեն-մի նստարանի վերայ քանի՞ աշակերտ նստեց:

170. Մրգովաճառը մի թաբախում ունէր 12 խնձոր, իսկ միւսում 10-ը: Նա բոլոր խնձորները վաճառեց ամեն-մի դոյրը 1 կոպէկով: Նա բոլոր խնձորները որքանով վաճառեց:

171. Մի մարդ ունէր 2 չեովերիկ և 6 գարնց դարի. որից նա իւր ձիուն օրէնը տալիս էր 3 գարնց: Նորա մօտ ուրբան գարի կ'մնար 6 օրից յետոյ:

172. Քանի՞ կոպէկ որ ունեւ, եթէ այնքան էլ ա-

ւելացնեմ և բացի դորանից էլե ստանամ 8 կուպէկ. այն ժամանակը ես կ'ունենամ 22 կուպէկ: Ես որքան փող ունեմ:

**173.** Մտան առաջի երկու ամսումը ստացաւ Հինգ-հինգ մանէթ. իսկ վերջի երկու ամսումը վեց-վեց մանէթ, մի մանէթ էլ ընծայ ստացաւ: Նա որքան փող վերցրեց այդ չորս ամսումը:

**174.** Չրհորհի խորութիւնը 7 սաժէն և 2 արշին էր, նորանից ջուր հանելու համար երեք թոկ կապեցին միմեանց ծայրից. մի թոկի երկարութիւնը 8 արշին էր, միւսինը 7 արշին, իսկ երրորդինը 6 արշին: Ելե որքան թոկ էր պահասում:

**175.** Գիւղեցը մինչև քաղաքը 23 վերստ էր: Գիւղացին 2 ժամումը ոտով գնաց 8 վերստ, իսկ մնացած ճանապարհը գնաց սայրով, ամեն-մի ժամումը 5 վերստ: Նա քանի՞ ժամ էր ճանապարհ գնում:

**176.** Այգիումը 23 մարկ կար. մի քանիսումը ցանած էր վարունկ. միւսներումը կանաչի, իսկ մնացածներումը գետնախնձոր: Ամեն-մի տեսակ բուսեղէնը քանի՞ մարկ էր բռնում:

**177.** Հայրը որդուն տուեց 8 հատ 3-կուպէկանոց և հրամայեց առնել մի քանի մատիտ, ամեն-մինը 4 կուպէկով: Քանի՞ մատիտ առաւ որդին, եթէ որ 4 կուպէկ էլ յետ բերեց:

**178.** Երեխան 24 կակալ ունէր, զոցանից նա երեք ընկերին տուեց երեք-երեք հատ, իսկ մնացածը հաւասար բաժանեց միւս 3 ընկերին: Վերջիններից ամեն-մինը որքան ստացաւ:

**179.** Հայրը իւր 4 որդուն տուեց 24 տանձ և հրամայեց այնպէս բաժանել, որ իւրաքանչիւր մէծը իւր փոքրեցը 2 տանձ աւելի վերցնի: Ամեն-մէկին քանի՞ տանձ կընկնէր:

**180.** Երեք աշակերտ միասին առան 24 գրիչ. նոցանից մինը դորա համար տուեց 3 կուպէկ, միւսը 4 կուպէկ, իսկ երրորդը 5 կուպէկ: Ամեն-մինը քանի՞ գրիչ պէտք է վերցնի:

**181.** Մի մարդ ունէր 3 չեովերիկ զարի, որ նորա ձիաները կերան 4 օրումը. իւրաքանչիւր 3 ձին օրէնը ուտում էր 2 զարնց: Ընդամենը քանի՞ ձի ունէր նա:

**182.** Ոսկերիչը 8 լոտ ոսկուց շինեց մի քանի մատանի. ամեն-մէկի վերայ գնաց 6 մոխալ ոսկի և նա իւրաքանչիւր մատանին վաճառեց 5 մանէթով: Նա ընդամենը որքան փող ստացաւ:

**183.** Մշակը իւրաքանչիւր երեք օրում աշխատում է 2 մանէթ, իսկ 6 օրում միտում է 3 մանէթ: Նա որքան փող յետ կ'դցի 24 օրում:

**184.** Գասառանը 5 նստարան կայ. երեք նստարաններից ամեն-մէկի վերայ կայ 7 աշակերտ. մէկի վերայ էլ կայ 3 աշակերտ, իսկ վերջինի վերայ 1 աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ այդ գասառանը:

**185.** Մի աշակերտ ունէր 5 հատ 5-կուպէկանոց, իսկ միւսը 8 հատ 3-կուպէկանոց: Նոցանից ո՞վ աւելի ունէր և որքան:

**186.** Մի տեղ կային 25 հոգի աղամարդիք, կանայք և երեխայք: Տղամարդիքը 2 անգամ աւելի էին կանանցից, իսկ երեխայքը 10 հոգի էին: Քանի՞ աղամարդ և քանի՞ կին կար այնտեղ:

**187.** Չորս երեխայի համար շոր կարեցին: Իւրաքանչիւրի վարտիկի համար գնաց 1 արշին մահուտ, սերտուկի և ժլլետի համար 2 արշին, վերարկուի համար 3 արշին. 1 արշին էլ գնաց բոլորի զղակներին համար: Ընդամենը քանի՞ արշին մահուտ գնաց:

**188.** Հայրը իւր երեք որդկերանցը տուեց 25 կուպէկ

և հրամայեց բաժանել իւրեանց մէջ այնպէս, որ փոքրը 5 կոպէկ պահաս ստանայ միջնակից, իսկ միջնակը և մեծը հաւասար ստանան: Ամեն-մինը քանի՞ կոպէկ ստացաւ:

**189.** Երկու զրազիր 25 կոպէկով մի թուղթ արտագրեցին: Նոցանից մինը արտագրեց 2 ժամ, իսկ միւսը 3 ժամ: Իւրաքանչիւրը սրբան փող պէտք է վերցնի:

**190.** Հիւսնին պատուիրեցին, որ 26 մանէթի բաղկաթոռներ շինի: Վոցա համար նա զործ գրեց 14 մանէթի փայտ, 4 մանէթի ներկ և ամեն-մի բաղկաթոռ շինելու վարձ վերցրեց 2 մանէթ: Ընդամենը քանի՞ բաղկաթոռ շինեց:

**191.** Երկու երեխայ միասին առան 26 հատ ծիրան. մինը առեց 5 կոպէկ, իսկ միւսը 8 կոպէկ: Ամեն-մէկը քանի՞ հատ պէտք է վերցնի իւր առած փողը համար:

**192.** Մի մարդ ունէր երկու տեսակ ալիւր. առաջին տեսակից 9 զրվանքայ, զրվանքան 2-կոպէկանոց. երկրորդ տեսակից 4 զրվանքայ, զրվանքան 1-կոպէկանոց. նա այդ ալիւրները խառնեց միմեանց հետ: Խառնած ալիւրի ամեն մի զրվանքան սրբանով պէտք է վաճառի, որ բոլորի մէջը աշխատի 4 կոպէկ:

**193.** Պատաստանը 26 աշակերտ կար, որոնք տեղաւորված էին 6 նստարանի վերայ այնպէս, որ առաջինի և երկրորդի վերայ իրար հաւասար, իսկ մնացած չորսի վերայ նոյնպէս իրար հաւասար, իւրաքանչիւր նստարանի վերայ քանի՞ աշակերտ կար:

**194.** Մի զիւղացի առեց միւսին 9 տոպրակ ալիւր. ամեն-մի տոպրակի ալիւրը արժէր 3 մանէթ, իսկ միւսը դորա փոխարէն առեց 13 տոպրակ դարի, որի ամեն-մի տոպրակը արժէր 2 մանէթ: Երկրորդ զիւղացին էլ սրբան պէտք է վճարի առաջինին:

**195.** Առաջի դաստանը 5 նստարան կար, իւրաքանչիւրի վերայ 5 աշակերտ, իսկ երկրորդումը 11 նստարան, իւրաքանչիւրի վերայ 2 աշակերտ: Քննութիւնից յետոյ առաջին դաստանը մնացին 4 աշակերտ, իսկ երկրորդումը 6 աշակերտ: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ այժմ երկրորդ դաստանը:

**196.** Մի մարդ ունէր 27 ձի. օրէնը սրբան գարի էր գնում նոցա համար, եթէ որ նա իւրաքանչիւր 9 ձիուն օրէնը տալիս էր 8 դարնց:

**197.** Մի մարդ առաւօտը 8 ժամին փոտայով ճանապարհ ընկաւ մի իջևանից և առաջին ժամում գնաց 9 վերստ, իսկ մնացած ճանապարհը վերջացրեց, իւրաքանչիւր ժամում գնալով 6 վերստ: Նա քանի՞ ժամումը հասաւ միւս իջևանը. եթէ որ երկու իջևանների հեռաւորութիւնը 27 վերստ էր:

**198.** Չափկին 7 աղջիկ ձու էին խաղում. նոցանից ամեն-մինը ունէր 4 ձու: Խաղալիս 3 ձու կորսվեց և երկու աղջիկ իւրեանց ձուանները տանուլ առին, տանողների ձուաներն էլ հաւասար դարձան: Տանողներից իւրաքանչիւրը քանի՞ ձու ունեցաւ:

**199.** Քսանկուսի չեփերիկ ալիւրը ածած էր հաւասար տոպրակների մէջ. ամեն-մէկում 4 չեփերիկ և իւրաքանչիւր տոպրակի ալիւրը արժէր 3 մանէթ: Ո՞րքան արժէր բոլոր ալիւրը:

**200.** Տանտիկինը երկու դիւժին և 4 հատ զգալ ունէր: Նա հիւրերի համար սեղաններ պատրաստեց և ամեն մէկի վերայ դրեց 7 զգալ: Նա քանի՞ սեղան էր պատրաստել:

**201.** Պետերբուրգից մինչև Պետերհոֆ 28 վերստ է: Ուսումնարանի աշակերտները ճանապարհ ընկան դէպի Պե-

տերհոֆ կէսօրից յետոյ 4 ժամին. նորա զնում էին մի ժամուամբ 4 վերստ. 6 ժամից մինչև 8 ժամը հանդատացան, յետոյ զնալով մինչև 10 ժամը, ճանապարհին քրնեցին և կրկին ճանապարհ ընկան առաւօտեան 8 ժամին: Նորա օր ժամին հառան Պետերհոֆ և ընդամենը քանի՞ ժամ էին ճանապարհին:

202. Մի տեղ թնդանօթներ կային, դոցա բերելու համար լծեցին 14 զոյգ ձի, ամեն-մի թնդանօթի համար 4 ձի: Քանի՞ թնդանօթ էր:

203 Մի աղջկ 7 թերթ թուղթ չորստակեց և տետրակներ կարեց. տետրակի 2 թուղթը կազմ դառաւ: Այդ տետրակի մէջ նա դուրս գրեց 4 տպած երես հայերէնից. ամեն-մի տպած երեսի համար զնաց 3 թուղթ. յետոյ գրեց 6 խնդիր. ամեն-մինը մի թղթի վերայ. իսկ մնացած թղթի վերայ նա գրեց 4 հայերէն դաս: Ամեն մի դասը գրելու համար քանի՞ երես թուղթ էր զնում:

204. Փետրվար ամսին 9 օր ցուրտ էր, 8 օր տաք ու պարզ, իսկ մնացած օրերը անձրև էր գալի: Քանի՞ օր էր անձրև գալի:

205. Երեք հիւան իւրեանց աշխատանքի համար մի ասին ստացան 29 մանէթ. որից մի մանէթ մնիսեցին, իսկ մնացածը իւրեանց մէջը բաժանեցին: Ամեն-մինը օրքան ստացաւ, եթէ որ մինը բանել էր 3 օր, միւսը 5 օր, իսկ երրորդը 6 օր:

206. Պատիցը պատկերներ էին քաշարած՝ 3 կարգ չորս-չորս հատ, 3 կարգ երեք-երեք հատ, 3 կարգ երկու-երկու հատ. բացի դոցանից վերերը և ներքերը մի-մի հատ: Ընդամենը քանի՞ պատկեր էր քաշարած:

207. Տանը 29 աթոռ կար. դոցանից ննջարանումը

5 հատ, իսկ մնացածը դարսած էր գահչիճումը և գրասենեակումը և գահչիճի աթոռները երկու անգամ աւելի էին գրասենեակի աթոռներից: Ամեն-մի սենեակումը քանի՞ աթոռ կար:

208. Մի մարդ գիմնազնօնումը մնացել էր 7 տարի, Համալսարանումը, զննուորական և քաղաքական ծառայութեանց մէջ չորս-չորս տարի. յետոյ ծառայութիւնից դուրս էր եկել: Նա քանի՞ տարեկան էր ծառայութիւնը թողել, եթէ որ գիմնազնօն մտնելիս 11 տարեկան էր եղել:

209. Աշակերտը 8 մատիտ զնեց և վճարեց երկու-չայանոցներ. նա ամեն-մի երկու-չայանոցից յետ էր ստանում 2 կոպէկ: Ամեն-մի մատիտին նա օրքան փող տուեց, եթէ որ ընդամենը յետ ստացաւ 6 կոպէկ:

210. Գիւղացին մշակ վարձեց ամսէնը 2 մանէթով. այդ մշակը մասը-մասը ստացել էր 8 մանէթ: Մի տարի և 3 ամսից յետոյ նա դուրս զնաց և իւր վարձումը ստացաւ 13 մանէթ փող և մնացածին շոր: Նորա ստացած շորը օրքան արժէր:

211. Ծառի վերայ նստած էին 20 աղաւ. յետոյ էլի եկան նորանց մօտ երկու անգամ 5 աղաւ: Նրկու որսորդ միասին հրացաններն արձակեցին, 3 հատ սպանեցին և 4 անգամ դոցա չափ վերաւորեցին: Քանի՞ աղաւ թռաւ:

212. Հայրը իւր երեք որդուն 30 կոպէկ տուեց և հրամայեց այնպէս բաժանել, որ ամեն-մի վաքրը իւր մեծիցը 5 կոպէկ պակաս վերցնի: Խրաքանչեւրը քանի՞ կոպէկ ստացաւ:

213. Գիւղացի կինը երեք քթոց ձու տարաւ քաղաք վաճառելու. երկուսի մէջը կար մի-մի դիւժին, իսկ երրորդումը կէս դիւժին: Նա վաճառեց իւրաքանչեւր 10 հատը երկու-չայով: Բոլոր ձուաները օրքանով վաճառեց:

214. Մի մարդ առաւ 4 լոտ եւ 2 մեխալ թել, ամեն-մի լոտը 6 կոպէկով. նա տուեց 2 հատ երեք-շայտնոց: Ո՞րքան փող պէտք է յետ ստանար:

215. Մշակը մի ամսուայ մէջ որքան պարապ մնաց, 5 անգամ նորա չափ բանեց: Ընդամենը քանի՞ օր բանեց:

216. Երկու երեխայ պատշգամբը չափում էին փայտերով, մէկի փայտը 4 արշին էր, միւսինը 5 արշին էր: Առաջինը պատշգամբի մի ծայրից իւր փայտը դրեց 3 անգամ, իսկ երկրորդը միւս ծայրիցը իւր փայտը դրեց 2 անգամ եւ այդ փայտերի մէջ էլի մնաց 2 սաժէն եւ 2 արշին տարածութիւն: Պատշգամբի երկարութիւնը քանի՞ սաժէն էր:

217. Մի երեխայ ասում էր «Եթէ ինձ տան 10 կահալ, այն ժամանակը ես այնքան կ'ունենեամ, ինչքան որ իմ եղբայրը, իսկ եթէ տան 25 կահալ, այն ժամանակը ես երկու անգամ աւելի կ'ունենեամ եղբորիցս»: Նոյանից ամեն մինը քանի՞ կահալ ունէր:

218. Մանրում-ծախողը գնեց 6 մատիտ, ամեն-մինը 5 կոպէկով եւ էլի մի քանի հատ ուրիշ մատիտ, ամեն-մինը 4 կոպէկով, իսկ ինքը վաճառեց մինը 6 կոպէկով եւ բոլորի մէջ աշխատեց 30 կոպէկ: Բոլորը քանի՞ մատիտ էր:

219. Հինգ-շայտնոցը կամենում եմ մանրացնել: Քանի՞ հատ եւ ի՞նչպիսի մանր գրամներ կ'տան:

220. Հայրը իւր որդուն տուեց 24 կահալ եւ խոտացաւ տալ նորան այնքան անգամ 3 կոպէկ. որքան տեսակ նա կարողանայ կահալները հաւասար բաժանել: Ո՞րպիսի բաժիններ արաւ որդին, եթէ որ նա ստացաւ հօրիցը 24 կոպէկ:

221. Այդ լուսնը նստած էին 30 երեխայ նստարանների վերայ հաւասարապէս: Քանի՞ նստարան կար այդ լուսնը եւ ամեն-մէկի վերայ քանի՞ երեխայ էր նստած:

222. Պէտք է 28 ծառ տնկել հաւասար խմբերով: Քանի՞ խումբ դուրս կ'գայ եւ իւրաքանչիւրի մէջ քանի՞ ծառ կ'ընին:

223. 29 արշին թռկը 4 կտոր արին: Իւրաքանչիւր կտորը քանի՞ արշին դուրս եկաւ:

224. Խոհարարը 30 կոպէկ ունէր ձեռքին: Այդ փողը կէսը նա տուեց վարունկի, որի 10 հատը արժէր 5 կոպէկ. մնացած փողը երրորդ մասը տուեց զեանախնձորի, իսկ զորանից յետոյ մնացած փողով գնեց ձուաներ. ամեն-մինը 2 կոպէկով: Նա քանի՞ վարունկ առաւ եւ քանի՞ ձու:

225. Չինորաները 30 ձուկը բռնեցին, որոնց հինգերորդ մասը կարմրախայտ էր, մնացածի չորրորդ մասը կապոյտ էր. իսկ միւս մնացածի կէսը մուրձայ էր եւ կէսը փիչխուլ: Իւրաքանչիւր տեսակից քանի՞ ձուկն էին բռնել:

226. Վեց երեխայ միասին 30 տանձ առան եւ բաժանեցին այնպէս, որ մինը վերջրեց բոլոր տանձի երրորդ մասը, միւսը հինգերորդ մասը, երրորդը վեցերորդ մասը. իսկ մնացածը միւս երեխերը հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Իւրաքանչիւրը քանի՞ տանձ ստացաւ:

227. Մի մարդ կէս դիւժին սեղանի զղալ առաւ եւ կէս դիւժին թէյի զղալ. ամեն-մի սեղանի զղալին տուեց 3 մանէթ, իսկ ամեն-մի թէյի զղալին 2 մանէթ: Բոլոր զղալները որքան արժէին:

228. Մի երեխայ Յունիս ամսի հինգերորդ մասը մնաց ամառանոցում ծանօթների մօտ, վեցերորդ մասը մնաց քաղաքում, տասներորդ մասը ձանապարհին էր, իսկ մնացած ժամանակը անցկացրեց զիւղումը իւր ծնողների մօտ: Նա քանի՞ օր մնաց իւր ծնողների մօտ:



Դ.

Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր

31—40

229. Փետրվար ամիսը 28 օր է, իսկ Մարտը 3 օրով ավելի է նորանից. Մարտ ամսին 3 օր բարեկենդանի արձակուրդ տուին աշակերաներին, մի շաբաթ եկեղեցի մանդալու համար արձակեցին, 3 օր էլ կիրակի էր: Այդ ամսին քանի՞ օր ուտում կար,

230. Մի երեխայ վեր եկաւ 2 շայի, միւսը 3 հատ 3-կողեկանոց, իսկ երրորդը 6 հատ 2-կողեկանոց: Այդ փողերով նոքա միասին 9 խնձոր առան, ամեն-մինը 3 կողեկով, իսկ մնացած փողը բաժանեցին աղքատներին և ամեն-մի աղքատին ընկաւ 2 կողեկ: Քանի՞ աղքատ էին:

231. Երեք սենկալում միասին 31 աթոռ կար. նոցանից երկուսում հաւասար էին, իսկ երրորդում ավելի էր առաջուսց ամեն-մէկից: Քանի՞ աթոռ կար իւրաքանչիւր սենկալում:

232. Իմ մի զրպանումը կայ 2 հատ 3-շայանոց և 1 կողեկ, իսկ միւսումը կայ 3 հատ երկու-շայանոց և 2 կողեկ: Ո՞ր զրպանումն ավելի փող կայ և ո՞րքան:

233. Դասատանը 8 նստարան կար, որոնց ամեն-մէկի վերայ սովորաբար նստում էին 4 աշակերտ. մի օր 6 աշակերտ հիւանդութեան պատճառով դասի չէկան: Այդ օրը քանի՞ աշակերտ կար դասատանը:

234. Գիւղեցը մինչև քաղաքը 32 վերտա է. զիւղացին քանի՞ ժամումը զիւղեցը կ'հասնի քաղաք, եթէ որ

իւրաքանչիւր 5 ժամումը զնայ 20 վերտա և ճանապարհին հանգստանայ 4 ժամ:

235. Ուտումարանի ննջարանում մահճակալները դարձած էին երկու կարգ. ամեն-մի կարգումը 16 հատ: Կիրակի օրը երեխանցից մի քանիսը տուն էին գնացել, այնպէս որ 17 մահճակալ դարդակ էին մնացել: Քանի՞ երեխայ կար պարկած այդ օրը:

236. Ծառային 32 կողեկ տաւին, որ 4 կիտրոն առնի, բայց նա առաւ 5 այնպիսի կիտրոն, որոնց ամեն-մինը երկու կողեկ պակաս արժէր: Նա ո՞րքան փող յետ բերեց:

237. Մի աշակերտ զնեց 4 քարէզրիչ և 6 մատիտ և տուեց 32 կողեկ, իսկ միւսը միւսնայիցը զնեց 4 քարէզրիչ և 5 մատիտ և տուեց 28 կողեկ: Ո՞րքան արժէր իւրաքանչիւր քարէզրիչը և մատիտը:

238. Սայլը տանիցը դուրս եկաւ առաւօտեան 10 ժամին. և ամեն-մի ժամումը զնում էր 4 վերտա. երեկոյեան 6 ժամին միւսնայն ակզից ճանապարհ ընկաւ մի մարդ, որ ամեն-մի ժամումը զնում էր 6 վերտա: Մարդը ո՞ր ժամին կ'հասնէր սայլին:

239. Աշակերտին պատուիրեցին, որ սովորի իւր տետրակի 3 երեսի բառերը. տետրակի ամեն-մի երեսում կար 11 բառ, դասի ժամանակը նա 7 բառ մոռացաւ: Քանի՞ բառ զիտէր նա:

240. Թողի երկարութիւնը 11 սաժէն էր. նորանից կտրեցին 2 անգամ 6 աշին և 3 անգամ 5 արշին, իսկ մնացածիցը երեսերը ճրթի շինեցին: Ճրթութու երկարութիւնը ո՞րքան էր:

241. Պընձգործը կամենում էր իւր 33 զրվանքայ պընձից շինել 11 աման, բայց յետոյ միտքը փոխեց և ա-

մեն-մի ամանը առաջվանից 1 զրվանքայ ծանր շինեց և նուրա մօտ մնաց էլի 1 զրվանքայ պղինձ: Նա քանի՞ աման շինեց:

**242.** Իմ երկու զրգանուժը միասին կայ 33 կուպէկ. մէկի մէջ 15 կուպէկ, իսկ միւսում 3 հատ զանազան զրգաներ: Իմ միւս զրգանուժը որպիսի զրգաներ են:

**243.** Տանը 34 աթոռ կար. դոցանից մի դիւժին դահլիճուճն էր, 10 հատ սեղանատանը, իսկ մնացածը հաւասար դարսած էր ննջարանուժը և զրասնենեակուժը: Քանի՞ աթոռ կար զրասնենեակուժը!

**244.** Ճանապարհորդը 4 ժամուժը գնաց 34 վերստ. նա իւրաքանչիւր հեռեւեալ ժամուժը 1 վերստ աւելի էր գնում առաջուայ ժամից: Նա առաջին ժամուժը քանի՞ վերստ գնաց:

**245.** Մի մարդ ունէր երկու տեսակ ալիւր. մի տեսակից 8 զրվանքայ, զրվանքան 3-կուպէկանոց, միւս տեսակից 9 զրվանքայ, զրվանքան 1-կուպէկանոց. նա այդ ալիւրները միասին խառնեց և վաճառեց այնպէս, որ բոլորի մէջ աշխատեց 1 կուպէկ: Խառնած ալիւրի ամեն-մի զրվանքան որքանով վաճառեց նա:

**246.** Երեք երեխայ փող վեր կէան և միասին առան 34 նուռը. նոցանից մինը տուեց 6 կուպէկ, միւսը 7 կուպէկ, իսկ երրորդը 4 կուպէկ: Ամեն-մէկը քանի՞ հատ պէտք է վերցնի իւր փողին:

**247.** Չատիկից յետոյ աշակերտները 5 շաբաթ ուսանում էին, բայց այդ միջոցին 8 օր տօն էր, 9 օր էլ քննութիւն էր: Քանի՞ օր էին ուսանում:

**248.** Եօթը աշակերտին շաբթէնը տալիս են 35 թերթ թուղթ: Ո՞րքան թուղթ կ'հասնի 4 աշակերտի մի շաբաթուժը:

**249.** Սայլը 3 ժամուժը գնում է 15 վերստ: Քանի՞

ժամանակուժը նա քաղաք կ'հասնի, եթէ որ քաղաքի հեռաւորութիւնը 35 վերստ է և նա ճանապարհին հանգրտանալու է 4 ժամ:

**250.** Երեք եղբայր իւրեանց հօրիցը 35 կուպէկ ստացան և բաժանեցին իւրեանց մէջ այնպէս, որ մեծ եղբայրը 2 անգամ աւելի վերցրեց միջնակից, իսկ միջնակը 2 անգամ աւելի փոքրիցը: Ամեն-մինը քանի՞ կուպէկ ստացաւ:

**251.** Փոստայի իջեանում 36 ձի կար. դոցանից 2 կառքում լծեցին չորս-չորս ձի. մի ձիով նամակ ուղարկեցին, 3 ձի լծեցին սուրհանդակի համար, իսկ մնացածը լծեցին 6 սայլում: Իւրաքանչիւր սայլում քանի՞ ձի լծեցին:

**252.** Օր ու կէսուժը երկաթուղու գնացքը մի քաղաքից հասաւ միւս քաղաքը, ամեն-մի իջեանը հասնում էր 3 ժամուժը: Քանի՞ իջեան կար մէկ քաղաքիցը մինչև միւսը:

**253.** Դասատան 6 նստարանի իւրաքանչիւրի վերայ սփորաբար նստում են 6 աշակերտ, եօթը աշակերտ հիւանդութեան պատճառով դասի չ'էին եկել: Քանի՞ աշակերտ էր եկել:

**254.** Որդին հօրիցը ստացաւ 18 հատ 2-կուպէկանոց. դոցանից նա մի շաբթուայ միջոցին իւրաքանչիւր օր մնալում էր 6 կուպէկ, բացի կիւրակի օրիցը: Նորա մօտ որքան փող մնաց շաբաթուայ վերջը:

**255.** Առաջին դասատանը 12 նստարան կայ, որոնց ամեն-մէկի վերայ նստում են 3 աշակերտ, իսկ երկրորդումը 9 նստարան կայ, որոնց իւրաքանչիւրի վերայ նստում են 4 աշակերտ: Ո՞ր դասատան աշակերտները աւելի են:

**256.** Տանտիկինը մի աղախին վարձեց ամէնը 5 մանէթով: Եօթը ամսից յետոյ աղախինը ստացաւ իւր վարձը և մի մանէթ էլ պարգև: Այդ փողիցը 18 մանէթ

տուեց շորի, իսկ մնացած փողովը սենեակ վարձեց՝ ամենէնը 3 մանէթով: Քանի՞ ամսուայ սենեակի վարձ ունէր նա:

**257.** Մի աղջիկ եկեղեցուցը դուրս գալով՝ հաշուեց որ իւր ձեռքի փողը կարող է տալ 12 ազքաօտի իւրաքանչեւրին 3 կոպէկ. բայց սենեկով, որ միայն 9 ազքաօտ կայ եկեղեցու դռանը. նա բոլոր փողերը բաժանեց նոցա: Ամեն-մէկին քանի՞ կոպէկ ընկաւ:

**258.** Վաճառականը երկու տեսակ թէյ ունէր. առաջին տեսակից 4 զրվանքայ, զրվանքան 4-մանէթանոց, երկրորդ տեսակից 5 զրվանքայ, զրվանքան 3-մանէթանոց: Նա այդ բոլոր թէյը խառնելով կամենում է այնպէս վաճառել, որ բոլորի մէջը աշխատի 5 մանէթ: Ո՞րքանով պէտք է վաճառի խառնածի զրվանքան:

**259.** Չորս երկիսայ միասին 36 տանձ առան: Ամեն-մէկը քանի՞ տանձ պէտք է վերցնի, եթէ որ առաջինը տուեց 3 կոպէկ, միւսը 4 կոպէկ, երրորդը 5 կոպէկ, իսկ չորրորդը 6 կոպէկ:

**260.** Տանտիկինը ունէր 3 զիւժին և 1 հատ ափսէ. նոցանից 8 հատ կոտրվեց: Քանի՞ զիւժին և քանի՞ հատ մնաց:

**261.** 37 աշակերտ խաղէին անում. նոքս երկու խումբ բաժանվեցին, այնպէս որ մի խմբումը 13 հոգի աւելի էր միւս խմբից: Քանի՞ աշակերտ կար ամեն-մի խմբումը:

**262.** Պատի վերայ քաշ էր արած 37 պատկեր 5 կարգ. այնպէս որ 2 մեծ կարգումը հաւասար էին, իսկ 3 փոքր կարգումը նոյնպէս հաւասար: Քանի՞ պատկեր կար իւրաքանչեւր մեծ և փոքր կարգում:

**263.** Մի կտոր քաթանից կարեցին 9 շապիկ, որոնց իւրաքանչեւրի համար դնաց 3 արշին և 2 սփռոց որոնց

ամեն-մէկի համար դնաց 5 արշին և էլի աւելացաւ 1 արշին: Բոլոր կտորը քանի՞ արշին էր:

**264.** Գործարանումը բանում էին 17 տղամարդ և 21 կին հաւասար վարձով. բայց կանայքը մի շաբաթումը 16 մանէթ աւելի էին ստանում տղամարդերից: Բոլորը քանի՞ բանուր էին և ամեն-մինը շաբթէնը ո՞րքան էր ստանում:

**265.** Հաւանոցումը 19 գոյգ հաւ կար. նոցանից 9 հատ կորել էր: Քանի՞ հատ էր մնացել:

**266.** Աշակերտը արձակուրդ առաւ 5 շաբաթ և 4 օր. դորանից 6 օր նա մնաց քաղաքումը իւր բիձու մօտ և 27 օր զիւղումը իւր ծնողներին մօտ. մնացած օրերը անցկացան զիւղը դնալու և քաղաք վերադառնալու համար: Քանի՞ օրում նա զիւղեցը հասաւ քաղաք:

**267.** Երկու եղբայր միասին 39 կոպէկ ունէին. նոցանից ամեն-մինը առաւ 3 տանձ և այն ժամանակը մէկի մօտ մնաց 9 կոպէկ, իսկ միւսի մօտ 12 կոպէկ: Ամեն-մէկը ո՞րքան փող ունէր և տանձի 10 հատը ո՞րքան արժէր:

**268.** Մշակների համար 3 օրումը դնում է 39 զրվանքայ հաց: Ո՞րքան հաց կերթայ 2 օրումը:

**269.** Աշակերտը ունէր 4 հատ երկու-շայանոց. դոցանով նա առաւ 3 մատիտ, մինը 5 կոպէկով, իսկ մնացած փողովը առաւ 5 զիւժին զրիչ: Գրիչներին զիւժինը ո՞րքան արժէր:

**270.** Տանտիկինը 40 արծաթէ զգալ ունէր. նոցանից զիւժին ու կէսը սեղանի զգալ էր, մի զիւժինը թէյի, մնացածը մուրաբի: Ո՞րքան արժէին մուրաբի զգալները, եթէ որ ամեն-մէկին տուել էր 4 մանէթ:

**271.** Երկու եղբոր բարձրութիւնը միասին երկու-ու

կէս արշն էր. բայց մեծ եղբայրը 12 վերջով բարձր էր փոքրից: Ամեն-մէկի հասակը ո՞րքան էր:

272. Վաճառահանը մատիտներ առաւ, իւրաքանչիւր 4 հատը 20 կոպէկով. իսկ ինքը իւրաքանչիւր 5 հատը վաճառեց 35 կոպէկով և բոլորի մէջը աշխատեց 40 կոպէկ: Նա քանի՞ մատիտ էր առել:

273. Մի մարդ պէտք է ճանապարհորդութիւն աւնէր 10 օր, ամեն-մի օրվայ ծախք նա վերցրեց 4 մանէթ. բայց առաջին 4 օրումը մնխեց եօթը-եօթը մանէթ: Իւրաքանչիւր մնացած օրումը նա ո՞րքան պէտք է մնխի, որ փողը բաւական լինի:

274. Պղնձէ լարի երկարութիւնը 3 Ֆուտ և 4 դիւլիմ էր. նորանից կտրեցին 8 դիւլիմ, իսկ մնացածիցը շնեցին շրթայ, որի ամեն-մի օղի համար զնաց 4 դիւլիմ: Շղթան քանի՞ օղից էր բաղկացած:

275. Գիւղացին 8 տոպրակ ալիւր ուներ, իւրաքանչիւրի մէջ 5 շետվերիկ. դորան տուին 10 մանէթ, բայց նա չ'համաձայնեց և տարաւ քաղաք, այնտեղ վաճառեց շետվերտը 3 մանէթով, քաղաք տանելու համար 2 մանէթ էլ ծախս արաւ: Նա ո՞րքան աւելի օգուտ ստացաւ:

276. Մի երեխայ ուներ 5 կիտրոն, որ արժէր 40 կոպէկ, իսկ միւսը ուներ 10 խնձոր, որ արժէր 40 կոպէկ: Երկրորդ երեխան առաջինին տուեց 6 խնձոր: Նա քանի՞ կիտրոն պէտք է ստանար դորա փոխարէն:

277. Մի մարդ երկու տեսակ գինի ուներ. առաջին տեսակիցը 8 շեշ, ամեն-մի շեշը 3-մանէթանոց, երկրորդիցը 2 շեշ, ամեն-մի շեշը 8-մանէթանոց: Նա այդ գինիքը խառնեց միմեանց հետ: Ո՞րքան արժէր խառնած գինու շեշը:

278. Երեք երեխայ միասին 40 հատ սերգէկէլ. նո-

ցանից մինը տուեց 8 կոպէկ. իսկ միւսները վեց-վեց կոպէկ: Իւրաքանչիւրը ո՞րքան սերգէկէլ պէտք է վերցնէր:

279. Ճանապարհի վերայ գտանվում էին երեք քաղաք. առաջին քաղաքից մինչև երրորդ քաղաքը 28 վերստ էր, իսկ մինչև երկրորդը 25 վերստ էր: Երկու շոգեկառք միևնոյն ժամանակ ճանապարհ ընկան առաջինից դէպի միւս քաղաքները: Երրորդ քաղաքը զնացող շոգեկառքը իւրաքանչիւր 10 րոպէում զնում էր 7 վերստ, իսկ երկրորդ զնացողը իւրաքանչիւր 8 րոպէում զնում էր 5 վերստ: Ո՞ր շոգեկառքը աւելի շուտ տեղ կ'հասնէր:

280. Քառասուն վեղրօանոց տակառը 3 խողովակ ուներ. մի խողովակից մի րոպէում ներս էր թափվում 10 վեղրօ ջուր, միւսից 12 վեղրօ, իսկ երրորդիցը մի րոպէումը դուրս էր թափվում 14 վեղրօ: Ջուր անելու ժամանակը մոռացան երրորդ խողովակը փակելու: Քանի՞ րոպէումը տակառը լցվեց:

281. Մի մարդ 32 կոպէկ ուներ. նա կամենում էր այդ փողը հաւասար բաժանել աղքատներին: Քանի՞ աղքատի կ'հասնէր և ամեն-մէկին քանի՞ կոպէկ:

282. Բազումը 37 երեխայ խաղում էին հետեւեալ խաղը՝ ով որ կարողանար միւսներին դասաւորել հաւասար կարգերի նա դառնում էր առաջնորդ և նոցա անց էր կացնում բազիցը: Այդպէս երեխաքը անցկացան բազիցը 9 անգամ և ամեն անգամ նոցա առաջնորդը փոխվում էր: Ո՞րպիսի կարգերով էին կանգնեցնում նոցա:

283. Թօռի երկարութիւնը 39 արշն էր և բաղկացած 4 զանազան կտորից: Իւրաքանչիւր կտորի երկարութիւնը ո՞րքան էր:

284. Մի քանի երեխայ 40 խնձոր քաղեցին և հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Քանի՞ երեխայ էին և ամեն-մէկին քանի՞ խնձոր ընկաւ:

**285.** Վ աճառականը ալիւր քաշելու համար ունի միայն 4 քար, այն է 1-փուտանոց, 3-փուտանոց, 9-փուտանոց և 27 փուտանոց: Նա ինչպէս կարող է քաշել միանգամից ամբողջ փուտերը սկսած մէկից մինչև 40-ը:


**286.** Այդիոււմը դրած էր 40 վեղրանոց թերաս տակառ, երբ այդեպանը նորանից վերցրեց 12 վեղրո ջուր, այն ժամանակը տակառոււմը մնաց ուղիղ իւր կէսը: Տա- կառոււմը ո՞րքան ջուր կար:

**287.** Հայրը իւր 4 երեխանց համար առաւ մի ամբողջ և մի քառորդ գրվանքայ կահալ և հրամայեց, որ հաւասար բաժանեն իւրեանց մէջ: Ամեն-մէկին քանի՞ կահալ կրնին. եթէ որ 3 կահալը քաշոււմ էր մի լոտ:

**288.** Երկու մարդ 36 արշին թռկին միասին սուխն 40 կոպէկ: Ամեն-մէկին քանի՞ արշին կ'հասնէր, եթէ որ երկրորդը սուել էր միայն 10 կոպէկ:

**289.** Տանտիկինը կէս փուտ շաքար առաւ, որի քառորդ մասը դուրս գնաց 10 օրոււմ: Օրէնը քանի՞ գրվանքայ շաքար էր դուրս գնում:

**290.** Ուսումնարանոււմը 40 աշակերտ կար. արձա- կուրդի ժամանակ նոցա ութերորդ մասը մնաց քաղաքոււմը, հինգերորդ մասը գնաց դիւղը, չորրորդ մասը գնաց ամա- րանոց, տասերորդ մասը դուրս գնաց ուսումնարանից, իսկ միւս- ները մնացին ուսումնարանոււմը: Մնացողները քանի՞ հոգի էին:



Ե.

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ

41—50

**291.** Խոհարարը դազար առաւ, մինը մի կոպէկով, նա բոլոր դազարին առեց երկու հատ 15-կոպէկանոց, մի հատ 5-կոպէկանոց և երկու հատ 3-կոպէկանոց: Նա քա- նի՞ դազար առաւ:

**292.** Արհեստաւորը 4 կտոր պղինձ ունէր. ամեն-մի կտորը քաշոււմ էր 5 գրվանքայ, էլի ունէր 7 ուրիշ կտոր, որոնց ամեն-մինը քաշոււմ էր 3 գրվանքայ: Այդ բոլոր պղինձիցը նա մի ինքնատու շինեց: Ո՞րքան պղինձ զնաց ինք- նատուի համար:

**293.** Երկու ձմերուկ միասին քաշոււմ էին 41 գրու- վանքայ, բայց մէկը միւսից ծանր էր 5 գրվանքայ: Ամեն- մի ձմերուկը ո՞րքան էր քաշում:

**294.** Ուսումնարանի աշակերտները գնում էին 14 կարդ բաժանած, ամեն-մի կարդոււմը 3 աշակերտ. նո- ցա հանդիպեցան միւս ուսումնարանի աշակերտները, ո- լոնք 21 կարդ էին, ամեն-մի կարդոււմը 2 աշակերտ: Ո՞ր ու- սումնարանի աշակերտները աւելի էին:

**295.** Երկու եղբօր տարիքը միասին 42-է, բայց մէկը միւսիցը մեծ է 4 տարով: Ամեն-մէկը քանի՞ տարեկան է:

**296.** Ուսումնարանոււմը վեց շաբաթ արձակուրդ էր. այդ միջոցին աշակերտը 25 օր կաց-աւ դիւղոււմը, իսկ մնացած ժամանակը քաղաքոււմը: Նա քանի՞ օր մնաց քաղաքոււմը:

**297.** Մի մարդ երկու տեսակ դարեջուր ունէր, մէկ

տեսակից 4 շնչ, որի մի շնչը արժէր 6 կոպէկ. միւս տեսակից 2 շնչ, որի մի շնչը արժէր 9 կոպէկ: Նա այդ բոլորը խառնեց միմեանց հետ. ո՞րքան կ'արժենայ խառնած դարեջուրի շնչը:

**298.** Երկու աղջիկ միասին 43 կահալ ունէին. երբ նորա հաւասար կերան, այն ժամանակը մէկի մօտ մնաց 9 հատ, իսկ միւսի մօտ 8 հատ: Ամեն-մինը քանի՞ կահալ ունէր:

**299.** Երկու երեխայ փռուան էին թողնում. նոցանից մէկի թելը 9 սաժէն աւելի էր միւսի թելից. բայց երբ թելերը միասին կապեցին դուրս եկաւ 43 սաժէն: Ամեն-մէկի թելը ո՞րքան էր.

**300.** Մրդապաճառը 3 թարախում խնձորներ աւնէր. երկու թարախներ հաւասար էր, իսկ երրորդինը աւելի էր զոցա ամեն-մէկից: Իւրաքանչիւր թարախում քանի՞ խնձոր կար, եթէ որ բոլոր խնձորները 43 հատ էին:

**301.** Ուխտաւորը ճանապարհորդեց ամիս աւելի. նա 15 օրում առաջին քաղաքից հասաւ երկրորդը, 17 օրումը երկրորդիցը հասաւ երրորդը. իսկ մնացած ժամանակում վերադարձաւ առաջին քաղաքը: Նա քանի՞ օրումը վերադարձաւ առաջին քաղաքը:

**302.** Զինուորը 4 փաթեթ ծխախոտ դնեց, ամեն-մի փաթեթը 11 կոպէկով. նա օրէնը քաշում էր 2 կոպէկի ծխախոտ: Նորա առած ծխախոտը քանի՞ օր բաւական կ'լինէր:

**303.** Երեք զիւղացի միասին 44 մանէթի դարի վաճառեցին. դորանից 3 շեւիերաը մէկինն էր, իսկ չորս-չորս շեւիերա միւսներինը: Ամեն-մէկը ո՞րքան փող պէտք է վերցնէր:

**304.** Ուսումնարանի առաջին դասատանը 8 նստարան կար. 4 նստարանի ամեն-մէկի վերայ 6 աշակերտ կար,

իսկ մնացածները ամեն-մէկի վերայ մինը պահաս: Ընդամենը քանի՞ աշակերտ կայ այդ դասատանը:

**305.** Դերձակը 45 արշին մահուտ ունէր, դորանից նա կարեց 3 սերտուկ իւրաքանչիւրը 3 արշինից, 4 վերարկու իւրաքանչիւրը 4 արշինից, իսկ մնացածից կարեց մեծ վերարկուներ, որոնց իւրաքանչիւրի համար դնաց 5 արշին: Քանի՞ մեծ վերարկու դուրս եկաւ:

**306.** Հինգ մշակ 3 օրումը շինեցին մի (չափար) ցանկ, որի երկարութիւնն 45 արշին էր: Քանի՞ օրում նոյն ցանկը կ'շինէին 15 մշակը:

**307.** Առաջին դասատանը 6 նստարան կար, իւրաքանչիւրի վերայ 4 աշակերտ, իսկ երկրորդումը 7 նստարան, իւրաքանչիւրի վերայ 3 աշակերտ: Երկու դասատանը միասին քանի՞ աշակերտ կար:

**308.** Ծառային 9 շալի տուին և հրամայեցին, որ գորանով 15 խնձոր աւնի. բայց նա այդ գնի խնձոր չ'դտաւ, և առաւ 10 հատ ուրիշ խնձոր, որանց տասնեակը առաջիններից 8 կոպէկ աւելի արժէր: Նա ո՞րքան փող յետ բերեց:

**309.** Աշակերտը 3 տետրակ դնեց և տուեց երեք-շայանոցներ, նորան ամեն-մի երեք-շայանոցից 4 կոպէկ յետ տուին, այնպէս որ բոլոր յետ ստացածը եղաւ 12 կոպէկ: Նա իւրաքանչիւր տետրակին ո՞րքան փող տուեց:

**310.** Մի մարդ 4 գրավանքայ աղ ունէր, գրվանքան 3-կոպէկանոց և էլի 5 գրվանքայ աղ, գրվանքան 6-կոպէկանոց. նա այդ աղերը խառնեց միմեանց հետ: Խառնածի զրվանքան ո՞րքանով պէտք է վաճառի, որ բոլորի մէջը աշխատի 3 կոպէկ:

**311.** Երկու երեխայ միասին ունէին 46 կոպէկ. բայց մէկի փողը 10 կոպէկով աւելի էր միւսի փողից: Այն եւ

306/2

բեխան, որի փողը շատ էր քանի՞ մատիտ կարող էր առնել իւր փողովը, եթէ որ մի մատիտը արժէր 4 կոպէկ:

**312.** Մի դասաւանը 19 աշակերտ կար, իսկ մի սուսմը 8-ով աւելի. երկու դասաւանն աշակերտները գնացին զբօսնելու դոյզ-դոյզ կանգնած: Քանի՞ դոյզ դուրս եկաւ:

**313.** Գիւղացին 46 կոպէկ ունէր. նա այդ փողը փոխեց շայանոցների հետ և դորա համար 1 կոպէկ աւելի սուսեց: Քանի՞ հատ շայանոց ստացաւ:

**314.** Գիւղի ուսումնարանումը սովորում են 17 աղջիկ, 4 անգամ նոյանից աւելի տղերք և 5-ով աւելի հասակաւոր մարդիք: Ընդամենը քանի՞ հոգի էին սովորում ուսումնարանումը:

**315.** Բագի երկարութիւնը 47 արշին էր. ցիւ ժամանակը մանդալու համար դարսեցին 7 տախտակ, ամենմինը 5 արշին երկարութեամբ և մնացած անղը դարսեցին 4-արշինանոց տախտակներ: Վերջի տախտակներից քանի՞ հատ դնաց:

**316.** Աշակերտը 5 շաբաթուայ միջոցում թարգմանեց 47 երես: Առաջին 3 շաբաթում նա հաւասար թարգմանեց, իսկ վերջի երկու շաբաթում նոյնպէս հաւասար, միայն ամեն-մի շաբաթուայ թարգմանածը շատ էր առաջուայ ամեն-մի շաբաթուայ թարգմանածից: Վերջի շաբաթը նա քանի՞ երես թարգմանեց:

**317.** Տանտիկինը հիւրեր ունէր. նա 6 հաւասար սեղան բացեց և բոլորի վերայ դարսեց 4 զիւժին զգալ: Ամեն-մի սեղանի վերայ քանի՞ հիւր նստեց:

**318.** Աղախինը ստանում էր ամէնը 4 մանէթ. տարուայ ընթացքում նա ստացել էր տանտիկինից 25 մանէթ: Տարուայ վերջը էլի որքան պէտք է ստանար:

**319.** Աշակերտը 6 թերթ թուղթը չորստակեց և տեարակ կարեց. նա այդ տեարակի վերայ թարգմանութիւն էր անում օրէնը 3 երես: Երկու շաբաթից յետոյ քանի՞ երես սովորակ կ'մնար:

**320.** Դասաւանն մէջ 29 աշակերտ կար. 19 էլ նորից մտան: Այդ բոլորովին հաւասարապէս նստացրին 8 նստարանի վերայ: Ո՞րքան աշակերտ կար ամեն-մի նստարանի վերայ:

**321.** Մշակների համար 4 զիւժին փայտէ զգալ առան և իւրաքանչիւր 3 զգալին տուին 2 կոպէկ: Բոլոր զգալներին որքան փող տուին:

**322.** Մեծպատը տեւում է 6 շաբաթ և 6 օր. դորանից 6 օր աշակերտները եկեղեցի էին մանդալել, 6 օր կիւրակի էր և 6 օր ազատ էին Չարչարման շաբաթը: Քանի՞ օր ուսում կար Մեծպատին:

**323.** Քար կրելու համար 3 անգամ եզներ առան, ամեն-մի անգամը 16 հատ և և լծեցին ամեն-մի սայլումը մի զոյգ: Քանի՞ սայլ քար կարելն էր բերել մի անգամում:

**324.** Ճաշն էին հրաւիրած 48 հոգի, բայց տանտիկինը բռներ միայն 3 զիւժին աման, 39 զոյգ դանակ ու պատառաքաղ և 2 զիւժին անձեռոցիկ: Նա այդ բաներիցը էլի որքան պէտք է ճարէր:

**325.** Երեք մարդ միասին 48 մանէթի մահուտ առան, նոյանից մինը վերցրեց 3 արշին, միւսը 8 արշին, իսկ երրորդը 5 արշին: Ամեն-մէկը որքան փող պէտք է տար:

**326.** Ամառուայ արձակուրդը տեւեց 7 շաբաթ. աշակերտը 12 օր մնաց քաղաքումը կղբօր մօտ, 24 օր մնաց զիւղումը ծնողների մօտ և կամենում էր 11 օրից յի-

տոյ վերադառնալ քաղաք: Նա քանի՞ օր պէտք է ձանա-  
պարհ քնար, որ իւր ժամանակին տեղ հասնէր:

327. Բազի երկարութիւնը 16 սաժէն և 1 արշին էր. նորա երկարութեամբ տախտակներ դարսեցին. ամեն-  
մի տախտակի երկարութիւնը 7 արշին էր և իւրաքանչիւրը  
արժէր 2 մանէթ: Քանի՞ մանէթի տախտակ դնաց:

328. Գիւղացին 7 չեովերտ դարի ցանեց և վերցրեց  
մէկին-եօթը. դորանից 14 չեովերտ վաճառեց իւր տեղումը՝  
չեովերտը 2 մանէթով. 7 չեովերտ վաճառեց քաղաքումը՝  
չեովերտը 3 մանէթով. իւր ձիաների համար էլ պահեց  
18 չեովերտ. իսկ մնացածը ցանեց միւս տարուայ համար:  
Նա ո՞րքան փող վերցրեց և նորից ո՞րքան դարի ցանեց:

329. Ես ունիմ 49 կոպէկ զանազան դրամներ: Ո՞ր-  
պիսի դրամներ ունեմ և իւրաքանչիւրից քանի՞ հատ:

330. Երեխային փող տուին, որ գնայ 6 խնձոր առ-  
նի, մինը՝ 5 կոպէկի և 5 տանձ, մինը՝ 4 կոպէկի. բայց  
նա սխալեց և ընդհակառակը առաւ 6 տանձ և 5 խնձոր:  
Ո՞րքան փող յետ բերեց նա:

331. Երկու երեխայ միասին 50 կոպէկ ունէին. մէկը  
5 կոպէկանոցներ, իսկ միւսը 2-շայանոցներ և առաջինի  
փողը 10 կոպէկ աւելե է երկրորդի փողից: Ամեն-մինը քա-  
նի՞ կոպէկ ունէր:

332. Մէկ զրպանումն որքան երկու-շայանոց կայ,  
միւսումն էլ այնքան երեք-շայանոց կայ և երկու զրպա-  
նիս փողը միասին 50 կոպէկ է: Քանի՞ կոպէկ ունեմ ա-  
մեն-մի զրպանումն:

333. Մի տեղ կային 50 հոգի. տղամարդիքը 8 էին,  
կանայքը 2 անգամ նոցանից աւելե, իսկ մնացածը երե-  
խերք էին: Քանի՞ երեխերք կային:

334. Մշակներն համար 50 դրվանքայ հաց առան  
և դորանից ընկաւ ամեն-մէկին 2 օրուայ պաշար 5 զը-  
վանքայ: քանի՞ մշակ էին:

335. Մի մարդ մի ոսկէ շղթայ դնեց, որ քաշում  
էր 5 լոտ և մի քորոց, որ քաշում էր 3 լոտ: Նա շղ-  
թային 20 մանէթ աւելե տուեց քորոցից: Իւրաքանչիւրին  
նա ո՞րքան փող տուեց:

336. Երկու դասատանը միասին 50 աշակերտ կային, իւ-  
րաքանչիւրումը հաւասար. ամեն-մի նստարանի վերայ նստած  
էին 5 հոգի: Քանի՞ նստարան կար իւրաքանչիւր դասատանը:

337. Մի մարդ 50 կոպէկ ունէր. նա կամենում էր  
այդ փողերը հաւասար բաժանել աղքատներին՝ ամեն-մէ-  
կին 25 կոպէկ. բայց տեսաւ որ 3 աղքատ աւելացան, նա  
այդ փողերը հաւասար բաժանեց բոլորին: Ամեն-մի աղ-  
քատին ո՞րքան ընկաւ:

338. Մի մարդ ունէր 3 շիշ գարեջուր, շիշը 6 կո-  
պէկանոց և 7 շիշ ուրիշ տեսակ գարեջուր. նա այդ դա-  
րեջուրը խառնեց միմեանց հետ, բոլորը միասին վաճառեց  
50 կոպէկով և մէջը աշխատեց 4 կոպէկ: Երկրորդ տե-  
սակ գարեջուրի իւրաքանչիւր շիշը ո՞րքան արժէր:

339. Չորս երեխայի 47 կակալ տուին. նոքա բա-  
ժանեցին իւրեանց մէջ, բայց բոլորը վերցրին անհաւասար:  
Ամեն-մինը ո՞րքան ստացաւ:

340. Վարժապետը 48 կակալ բերեց դասատուն և  
ասեց աշակերտներին, որ նոքա զանազան կերպի հաւա-  
սար բաժին անեն և խոստացաւ ամեն-մի նոր կերպի բա-  
ժին անելու համար 5 կակալ տայ: Աշակերտները ի՞նչպի-  
սի բաժիններ արեցին և քանի՞ կակալ ստացան վար-  
ժապետից:

341. Պէտք է տաս-շայանոցը զանազան սպիտակ և սև փողերի հետ փոխել. ամեն-մի տեսակիցը քանի՞ զրամ պէտք է տալ:


342. Երբ պատի ժամացոյցը ուղղում էին՝ նորա զանգակը 5 անգամ զարկեց և բոլոր զարկերի թիւը եղաւ 50: Ամեն-մի անդամումը քանի՞ զարկ էր անում ժամացոյցը և ո՞ր ժամի վերայ կանգնեցրին նորան:

343. Այդեպանը 12 մարկ ունէր. դոցա ամեն-մէկը ջրելու համար հարկաւոր էր 4 վեղրօ ջուր. նա ունէր երկու քառասուն վեղրօանոց տակառ, մէկի երեք չորրորդ մասն էր լիքը, իսկ միւսումը կար 17 վեղրօ: Բաւական է արդե՞ք այդ մարկերը ջրելու համար:

344. Մշակները 6 շաբաթում մի քուչայ քարեցին, որի երկարութիւնը 48 սաժէն էր: Առաջի շաբաթը քարեցին նորա վեցերորդ մասը, երկրորդ շաբաթը ութերորդ մասը, երրորդ շաբաթը՝ տասներկու երրորդ մասը, չորրորդ շաբաթը՝ չորրորդ մասը, հինգերորդ շաբաթը՝ երրորդ մասը, իսկ մնացածը քարեցին վեցերորդ շաբաթը: Քանի՞ սաժէն քարեցին վերջի շաբաթը:

345. Սայլապանը 50 դարնց դարի ունէր. նա իւր չորս ձիաներից իւրաքանչիւրին օրէնը տալիս էր մէկ ու կէս դարնց. 2 դարնց էլ իւր պարտքին տուեց: Այդ դարին քանի՞ օր բաւական կ'լինէր:

346. Երեխան 50 կոպէկ ունէր. որի կէսը տուեց դրքի, հինգերորդ մասը մատիաների, իսկ մնացած փողովը առաւ կիտրոններ՝ ամեն-մինը 5 կոպէկով: Նա քանի՞ կիտրոն առաւ:



2.

Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

34—60

347. Երեխան խնձորներ էր առնում մինը 3 կոպէկով. եթէ որ նորան տային 16 հատ, այն ժամանակը նորա մօտ կ'մնար 2 կոպէկ, իսկ եթէ տային 17 հատ, այն ժամանակը 1 կոպէկ կ'պակասէր: Նա ո՞րքան փող ունէր:

348. Մի երեխայ առաւ 17 մատիտ, իսկ միւսը 12 և առաջինը 15 կոպէկ աւելի տուեց: Իւրաքանչիւրը ո՞րքան փող տուեց իւր գնած մատիտներին:

349. Գիւղացին ճանապարհ ընկաւ զիւղիցը դէպի քաղաք առաւօտեան 3 ժամին և գնաց մինչև 9 ժամը. յետոյ 2 ժամ հանդատացաւ և գնաց մինչև 3 ժամը. էլ 3 ժամ հանդատացաւ և գնաց մինչև երեկոյեան 10 ժամը. յետոյ քնեց և միւս օրը առաւօտեան 6 ժամին ճանապարհ ընկաւ և հասաւ քաղաք 9 ժամին: Գիւղիցը մինչև քաղաք քանի՞ վերստ էր, եթէ որ նա ամեն-մի ժամումը գնում էր 3 վերստ:

350. Աշակերտը 4 օրումը սովորեց 51 բառ, բայց նա իւրաքանչիւր հետեւեալ օրումը աւելի էր սովորում նախորդ օրից: Նա իւրաքանչիւր օր քանի՞ բառ էր սովորում:

351. Մի մարդ մի ղիւժին գղալ առաւ, մինը 4 մանէթով և նորա մօտ մնաց էլի 4 մանէթ: Նա ընդամենը ո՞րքան փող ունէր:

**352.** Տարին ունի 52 շաբաթ. դորանից 6 շաբաթ ամառուայ արձակուրդ էր, երկու-երկու շաբաթ Ծննդեան և Յարութեան տօն էր, մի շաբաթ ապաշխարելու համար արձակուրդ էր տուած և 2 շաբաթ էլ կենտատօնն էին: Տարուայ մէջը քանի՞ շաբաթ էր ուսում շարունակուում:

**353.** Որդին հօրիցը ստացաւ 2 հատ երեք-շաբանոց և 11 հատ 2-կուպէկանոց: Այդ փողերովը նա քանի՞ տետրակ կարող է աւելել, եթէ որ ամեն-մինը արժէ 13 կուպէկ:

**354.** Ուսումնարանի աշակերտները դնում էին մանգալու քաղաքիցը դուրս. նոքա 26 զոյգ էին, բայց երբ քաղաքիցը դուրս եկան, ամեն-մի կարգումը կանգնեցին 4 հոգի: Քանի՞ կարգ դուրս եկաւ և քանի՞սն էին բոլոր աշակերտները:

**355.** Պահարանում 52 զիրք դարած են 4 կարգ, այնպէս որ իւրաքանչիւր ներքին կարգում 2 զիր աւելել է վերին կարգի զրքերից: Ամեն-մի կարգումը քանի՞ զիրք կար:

**356.** Այդեպանը 6 տասնեակ վարունի ունէր, տասնեակը 3 կուպէկանոց էլի ունէր 7 տասնեակ ուրիշ տեսակ վարունի, տասնեակը 5-կուպէկանոց: Նա այդ բոլոր վարունիները խառնեց, վաճառեց մի գնով և փնաս արեց 1 կուպէկ: Նա տասնեակը որքանով վաճառեց:

**357.** Մի մարդ 53 ձի ունէր, նորանից վարձեցին 7 սայլ իւրաքանչիւրումը 3 ձի լծած. իսկ մնացած ձիաները նա լծեց զոյգ-զոյգ միւս սայլերում և ապրանք տարաւ. ամեն-մի սայլի վարձ ստացաւ 3 մանէթ: Ընդամենը նա որքան վարձ ստացաւ վերջին սայլերի համար:

**358.** Ուսումնարանի երկու դասատանը սովորում են 53 երեխայ՝ մէկումը տղերք, իսկ միւսումը աղջկերք: Քանի՞ աղջկի կար այդ ուսումնարանումը:

**359.** Աշակերտները օրէնը պարապում են 9 ժամ:

Շաբթէնը քանի՞ ամբողջ օր և ժամ են նոքա պարապում, եթէ որ կիւրակին չհաշվենք:

**360.** Աշակերտին պատու իրեցին որ տօներին 54 բաւ սովորի: Նա քանի՞ օրումը կ'սովորի բոլոր բառերը, եթէ որ օրէնը սովորի 18 բաւ:

**361.** Քանի՞ աղքատի կ'հասնի 54 կուպէկը, եթէ որ իւրաքանչիւրին տան 2, 3, 6, 9, 18, 27 կուպէկ:

**362.** Մի ուսումնարանի երկու դասատանը 27 նրատորան կայ և ամեն-մէկի վերայ նստած են 2 աշակերտ. իսկ միւս ուսումնարանում 18 նստարան կայ և ամեն-մէկի վերայ 3 աշակերտ: Ո՞ր ուսումնարանի աշակերտները աւելի են:

**363.** Մրդավաճառը ամեն-մի կիտրոնին 6 կուպէկ տուեց, իսկ ինքը վաճառեց 9 կուպէկով և բոլորի մէջը աշխատեց 54 կուպէկ. նա քանի՞ կիտրոն վաճառեց:

**364.** Մի մարդ չորս ու կէս զիւժին զրիչ վաճառեց, իւրքանչիւր 9 հատը 5 կուպէկով: Ո՞րքան փող ստացաւ:

**365.** Հիւանդի համար զեղ էին առել. նա այդ զեղը վերջացրեց 2 օրում և 7 ժամում, իւրաքանչիւր 5 ժամումը խմելով մի գդալ: Ընդամենը քանի՞ գդալ էր այն զեղը:

**366.** Պղնձգործը ունէր 1 փուտ և 15 զրվանքայ պղինձ. դորանից նա շինեց կաթսաներ, ամեն-մինը 11 զբրվանքից և վաճառեց իւրաքանչիւրը 9 մանէթով: Նա որքան շինելավարձ ստացաւ, եթէ որ բոլոր պղինձը արժէր 28 մանէթ:

**367.** Աշակերտը ունէր 2 ապտի և 15 կուպէկ. նա այդ փողերովը առաւ 6 մատիտ, մինը 4 կուպէկով և 7 քարեզրիչ, մինը 3 կուպէկով. մնացած փողերովն էլ առաւ 2 զիւժին զրիչ: Նա ամեն-մի զիւժին զրչին որքան փող տուեց:

**368.** Քուչայի վերայ 55 տուն կար նոցանից որքան մի յարկանի էին, երեք այնքան երկյարկանի էին. իսկ մնացածները երեք յարկանի էին: Եւրաքանչիւր տեսակից քանի՞ տուն կար այդ քուչայի վերայ:

**369.** Ուսումնարանի համար 2 զրուխ շաքար առան. ամեն-մի զրուխը քաշում էր 28 զրվանքայ: Այդ շաքարը քանի՞ օր բաւական կ'ըլնէր, եթէ օր օրէնը զուրս էր զընում 4 զրվանքայ:

**370.** Տանտիկինը 7 հաւ ուներ, նոցանից ամեն-մինը 8 ձու զրեց. 4 հաւ թուխար եկան և նա բոլոր ձուանը հաւասարապէս զրեց նոցա տակը: Ամեն-մի թուխար քանի՞ ձուտ կարող է հանել:

**371.** Երկու երկխայ միասին 56 սալոր առան. դոցանից մինը դորա համար տուեց 9 կոպէկ. իսկ միւսը 5 կոպէկ: Ամեն-մինը քանի՞ սալոր պէտք է վերցնի իւր փողին:

**372.** Վաճառականը 56 արշին քաթան ուներ. նա դորանից սփռոցներ կտրել տուեց, ամեն-մինը 8 արշինից և վաճառեց իւրաքանչիւրը 5 մանէթով: Նա ո՞րքան փող ստացաւ բոլոր սփռոցների համար:

**373.** Մի ուսումնարան 4 դասատուն ուներ և այդ բոլորի մէջը կար 56 աշակերտուհի. երկու ստորին դասանը հաւասար և երկու բարձր դասատանը հաւասար. բայց իւրաքանչիւր ստորին դասատան աշակերտուհիները աւելի էին իւրաքանչիւր բարձր դասատան աշակերտուհիներից: Ամեն-մի դասատանը քանի՞ աշակերտուհի կար:

**374.** Լուսոցքը փոսելու համար երեք կտոր թուկ կապեցին միմեանց ծայրից. մի կտորի երկարութիւնը 20 արշին էր, միւսինը 25 արշին, իսկ երրորդինը 12 արշին. մի

արշին էլ զնաց կապերի համար: Բոլոր թուկի երկարութիւնը ո՞րքան զուրս եկաւ:

**375.** Օրէնը 19 մշակի համար թխում են 57 զըրվանքայ հաց: Քանի՞ զրվանքայ հաց պէտք է թխել 8 մշակի համար:

**376.** Գիւղը քաղաքիցը հեռու էր 57 վերստ. գիւղացին ճանապարհ ընկաւ դէպի քաղաք և առաջի օրը զնաց 9 ժամ, ամեն-մի ժամում 4 վերստ. իսկ մնացած ճանապարհը զնաց միւս օրը 7 ժամում: Միւս օրը նա մի ժամումը քանի՞ վերստ էր զնում:

**377.** Մրգավաճառը զնեց 19 խնձոր, տասնեակը 20 կոպէկով, իսկ ինքը այդ բոլորը վաճառեց, տասնեակը 30 կոպէկով: Նա ո՞րքան աշխատեց:

**378.** Գերձակը մի կտոր մահաւազ զնեց և հաշուեց, որ նորանից զուրս կ'գայ 19 սերտուկ՝ մինը 3 արշինից, բայց յետոյ միտքը փոխեց և կարեց 7 սերտուկ, իսկ մնացած մահաւազիցը կարեց վերարկուններ՝ մինը 4 արշինից: Քանի՞ վերարկու զուրս եկաւ:

**379.** Մի վաճառական տուեց միւսին 29 զրվանքայ թէյ, զրվանքան 2-մանէթանոց, իսկ միւսը դորա փոխարէն տուեց մահաւա՝ արշինը 3-մանէթանոց, և 10 մանէթ էլ փող: Երկրորդ վաճառականը քանի՞ արշին մահաւազ տուեց:

**380.** Մի տուն շինելու համար հրաւիրեցին երեք կարգ արհեստաւոր. մի կարգը 17 հօդի էր, միւսը դորանից 5-ով աւելի: Քանի՞ մարդ կար երրորդ կարգումը, եթէ որ բոլորը միասին 58 հօդի էին:

**381.** Վաճառականը երկու տեսակ թէյ ուներ. առաջին տեսակի զրվանքան արժէր 4 մանէթ, իսկ միւս տեսակինը արժէր 3 մանէթ: Նա առաջին տեսակիցը վերցրեց

7 գրվանքայ և խառնեց երկրորդ տեսակի հետ, այնպէս որ բոլոր խառնած թէյը դուրս եկաւ 58 մանէթի: Խառնած թէյը ընդամենը քանի՞ գրվանքայ էր:

**382.** Աշակերտը ամառը 58 հատ բզէզ բռնեց և ասեղների ծայրը անցկացնելով դրեց երեք կողովում: Երկու կողովն բզէզները հաւասար էին, իսկ երրորդումը աւելի էր նոցա ամեն-մէկի բզէզներից: Եւրաքանչեւը կողովում քանի՞ բզէզ կար:

**383.** Երկու եղբայր իւրեանց մէջը 59 թերթ թուղթ բաժանեցին, այնպէս որ մինը միւսից 1 թերթ աւելի վերցրեց: Ամեն-մէկը քանի՞ թերթ վերցրեց:

**384.** Մի երեխայ 59 կոպէկ ուներ, որոնցով նա առաւ 7 մատիտ, մինը 4 կոպէկով. 5 էլ քարէզրէչ, մինը 3 կոպէկով. իսկ մնացած փողովը առաւ երկու տետրակ: Քանի՞ կոպէկ տուեց նա ամեն-մի տետրակին:

**385.** Ուսումնարանի համար երկու զլուխ շաքար առան, մինը 27 գրվանքայ էր, իսկ միւսը 5 գրվանքայ դորանից աւելի. առաջին շաքարը դուրս գնաց 15 գրվանքայ: Քանի՞ շաքար թաւահան կ'ընեն մնացած շաքարը, եթէ որ շաքարէնը դործ գնելին 11 գրվանքայ:

**386.** Մշակը նահանջ տարուայ Յունվար և Փետրվար ամիսներում բանեց տանտիրոջ մօտ և ամեն-մի բանած օրի համար ստացաւ 50 կոպէկ: Նա ընդամենը որքան փող ստացաւ, եթէ որ այդ երկու ամիսումը 10 օր տօն էր:

**387.** Երեխան 12 շայի ուներ. նա առաւ 3 տանձ, մինը 4 կոպէկով և 4 խնձոր մինը 6 կոպէկով: Նորա մօտ որքան փող մնաց:

**388.** Ես ունեմ 60 կոպէկ մի-շայանոցներ և երկու-շայանոցներ. բայց շայանոցները 4 անգամ աւելի են երկու շայանոցներից: Ես քանի՞ շայանոց ունեմ և քանի՞ երկու-շայանոց:

**389.** Մրդավաճառը 6 տանեակ խնձոր ուներ. որ դարսեց կողովների մէջ, ամեն-մէկում 12 հատ. Նա քանի՞ կողովում դարսեց:

**390.** Փոքր եղբայրը 60 ամսական էր, իսկ միւսը 3 տարով նորանից մեծ էր: Քանի՞ տարեկան էր մեծ եղբայրը:

**391.** Վարժապետը 60 մատիտ ուներ. դորանից նա առաջին դասատան աշակերտների ամեն-մէկին տուեց 2 հատ. իսկ մնացածը տուեց միւս դասատան 6 աշակերտին, ամեն մէկին 3 հատ: Առաջին դասատանը քանի՞ աշակերտ կար:

**392.** Մի մարդ երկու օր ու կէս ձննստարհ էր գնում. այդ միջոցին նա 17 ժամ քնեց, 9 ժամ էլ լիջւաններումը հանգստացաւ: Քանի՞ ժամ մանեկաւ:

**393.** Մի աշակերտ առաջարկեց միւսին 8 խնդիր, այն պայմանով, որ իւրաքանչեւը ուղիղ վճռած խնդրի համար տայ նորան 12 կահալ. իսկ ամեն-մի սխալ վճռածի համար նորանից ստանայ 6 կահալ աւելի: Նոցանից որը և քանի՞ կահալ տարաւ, եթէ որ առաջինը ուղիղ վճռեց 5 խնդիր:

**394.** Մի երեխան 15 բոպէումը քաշում է 11 արշին թել: Մի ժամումը քանի՞ արշին կ'քաշի:

**395.** Մի երեխայ ասում է միւսին՝ յ՛մ մէկ զրպանիս կահալը 2 անգամ աւելի է միւս զրպանիս կահալից, բայց եթէ առաջին զրպանիցս 10 հատ հանեմ և դնեմ երկրորդ զրպանու մն, այն ժամանակը ամեն-մի զրպանումս կ'ընի 30 կահալ: Նորա իւրաքանչեւը զրպանումը քանի՞ կահալ կար:

**396.** Մի երեխայ 4 բոպէումը վազում է 56 սաժէն, իսկ միւսը 5 բոպէումը վազում է 60 սաժէն: Նոցանից որն է շուտ վազում:

**397.** Ես մտքումս մի թիւ եմ բռնել, եթէ նորան

շատայնեմ 2 անգամ և վերան աւելցնեմ 8, այն ժա-  
մանակը կ'գառնայ 60: Աս ի՞նչ թիւ եմ բռնել մտքումս:

**398.** Ուսումնարանի երեք դասատան մէջ 60 ա-  
շակերտուհի կայ. առաջին և երկրորդ դասատանը հա-  
ւասար են, իսկ երրորդումը երկու անգամ փոքր են ա-  
ռաջուայ ամեն-մէկի աշակերտուհիներէց: Քանի՞ աշակեր-  
տուհի կայ իւրաքանչիւր դասատանը:

**399.** Ղոււի ժամանակը գործ էին տեսնում 3 թըն-  
դանօթ 4 ժամ և ամեն-մինը արձակվում էր մի ժամումը  
5 անգամ: Բոլոր թնդանօթները քանի՞ անգամ արձակվեցան:

**400.** Մի սայլ դուրս եկաւ քաղաքիցը առաւօտան  
7 ժամին և գնում էր մի ժամումը 4 վերստ, միւս սայ-  
լը դուրս եկաւ 12 ժամին և գնում էր մի ժամումը 6  
վերստ: Երկրորդ սայլը որ ժամին և քաղաքիցը քանի՞ վերստ  
հեռու կ'հասնի առաջին սայլին, եթէ որ նոքա երկուսն  
էլ ձանսպարհին հանդատացան 2 ժամ:

**401.** Գրասենեակում կարդ-կարդ դարած են 54  
գիրք՝ ամեն կարգումը հաւասար թւով: Քանի՞ կարդ էր  
և ամեն-մի կարգումը քանի՞ գիրք կար:

**402.** Երեխան 59 կահալ ունէր. այդ կահալները  
նա 4 անհաւասար բաժին արեց: Ամեն-մի բաժնումը քա-  
նի՞ կահալ կարող էր լինել:

**403.** Պատաւը եկեղեցի գնալիս 60 կոպէկ վերցրեց,  
որ մոմ առնի և պատկերների առաջը վառի: Նա քանի՞  
մոմ կարող է առնել և ի՞նչ գնանի:


**404.** Ղասը շարունակվում էր մի ժամ. աշա-  
կերաները դասի չորրորդ մասը գործ զրին մի յողուած  
կարգալու, երրորդ մասը գործ զրին կարգացածը լուծելու,  
իսկ մնացած ժամանակում կարգացածը զրեցին իւր-

եանց խօսքերով: Քանի՞ բոպէում զրեցին նոքա իւր-  
եանց խօսքերով:

**405.** Պատը 60 տարեկան էր, հայրը 2 անգամ  
նորանից փոքր էր, իսկ որդու տարիքը պատի տարիքի  
տասներորդ մասն էր: Հօր և որդու տարիքը միասին որ-  
քան են պակաս պատի տարիքից:

**406.** Ծառային տուել էին նորա վարձի երրորդ  
մասը և էլ 8 մանէթ: Նորան էլ ինքնան պէտք էր տալ,  
եթէ որ նորա բոլոր վարձը 60 մանէթ էր:

**407.** Գիւղացին իւր արուերկը վերցրեց 60 չեա-  
վերստ դարի. որի չորրորդ մասը տուեց իւր ձիաներին,  
երրորդ մասը վաճառեց, վեցերորդ մասը փոխեց խոտի հետ,  
տասներորդ մասը փոխ տուեց, իսկ մնացած դարին ցանեց  
հետեւեալ տարվայ համար և վերցրեց մէկին-վեց: Նա հե-  
տեւեալ տարումը քանի՞ չեալվերստ դարի վերցրեց:



Է.

Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր

**408.** Տունը երեք յարկանի է. երկրորդ և երրորդ  
յարկերի իւրաքանչիւրում կայ 22 պատուհան, իսկ ներ-  
քին յարկումը 5-ով պակաս է երկրորդից: Բոլոր երեք  
յարկումը քանի՞ պատուհան կայ:

**409.** Ծառան մնաց տանտիրոջ մօտ Մայիս և Յու-  
նիս ամիսները. օրէնը նա ստանում էր մի մանէթ, իսկ

ճաշին փող դուրս էին զայլս նորա սոճիկից շարժէնը 2 մանէթ. նորան կերակրեցին 8 շաբաթ: Ո՛րքան փող նա պէտք է ստանար դուրս դալու ժամանակ:

410. Երկու մարդ մահուտ առան. մինը առաւ 7 արշին, արշինը 4 մանէթով, իսկ միւսը առաւ 11 արշին ու բիշ տեսակից: Այդ բոլոր մահուտին նորա սուլին 61 մանէթ: Երկրորդ տեսակ մահուտի արշինը ո՞րքան արժէր:

411. Ես մտքումս բռնեցի երկու այնպիսի թիւ, որ եթէ նոցանից մինը կրկնեմ 5 անգամ, իսկ միւսը երկու անգամ. այն ժամանակը միասին դուրս կ'դաջ 61: Ես ինչ պիտի թուեր եմ բռնել մտքումս:

412. Մի մարդ ուներ 6 հաս Ֆրանսերէն զիրք, 4 անգամ դորանից աւել ռուսերէն զիրք, իսկ հայերէնը 2-ով աւել էր Ֆրանսերէնից և ռուսերէնից միասին: Նա ընդամենը քանի՞ զիրք ուներ:

413. Մի տեղ կային 27 տղամարդ և 35 կին, նոյանից 18 հոգի չէին պարու՛մ: Քանի՞ զոյգ էին պարողները և քանի՞ տղամարդ չէր պարու՛մ, եթէ որ զոյգը կազմու՛մ էր մի տղամարդից և մի կինարմատից:

414. Դերձակը 31 արշին մահուտ գնեց՝ արշինը 2 մանէթանոց. նա փողն մի մասը վճարեց, բայց կլի պարս մնաց 19 մանէթ: Նա ո՞րքան վճարեց:

415. Աշակերտը 62 երես կարգաց 4 ժամու՛մը, այնպէս որ իւրաքանչիւր հետեւեալ ժամու՛մը մի երես աւել էր կարգու՛մ նախորդ ժամու՛մ կարգացածից: Նա քանի՞ երես կարգաց վերջին ժամու՛մը:

416. Մշակը բանեց 4 շաբաթ և շաբաթէնը վաստակեց 8 մանէթ, միւս անգամ բանեց 3 շաբաթ և շաբաթէնը վաստակեց 7 մանէթ, երրորդ անգամը բանեց 2 շաբաթ և շաբաթէնը վաստակեց 5 մանէթ: Նա միջին թուով շաբաթէնը ո՞րքան վաստակեց:

բաթ և շաբաթէնը վաստակեց 5 մանէթ: Նա միջին թուով շաբաթէնը ո՞րքան վաստակեց:

417. Գիւղացին զիւղեցը ոտով հասաւ քաղաք 21 ժամու՛մը, իւրաքանչիւր ժամու՛մը զնալով 3 վերատ. բայց քաղաքիցը ձիով վերադարձաւ զիւղը 9 ժամու՛մը: Վերադառնալիս իւրաքանչիւր ժամու՛մը քանի՞ վերսա էր գնում:

418. Ուսումնարանու՛մը 63 ուսանող կար, միայն աշակերտները 6 անգամ աւել էին աշակերտուհիներուց: Քանի՞ աշակերտ և քանի՞ աշակերտուհի կար այդ ուսումնարանու՛մը:

419. Մի աշակերտ սովորու՛մ էր օրէնը 4 բառ, իսկ միւսը նորանից 3-ով աւել: Նոցանից իւրաքանչիւրը քանի՞ բառ սովորեց 9 օրու՛մը:

420. Այգու մէջ ծառերը անկած են կարգով, այնպէս որ իւրաքանչիւր հետեւեալ կարգու՛մ մի ծառ աւել է քան նախորդ կարգու՛մ: Քանի՞ ծառ կար առաջին կարգու՛մ, եթէ որ բոլորը 63 ծառ էր:

421. Մի մարդ գնեց մի ջահ, որ քաշու՛մ էր 19 զրվանքայ, և մի լսպտեր, որ քաշու՛մ էր 13 զրվանքայ: Նա դոցա ամեն-մի զրվանքին տուեց 2 մանէթ: Նա ո՞րքան վճարեց այդ երկու բանին:

422. Հացթուխը 8 տոպրակ ալիւր առաւ, ամենա մի տոպրակի ալիւրը քաշու՛մ էր 8 փութ. նա այդ ալիւրը ածեց 16 հաւասար տոպրակի մէջ: Իւրաքանչիւրի մէջ քանի՞ փուտ մտաւ:

423. Մրգավաճառը 64 խնձորը 3 կարգ դարսեց այնպէս, որ վերին կարգու՛մը 15 խնձոր էր, իսկ ներքին կարգու՛մը 28 խնձոր: Քանի՞ խնձոր կար միջին կարգու՛մը:

424. Գինեվաճառը մի տակառ ուներ, որ տանու՛մ

էր 64 շնչ: Այդ տակառը երկու խողովակ ունէր. մէկով կարելն էր լցնել տակառը 4 բողկումք: Իսկ միւսով կարելն էր լնքը տակառը դարդակել 8 բողկումք: Մի անգամ դարդակ տակառը զինի էին ածում, բայց 3 բողկեց յետոյ նկատելով որ երկրորդ խողովակն էլ բայց է մնացել և զինին դուրս է թափում, իսկոյն երկու խողովակն էլ կալան: Ո՞րքան զինի մնաց տակառումը և ո՞րքան վայր թափեց:

425. Մի դիւժին զգալ առան, որ քաշում էր 2 զրգանքայ: Ո՞րքան արժէին այդ զրգանքը, եթէ որ 8 լտը արժէր 7 մանէթ:

426. Երեք երեսայ փող վեր կկան և 64 արշին թել առան փռուանի համար, մինը տուեց դրա համար 5 կոպէկ, միւսը 7 կոպէկ, իսկ երրորդը 4 կոպէկ: Նուրաքանչիւր երեսան քանի՞ արշին թել պէտք է վերցնի:

427. Երկաթուղու զնայքը իւրաքանչիւր ժամում զնայով 32 վերտո՝ մի քաղաքից հասաւ միւսը 2 ժամումք: Ճանապարհորդը այդ տարածութիւնը քանի՞ ժամումը կերթայ, եթէ որ մի ժամումը զնայ 4 վերտո:

428. Գինեվաճառը 64 տակառ զինի տուն բերելու համար վարձեց սայլը և իւրաքանչիւրի վերայ զրեց 4 տակառ: Բողոր զինին բերելու վարձ ո՞րքան առեց, եթէ որ ամեն-մի սայլը վարձեց 3 մանէթով:

429. Վաճառականի մօտ ալիւր բերին 4 սայլով. ամեն-մի սայլն վերայ դրած էր 2 տոսրակ, որոնց իւրաքանչիւրի մէջը կար 8 փուտ: Այդ բոլոր ալիւրը ո՞րքան արժէր, եթէ որ 4 փուտը արժէր 3 մանէթ:

430. Տան լուսամուտներումը պէտք էր զցել տալ 65 ապակի. 4 լուսամուտի իւրաքանչիւրում 8 հաս, միւս

4 լուսամուտի իւրաքանչիւրում 6 հաս. մնացածն էլ պէտք է զցել շրջանաձև լուսամուտում: Քանի՞ ապակի պէտք է զցել շրջանաձև լուսամուտում:

431. Սայլը դուրս եկաւ մի քաղաքից առաւօտեան 5 ժամին և գնում էր իւրաքանչիւր ժամում 5 վերտո: Երեկոյեան ո՞ր ժամին կ'հասներ միւս քաղաքը, որ հեռու էր առաջինից 65 վերտո, եթէ որ ճանապարհին 5 ժամ հանգստանար:

432. Այդեպանը քաղեց 6 տաննակ խոշոր վարունկ, որոնց տաննակը արժէր 6 կոպէկ և 7 տաննակ մանր վարունկ, որոնց տաննակը արժէր 4 կոպէկ: Նա այդ երկու տեսակը միասին խառնեց և մի գնով վաճառեց ու աշխատեց բոլորի մէջ մի կոպէկ: Ամեն-մի տաննակը ո՞րքանով վաճառեց:

433. Վաճառականը 65 արշին մահուա ունէր. դրանից 27 արշին վաճառեց, ամեն-մի 3 արշինը 4 մանէթով. միւս անգամ վաճառեց 28 արշին, իւրաքանչիւր 4 արշինը 3 մանէթով. իսկ մնացածը վաճառեց 8 մանէթով: Այդ մահուտի ամեն-մի արշինը ո՞րքանով պէտք էր վաճառել, որ միևնոյն փողը ստացվեր:

434. Ես ունէի 65 կոպէկ զանազան դրամներ. այդ փողերը բաժանեցի աղքատներին այնպէս, որ ամեն-մէկին մի դրամ ընկաւ: Քանի՞ աղքատ էին և իւրաքանչիւրը ո՞րպիսի դրամ ստացաւ:

435. Տանտիկինը հինգ ու կէս դիւժին արծաթ է զգալ ունէր. որոնցից 36-ը թէյի էր, 15-ը սեղանի, իսկ մնացածը մուրաբի: Մուրաբի զգալները քանի՞նն էին:

436. 66 արշին քաթանից սփռոցներ շնեցին, ամեն-մինը 11 արշինից և իւրաքանչիւրը վաճառեցին 9 մանէթով: Ո՞րքան արժէին բոլոր սփռոցները:

**437.** Աշակերտը 66 զրիչ առաւ. որոնց 22 հասարակ էր 10 կոպէկ: Նա որքան վճարեց բոլոր զրիչներէ համար:

**438.** Ուսումնարանի երեք դասատան իւրաքանչիւրի մէջ կար 11 նստարան, որոնց ամեն-մէկի վերայ նրստած էին 2 աշակերտ: Այդ բոլոր աշակերտները խաղալու ժամանակը կարգ-կարգ կանգնեցին, ամեն-մի կարգումը 6 հոգի: Քանի՞ կարգ դուրս եկաւ:

**439.** Երկու երեխայ 66 կոպէկի տետրակներ առան հաւասար գնանի. նոցանից մինը վերցրեց 4 տետրակ, իսկ միւսը 7-ը: Իւրաքանչիւրը որքան վճարեց իւր տետրակներին:

**440.** Գերձակը 67 արշին մահառու ունէր. դորանից 39 արշին կտրեց սերտուկներ կարելու, ամեն-մէկի համար 3 արշին. իսկ մնացածից կտրեց վերարկուներ, մինը 4 արշինից: Գերձակը որքան կարելովորձ ստացաւ եթէ որ իւրաքանչիւր սերտուկի համար ստացաւ 3 մանէթ, իսկ վերարկուի համար 2 մանէթ:

**441.** Ուսումնարանումը 67 աշակերտուհի կային. դոցանից առաջին դասատանը 29 հոգի էին. երկրորդումը դորանից 6-ով պակաս, իսկ մնացածը երրորդումն էին: Երրորդ դասատանը քանի՞ աշակերտուհի կար:

**442.** Ես մտքումս բռնեց եմ մի թիւ, որի կիսի վերայ եթէ աւելացնեմ 38, կստանամ 67-ը: Ի՞նչ թիւ եմ բռնել մտքումս:

**443.** Աշակերտը գրքի 2 երեսը դուրս էր գրում տետրակի 4 երեսի վերայ: Նա գրքի քանի՞ երեսը դուրս գրեց, եթէ որ տետրակումը դուրս գրածը 68 երես էր:

**444.** Չորս գիւղացի 68 մանէթի գարի վաճառեցին: Ամեն-մէկին որքան փող կ'ընկնի, եթէ որ 3 տուր-

րակ մէկինն էր, 4-ը միւսինը, 5-ը երրորդինը և 5-ը չորրորդինը:

**445.** Վաճառականը 34 տուրակ ալիւր առաւ, տուրակը 2 մանէթով. դորանից 9 տուրակ նա վերցրեց իւր համար, իսկ մնացածը վաճառեց իւրաքանչիւր 5 տուրակը 12 մանէթով: Այն 9-ը տուրակը որ պահեց իւր համար որքան նստեց իւրեան:

**446.** Նախարպանը արածացնում էր 68 գլուխ տաւար. նոցա միջի կովերը 3 անգամ աւել լին հորդեւրից: Նախումը քանի՞ կով կար և քանի՞ հորդ:

**447.** Երեխան 68 կակալ դարսեց սեղանի վերայ 4 կարգ, այնպէս որ իւրաքանչիւր հեռեւեալ կարգում 2 կակալ աւել էր նախորդ կարգից: Քանի՞ կակալ կար առաջին կարգումը:

**448.** Մի տուն լուսաւորելու համար օրէնը դնում է 3 զրվանբայ նաւթ: Որքան նաւթ կ'երթայ 3 շաբաթում և 2 օրում:

**449.** Երկու ճանապարհորդ դուրս եկան երկու դանդան քաղաքներից և գնում էին միմեանց հանդէպ. այդ քաղաքները հեռու էին միմեանցից 69 վերստ: Նոցանից մինը մի ժամումը գնում էր 11 վերստ. իսկ միւսը 12 վերստ: Քանի՞ ժամից յետոյ նոքա միմեանց կ'պատահէին:

**450.** Մի քանի երեխայի 69 տանձ բաժանեցին. ոմանց ընկաւ չորս-չորս հատ, իսկ ոմանց հինգ-հինգ հատ: Քանի՞ երեխայ ստացան հինգ-հինգ հատ:

**451.** Ծառային տուլին 7 հատ երկու-շայանոց և պատուիրեցին որ կիտրոններ առնի, մինը 5 կոպէկով: Նա քանի՞ հատ կիտրոն պէտք է առնէր:

452. Տօներին աշակերտին պատուիրեցին, որ աշխարհադրութեան դասից կրկնի 35 թերթ. նա իւրաքանչիւր օր կրկնեց 7 երես, իսկ վերջի օրը զարձեալ կրկնեց բոլորը միասին: Քանի՞ օր էր տօն:

453. Մի երիտասարդ հրացան արձակել էր սովորում. նա 70 անգամ արձակեց և ամեն մի 14 անգամից 6 անգամ դիպցնում էր նշանին: Նա ընդամենը քանի՞ անգամ դիպցրեց նշանին:

454. Կալուածատէրը մի մշակ վարձեց 10 շաբաթով, այն պայմանով, որ օրէնք մի մանէթ տայ նորան: Երբ ժամանակը լրացաւ մշակը 38 մանէթ փող ստացաւ, իսկ մնացածին 8 չեափերա զարի: Ամեն մի չեափերա դարին յօրքան նստեց նորան:

455. Ուխտաւորը քաղաքիցը դուրս եկաւ առաւօտեան 6 ժամին և ճանապարհ ընկաւ դէպի գիւղը, նա գնաց մինչև երեկոյեան 8 ժամը. ճանապարհին հանգստանալով 6 ժամ: Միւս օրը նա դուրս եկաւ առաւօտեան 7 ժամին և հասաւ գիւղը երեկոյեան 7 ժամին հանգստանալով նոյնպէս 6 ժամ: Իւրաքանչիւր ժամում նա գնում էր 5 վերսա: Այնտեղից նա վերադարձաւ քաղաք երկաթուղով 2 ժամումը: Երկաթուղու շոգեկառքը մի ժամումը քանի՞ վերսա էր գնում:

456. Թղթափաճառը նամակի 7 ծրարը առնում էր 4 կուպէկով, իսկ ինքը փաճառում էր 10 հասար 7 կուպէկով: Նա յօրքան էր աշխատում 70 ծրարում:

457. Տան յարկի վերայ հաւասար խմբերով նստած էին 64 աղաւնի: Իւրաքանչիւր խմբումը քանի՞ աղաւնի կար:

458. Երեխան 66 կահալ բերեց ուսումնարան և հաւասար բաժանեց իւր ընկերներին: Նա քանի՞ ընկեր ունէր:

459. Քուչայի երկարութիւնը 67 սաժէն էր. մշակները քարեցին նորան 10 օրումը: Քանի՞ սաժէն էին քարում նոքա առաջին օրումը, երկրորդ օրումը, երրորդ և այլն:

460. Քանի՞ հաւասար անարակ կարելի է շինել 70 թերթ թղթից:


461. Գիւղացին փաճառեց 11 խող, մինը 6 մանէթով, էլ փաճառեց 12 հաւ, մինը քառորդ մանէթով: Նա յօրքան փող ստացաւ:

462. Երկաթուղով քանի՞ ժամումը կարելի է գնալ 64 վերսառ. եթէ որ մի քառորդ ժամումը գնան 8 վերսառ:

463. Մի տեղ 64 հողի էին հրախրած. դայառ թերորդ մասը գնուողական էին, տասմեցերորդ մասը փաճառական էին, չորրորդ մասը երկխալք էին, իսկ մնացածը կանայք: Քանի՞ կանայք կային այնտեղ:

464. Ի՞նչ փողի կիսով ես մի գրվանքայ սուրջ առայ, իսկ չորրորդ մասով մի գրվանքայ շաքար և սուրջին 16 կուպէկ աւելի սուի շաքարից: Ո՞րքան արժէք սուրջի գրվանքան:

465. Մրդափաճառը 70 խնձոր ունէր. նա դորս կէսը փաճառեց մէկի վերայ, հինգերորդ մասը միւսի վերայ, եօթերորդ մասը երրորդի վերայ, տասերորդ մասը չորրորդի վերայ. իսկ մնացած խնձորները ինքը կերաւ: Ինքը քանի՞ խնձոր կերաւ:





չանից ամեն-մէկը որքան պէտք է վերցնի, եթէ որ մինը տուեց 16 կուպէկ, միւսը 9 կուպէկ, իսկ երրորդը 11 կուպէկ:

**479.** Գիւղացի երեխան կամենում էր զանգակատան բարձրութիւնը իւնանալ, դորա համար նա չափեց նորա ստուերը և ակտաւ որ 24 արշին է. յետոյ մի փայտ ցցեց 6 արշինանոց և տեսաւ, որ նորա ստուերն էլ 2 արշին է: Ո՞րքան էր զանգակատան բարձրութիւնը:

**480.** Գիւղացին կամենում էր երկու տոպրակ ալ իւր կշռել առանձին-առանձին, բայց դորա համար նա ունէր միայն 3 քար, մինը 40 գրվանքանոց, միւսը 32 գրվանքանոց, իսկ երրորդը 10 գրվանքանոց: Երբ նա կշռի մի թաթումը դրեց երկու տոպրակը, իսկ միւսումը առաջին երկու քարը. այն ժամանակը կշիւր հաւասար կանգնեց, բայց երբ տոպրակները դրեց կշռի զանազան թաթերում և թեթեւ տոպրակի կողմը դրեց երրորդ քարը, այն ժամանակը կշիւր կրկին հաւասար կանգնեց: Ո՞րքան էր քաշում իւրաքանչիւր տոպրակը:

**481.** Ուրիշն 16 տարեկան է, հայրը 3 անգամ մեծ է նորանից, իսկ պապը 25 տարով մեծ է հօրիցը: Քանի՞ տարեկան է պապը:

**482.** Գիւղեցը մինչև քաղաքը 73 վերստ էր. զիւղացին դորանից 45 վերստ զնաց սայլով, ամեն-մի ժամումը 9 վերստ, իսկ մնացածը զնաց ոտով՝ ամեն-մի ժամումը 4 վերստ: Նա քանի՞ ժամումը հասաւ քաղաք:

**483.** Ուսումնարանի նստարանների վերայ կային 73 աշակերտ. նստարաններիցը մի քանիսը 2 տեղանի էին, իսկ միւսները 5 տեղանի: Այդ ուսումնարանումը քանի՞ նրստարան կար առաջին և երկրորդ տեսակից:

**484.** Մի կին եկեղեցուցը դուրս գալիս մտադիր էր

իւր փողերից տալ 13 աղքատի հինգ-հինգ կուպէկ. իսկ մնացած 9 կուպէկին միւրգ առնել իւր երեխանց համար, բայց տեսնելով որ աղքատները շատ են, նա ամեն-մէկին տուեց 2 կուպէկ և էլ փող չ'մնաց իւր մօտ: Ընդամենը քանի՞ աղքատ կար եկեղեցու մօտ:

**485.** Մի մարդ 5 խնձորին և 6 տանձին տուեց 49 կուպէկ, իսկ միւսը միեւնոյն զնով առաւ 10 խնձոր և 6 տանձ և տուեց 74 կուպէկ: Ո՞րքանով էին վաճառում տանձի և խնձորի տանեակը:

**486.** Ե՞ս ունեմ 74 կուպէկ փող. 3-կուպէկանոց և 5-կուպէկանոց: Քանի՞ հատ 3-կուպէկանոց ունեմ և քանի՞ հատ 5-կուպէկանոց:

**487.** Հայրը մեծ որդուն տուեց 5 հատ 3-շալանոց և հրամայեց որ հաւասար բաժանի իւր միւս 2 կողայրների հետ: Ամեն-մէկին քանի՞ կուպէկ կ'ընկնի:

**488.** Ճանապարհորդների շոգեկառքը 75 վերստը զնում է 3 ժամումը, իսկ ասպրանքի շոգեկառքը 5 ժամումը: Աթէ որ երկու շոգեկառքն էլ դուրս գան միասին՝ 2 ժամի միջոցում առաջինը որքան աւել կ'իրթայ երկրորդից:

**489.** Արհեստաւորը 75 գրվանքայ պղնձից շինեց ինքնակռներ, ամեն-միւրը 15 գրվանքից և վաճառեց իւրաքանչիւրը 12 մանեթով: Նա որքան փող ստացաւ:

**490.** Հինգ մշակը 4 շաբաթումը աշխատում են 75 մանեթ: Ո՞րքան կ'աշխատեն 4 մշակը 2 շաբաթում, եթէ որ բանն միեւնոյն պայմանով:

**491.** Մրգավաճառը 2 գրվանքայ խաղողը, որի առան-մի գրվանքան արժէր 21 կուպէկ, խառնեց 3 գրվանքայ խաղողի հետ, որի ամեն-մի գրվանքան արժէր 11 կուպէկ և վաճառեց այնպէս, որ ոչ օգուտ ստացաւ,

նէ քան: Նա խառնած խաղողին գրվանքան որքանով  
վաճառեց:

492. Հայրը մի որդուն տուեց 30 կոպէկ, իսկ միւ-  
սին 15 կոպէկ նորանից աւելի և հրամայեց երրորդ եղ-  
բոր հետ հաւասար բաժանեն: Նոցանից ամեն-մինը որ-  
քան պէտք է տայ երրորդ եղբորը:

493. Ի՞նչպիսի միատեսակ դրամներ կտան 75 կո-  
պէկին և քանի՞ հատ:

494. Երեք խումբ մշակ մի արիս փորելու համար  
ստացան 76 մանէթ: Իւրաքանչիւր խումբը որքան պէտք  
է ստանայ, եթէ որ առաջին խումբը 7 հոգի էր, իսկ  
միւսները վեց-վեց:

495. Սուրհանդակը դուրս եկաւ մի քաղաքից և զը-  
նում էր մի ժամումը 13 վերստ, իսկ միւս քաղաքից, որ  
դռանվում է առաջինից 76 վերստ հեռու, նորա հան-  
դէպ միւսնոյն ժամին դուրս եկաւ մի սայլ, որ մի ժամու-  
մը գնում էր 6 վերստ: Քանի՞ ժամից յետոյ նոքա կը  
հանդիպեն և որքան հեռու առաջին քաղաքից:

496. Երեք մարդ մի քանի աղքատի 76 կոպէկ  
տուին: Նոցանից մինը իւրաքանչիւրին տուեց 10 կոպէկ,  
միւսը 20 կոպէկ, իսկ երրորդը 8 կոպէկ: Ամեն-մինը որ-  
քան փող տուեց աղքատներին:

497. Գիւղացին ուներ 76 հատ երեք տեսակ թըւ-  
ռան, այսինքն բաղեր, սագեր և հաւեր. բաղերը և սագերը  
թուով հաւասար էին, իսկ հաւերը աւելի էին այդերկու տե-  
սակից միասին: Նա ամեն-մի տեսակից քանի՞ թռչուն ուներ:

498. Գիւղի բնակիչները 77 հոգի էին. կրկնաբըր  
2 անգամ պակաս էին կանանցից, իսկ տղամարդիքը 2  
անգամ աւելի էին: Քանի՞ երեխայ կար այդ գիւղումը:

499. Մի եղայրը առաւ 5 տասնեակ խնձոր, իսկ  
միւսը 2 տասնեակ և առաջինը 33 կոպէկ աւելի վճա-  
րեց երկրորդից: Նոքա միասին որքան տուին բոլոր  
խնձորներին:

500. Աւազանը տանում է 77 տակառ ջուր. նա  
ուճի երկու խողովակ, որոնցից մինը լցնում է նորան 7  
րոպէումը, միւսը դարդակում է 11 րոպէումը: Ո՞րքան  
ջուր կ'մնայ աւազանում, եթէ դարդակ աւազանի երկու  
խողովակն էլ բաց թողնեն 5 րոպէ:

501. Կալուածատէրը 77 օրավար հող ուներ, զո-  
րանից վարելահողը 2 անգամ աւելի էր արօտատեղեց, իսկ  
մնացածը ծածկուած էր անտառով: Նա քանի՞ օրավար  
վարելահող ուներ:

502. Պատի ժամացոյցը քանի՞ անգամ կ'զարկի 12  
ժամի ընթացքում, եթէ որ նորա զարկերը համարենք  
կէս օրից յետոյ:

503. Վաճառահանը 78 զրվանքայ շաքար ուներ  
ղլուխներով. ամեն-մի զլուխը քաշում էր 26 զրվանքայ.  
նա իւրաքանչիւր զլուխը փաճառեց 5 մանէթով: Ո՞րքան  
արժէր բոլոր շաքարը:

504. Պղնձգործը առաւ 6 հատ հին կաթնայ, ու-  
րոնց ամեն-մինը քաշում էր 13 զրվանքայ. նա իւրաքան-  
չիւրին տուեց 4 մանէթ. յետոյ զոցանից շինեց կնքնատե-  
ներ, մինը 39 զրվանքից և իւրաքանչիւրը փաճառեց 18  
մանէթով: Նա բոլորի մէջ որքան աշխատեց:

505. Հացթուխը երկու տեսակ ալիւր ուներ, մէկի  
զրվանքան արժէր 4 կոպէկ, իսկ միւսինը 5 կոպէկ: Նա  
առաջի տեսակից վերցրեց 6 զրվանքայ, իսկ երկրորդ տե-  
սակից 7 զրվանքայ. այդ բոլորը միասին խառնեց և հաց

Թխեց: Հացի զրվանքան ո՞րքանով պէտք է վաճառի նա, որ Թխելու վարձ ստանայ 19 կոպէկ:

**506.** Շոգեկառքը 78 վերստը զնաց 3 ժամում, այնպէս որ իւրաքանչիւր հետեւեալ ժամում 1 վերստ աւելի էր գնում նախորդ ժամից: Նա քանի՞ վերստ զնաց վերջին ժամումը:

**507.** Գիւղացի կինը մի աման կաթը բերեց քաղաք և վաճառեց 79 կոպէկով. այսինքն 5 շիշե ամեն-միւր վաճառեց 7 կոպէկով, իսկ քնացած ամեն-մի շիշը տուեց 11 կոպէկով: Քանի՞ շիշ կաթ կար նորա ամանում:

**508.** Իմ մէկ զրպանումը կայ 27 կոպէկ, իսկ միւսումը 25 կոպէկ աւելի: Քանի՞ կոպէկ պէտք է ածեմ ամեն-մի զրպանս, որ մէկի մէջ մի կոպէկ աւելի լինի միւսից:

**509.** Գինեվաճառը 5 տակառ զինի ունէր, ամեն-մէկի մէջ 16 վելլոս, նա այդ զինին ածեց 8 հաւասար տակառի մէջ: Իւրաքանչիւրի մէջ ո՞րքան զինի մտաւ:

**510.** Քաղաքիցը մինչև զիւղը 80 վերստ է մի սայլ քաղաքիցը ճանապարհ ընկաւ դէպի զիւղը և գնում էր մի ժամումը 6 վերստ, իսկ զիւղացին զիւղիցը դուրս եկաւ սայլե հանդէպ և գնում էր մի ժամումը 4 վերստ քանի՞ ժամից յետոյ նոքա միմեանց կ'պատահէ և պտտահետուց քանի՞ ժամ յետոյ զիւղացին կ'հասնի քաղաք, եթէ որ ճանապարհին հանգստանայ 8 ժամ:

751. Ոսկերիչը 26 լոտ և 2 մսխալ ոսկուց շինեց 4 քթախոտաման, որոնց ամեն-մինը քաշում էր 3 լոտ և 1 մսխալ, իսկ մնացած ոսկուցը շինեց օդեր, որոնց ամեն-մինը քաշում էր 1 լոտ և 2 մսխալ: Բոլոր

օդերը նա որքանով կ'ծախի, եթէ որ ամեն-մինը գին է գնում 10 մանէթ:

752. Չորս գրվանքայ և 12 լոտ արծաթից շինեցին մի թէյաման և մի շաքարաման հաւասար քաշով և 6 հատ թէյի գդալ, որոնց ամեն-մինը քաշում էր 3 լոտ և 2 մսխալ: Ո՞րքան էր քաշում շաքարամանը:

753. Երիւ մարդ միասին ունէին 8 փուռ 19 գրվանքայ 17 լոտ և 2 մսխալ պղինձ. երբ նոքա հաւասար վաճառեցին, այն ժամանակը մէկի մօտ մնաց 2 փուռ 4 գրվանքայ և 15 լոտ, իսկ միւսի մօտ մնաց 1 փուռ 30 գրվանքայ 24 լոտ և 2 մսխալ: Ամեն-մինը որքան պղինձ ունէր նախ քան վաճառելը:

754. Չորս արծաթէ գդալը և չորս բաժակը միասին քաշում էին 2 գրվանքայ 30 լոտ և 2 մսխալ և ամեն-մի բաժակը ծանր էր գդալից 2 լոտ և 1 մսխալ: Ո՞րքան էր քաշում ամեն-մի բաժակը և գդալը:

755. Երեք զիւզացի միասին վաճառեցին 15 փուռ և 11 գրվանքայ ալիւր մի գնով: Մէկը իւր ալիւրի համար ստացաւ 6 մանէթ, միւսը 3 մանէթ և երրորդը 4 մանէթ: Նոյանից ամեն-մինը որքան ալիւր վաճառեց:

756. Հինգ ձիւռն մի շաքթումը տուին 12 փուռ և 10 գրվ. խոտ: Ամեն-մի ձիւռն օրէնը որքան խոտ էին տալիս:

757. Աւետրականը գնեց 8 փուռ ձէթ. այդ ձէթից նա ածեց 5 ամանի մէջ ամեն-մէկում 18 գրվանքայ և 12 լոտ, իսկ մնացածը ածեց 4 հաւասար ամանների մէջ: Արջին ամեն-մի ամանի մէջ որքան ձէթ մտաւ:

ԺԴ.

ԽՆԴԻՐՆԵՐ 100-ից ՄԵՏ ԹՈՒԵՐՈՎ,

Ա.

ԲԵՐԱՆԱՅԻ ՎՅՌԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

1—1000

758. Մրգավաճառը ունէր 10 թարախ խնձոր. ամեն-մի թարախումը 3 տասնեակ. առաջին օրը նա վաճառեց 2 հարիւր, հարիւրը՝ մի մանէթով, միւս օրը վաճառեց մնացածը, իւրաքանչիւր տասնեակը 2 շայով: Նա ո՞րքան փող ստացաւ իւր խնձորների համար:

759. Տոպրակումը կար 28 տասնեակ վարունի. դարձից 1 հարիւր աղ դրին, իսկ մնացածից օրէնը կերան 10 հատ: Քանի՞ օրումը կերան մնացածը:

760. Գիւղային տանում էր վաճառելու 4 հարիւր ձու. ձանապարհին նա 3 տասնեակ կոտրատեց, մնացածից 2 հարիւր և 5 տասնեակ վաճառեց, տասնեակը 20 կոպէկով, իսկ մնացած մանրերը վաճառեց, հարիւրը՝ մի մանէթով: Նա ո՞րքան փող ստացաւ:

761. Այգեպանը վաճառեց 8 հարիւր վարունի, իւրաքանչիւր տասնեակը 8 կոպէկով: Նա ո՞րքան փող ստացաւ:

762. Քանի՞ օր բաւական կլինի 10 ձիուն 100 չետ վերիկ գարին, եթէ որ օրէնը ամեն-մի ձիուն տան 1 գարնց:

763. Երկու գրազրի առին 8 մանէթ, որ մի գիրք արտադրին. նոցանից մինը արտադրեց 4 օր, իսկ միւսը 6 օր: Նոցանից ամեն-մինը ո՞րքան ստացաւ իւր աշխատանքի համար:

764. Այգեպանը վաճառեց 1000 խնձոր, ամեն-մի հարիւրը 2 մանէթով: Նա ո՞րքանով վաճառեց բոլոր խնձորը և տասնեակը ո՞րքան արժէր:

765. Ճանապարհորդը օրէնը քանի՞ վերստ պէտք է անի, որ 10 օրումը դնայ 1000 վերստ:

766. Մրգավաճառը ունէր 1000 վարունի, դորանից միանգամ վաճառեց 3 հարիւր, միւս անգամ վաճառեց 34 տասնեակ և 4 հատ: Նորա մօտ քանի՞ վարունի մնաց:

767. Մրգավաճառը դնեց 5 հարիւր խնձոր, հարիւրը՝ 3 մանէթով, իսկ ինքը վաճառում էր տասնեակը 50 կոպէկով: Նա ո՞րքան աշխատեց, եթէ որ 4 տասնեակ փչացել էր:

768. Մի արկղում կար 276 կիտրոն, որոնց տասնեակը արժէր 60 կոպէկ: Ո՞րքան արժէր բոլորը:

769. Այգեպանը քաղեց 385 վարունի և վաճառեց հարիւրը 2 մանէթով: Նա ո՞րքան փող ստացաւ բոլորի համար:

770. Վաճառականը ծախեց 426 մատիտ, մինը 3 կոպէկով: Նա ո՞րքան փող ստացաւ:

771. Ծառային երկու անգամ ուղարկեցին միրգ առնելու. առաջի անգամը նա առաւ 10 տանձ և 20 խնձոր և տուեց 1 մանէթ 20 կոպէկ, իսկ միւս անգամ նա մեկնոյն մրկցը վերցրեց 10 տանձ և 30 խնձոր և տուեց 1 մանէթ 50 կոպէկ: Ո՞րքան արժէր ամեն-մի տանձը և խնձորը:

772. Մրգավաճառը ունէր երկու արկղ միրգ. մէկումը կար հարիւր խնձոր և 5 հարիւր տանձ, այդ բոլորը արժէր 23 մանէթ. միւս արկղումը կար հարիւր խնձոր և 4 հարիւր տանձ, այդ բոլորն էլ արժէր 19 մանէթ: Ո՞րքան արժէր խնձորի և տանձի տասնեակը:

773. Մրգավաճառը ունէր 40 տասնեակ խնձոր, որոնցից նա վաճառեց 3 հարիւր, ամեն-մի հարիւրը 90

կուպէկով, իսկ մնացածի տասնեակը վաճառեց 10 կուպէկով: Եւ ընդամենը ո՞րքան փող ստացաւ:

774. Մի մարդ առաւ 36 տասնեակ վարունկ, կրկին առաւ 3 տուրակ, որոնց ամեն-մէկի մէջ կար 15 տասնեակ. այդ վարունկները նա աղ դրեց 9 հաւասար տակաւում: Ամեն-մի տակաւումը քանի՞ վարունկ մտաւ:

775. Վաճառականը առաւ 5 հարիւր կիտրոն, հարիւրը՝ 4 մանէթով. դոցանից 3 տասնեակ փչացաւ, մնացածից 2 հարիւր և 4 տասնեակ վաճառեց, տասնեակը 60 կուպէկով. իսկ մնացած մանրերը վաճառեց տասնեակը 50 կուպէկով: Եւ ո՞րքան աշխատեց:

776. Երեք մանէթանոցը պէտք է մանրացնել սպիտակ փողով. այնպէս որ 20 հատ մի տեսակ դրամից լինի և 5 հատ միւս տեսակից: Ո՞րպիսի դրամներ պէտք է լինեն:

777. Երեք հատ 3-մանէթանոց թղթադրամը ո՞րպիսի և քանի՞ միատեսակ սպիտակ կամ սև փողէ հետ կարելի է փոխել:

778. Ես առայ 8 զիրք, մինը 50 կուպէկով և տուի 10 մանէթանոց, աւելորդ փողը յետ տուին ինձ 2-շայանոցներով: Ես քանի՞ 2-շայանոց ստացայ:

779. Ես առայ մի քանի զիրք և ամեն-մի տուած մանէթիցս յետ ստացայ մի սպասի. իմ բոլոր յետ ստացածս 80 կուպէկ էր: Ես ո՞րքան փող տուեցի զրքերին:

780. Պարտարանի համար զրքեր առան. ուսերէն զրքերին այնքան 2-շայանոց տուին, որքան Ֆրանսերէնին կուպէկանոցներ, իսկ հայերէնին այնքան մանէթ տուին, որքան Ֆրանսերէնին շայանոցներ: Ո՞րքան փող տուին բոլոր զրքերին, եթէ որ Ֆրանսերէն զրքերը արժէին 2 մանէթ և 55 կուպէկ:

781. Ես 6 մանէթ սպիտակ փող ածեցի 2 արկղէ մէջ. քանի հատ սպասանոց ածեցի մէկի մէջ, այնքան էլ 2-շայանոց ածեցի միւսի մէջ: Քանի՞ մանէթ կար ամեն-մի արկղումը:

782. Մի մարդ աղքատներին բաժանեց 2 մանէթ. նոցանից 14 հողի ստացան երկու-երկու շայի, իսկ մնացածները երեք-երեք շայի: Ընդամենը քանի՞ աղքատ փող ստացան:

783. Տասներկու մշակ իւրեանց աշխատանքի համար միասին ստացան 6 հատ մանէթանոց և մանրացրին 5-շայանոցներով: Ամեն-մէկին քանի՞ հատ 5-շայանոց կ'ընկներ:

784. Իւրաքանչիւր 12 օրումը ասնտիկները խոհարարին տալիս էր 3 մանէթ և 60 կուպէկ կանաչեղէնի փող: Ո՞րքան փող կ'երթար 4 ամումը:

785. Երկու մարդ աղքատներին բաժանեցին միասին 3 մանէթ, մինը ամեն-մէկին տուեց մի-մի շայանոց, իսկ միւսը երեք-երեք շայանոց: Քանի՞ աղքատ էին և ամեն-մինը ո՞րքան փող տուեց:

786. Իմ երկու զրպանումը կայ 9 մանէթ փող. որքան մէկումը 1 շայանոցներ են, այնքան էլ միւսումը 5-շայանոցներ են: Իմ իւրաքանչիւր զրպանումը ո՞րքան փող կայ:

787. Պործարանումը բանող 5 աղամարդից իւրաքանչիւրին տալիս են օրէնը 80 կուպէկ, իսկ 5 կինարմատից իւրաքանչիւրին տալիս են 40 կուպէկ: Այդ բոլոր բանուորները ո՞րքան կստանան 30 օրումը:

788. Երկրագործը կամենում էր ցանկով պատել իւր հողը, որի երկարութիւնը էր 120 սաժէն, իսկ լայնութիւնը 60 սաժէն: Ո՞րքան կ'ընկեր ցանկի երկարութիւնը:

789. Երկու մարդ զուրս զարով երկու զանազան

քաղաքներից՝ ձանապարհին հանդիպեցին միմեանց. նոցա-  
նից մինը զնացել էր 20 ժամ, ամեն-մի ժամումը 6 վերստ,  
իսկ միւսը գնացել էր 30 ժամ, ամեն-մի ժամումը 5 վերստ:  
Ո՞րքան էր այդ քաղաքների հեռաւորութիւնը:

790. Երբ զնդակը զարկեցին զեանին նա թռաւ 120  
տաժէն, յետոյ զեանին զիպչելով կրկին թռաւ առաջու-  
անից 4 անգամ պակաս, յետոյ 6 անգամ պակաս, դարձ-  
եալ 10 անգամ պակաս և զիպաւ չափարին: Ընդամենը  
հրքան տեղ զնաց զնդակը:

791. Մրդավաճառը ունէր 6 հարիւր կիտրոն. դոցա  
մի մօտը նա հաւասար դարսեց 12 թաբախում, իսկ մնա-  
ցած 120-ը դարսեց ուրիշ թաբախներում, ամեն-մէկում  
10 հատ: Առաջի թաբախներից իւրաքանչիւրում քանի՞  
կիտրոն դարսեց և վերջի թաբախները քանի՞ հատ էին:

792. Երկաթը տուն տանելու համար պէտք էր 20  
ձի, եթէ որ իւրաքանչիւրի վերայ զնէին 40 փուտ: Ո՞ր-  
քան ձի հարկաւոր կ'լինէր այդ քանի համար, եթէ որ ա-  
մեն-մի ձիու վերայ զնէին 50 փուտ:

793. Հարկաւոր էր 8 աղքատ գերդաստանի հաւա-  
սար բաժանել 480 մանէթ, բայց երկու գերդաստուն էլ  
աւելացան: Առաջուայ ամեն-մի գերդաստանին հասնելու  
փողից հրքան պէտք է վերցնել դոցա համար, որ ամեն-  
մէկին հաւասար հասնի:

794. Իմ մի արկղումը կայ 180 մանէթ, իսկ միւ-  
սումը դորանից աւելի. եթէ ես երկրորդ արկղումը էլի դը-  
նեմ 120 մանէթ, այն ժամանակը դորանում Յանգամ աւելի  
կ'լինի առաջինից: Այժմ ո՞րքան փող կայ իմ երկու զրպանումս:

795. Երկու կառապան ձիաները քշեցին, որ մի-  
մեանց առաջը ընկնեն. մէկի ձին մի րոպէումը վազում էր

80 տաժէն, իսկ միւսինը 3 րոպէումը վազում էր 270  
տաժէն: Նոցանից ո՞րը առաջ կ'ընկնէր և ո՞րքան, եթէ որ  
քշէին 8, 10, 11 րոպէ:

796. Թուրք երկարութիւնը էր 800 արշին: Քանի՞ ան-  
գամ դորա երկու ծայրիցը կարելի է կտրել երեսուն-երե-  
սուն արշին, որ էլի մնայ 80 արշին:

797. Երեք երեխայ միասին ունէին 600 կահալ,  
բայց երբ հաւասար կերան, այն ժամանակը մէկի մօտ մնաց  
120 հատ, միւսի մօտ 150, իսկ երրորդի մօտ 180: Ա-  
մեն-մինը քանի՞ կահալ ունէր:

798. Քանի՞ անգամ 200 մեծ մեխը ծանր կ'լինի  
300 փոքր մեխից, եթէ որ մեծ մեխերի 40-է քաշում մի  
զրվանքայ, իսկ փոքրերի 60-ը:

799. Վաճառահանը 120 զոյդ ձեռնոցներին տուեց  
100 մանէթ. դոցանից վաճառեց 70 զոյդ, զոյզը՝ 1 մա-  
նէթով: Մնացածի իւրաքանչիւր զոյզը հրքանով պէտք է  
վաճառի, որ բոլորի մէջը աշխատի 20 մանէթ:

800. Ութ աշակերտ առան կահալներ, ամեն-մինը  
125 հատ. ուսումնարան գնալով նոքա իւրեանց 9 ըն-  
կերներից իւրաքանչիւրին տուեցին 40 հատ: Ութ աշա-  
կերաններից իւրաքանչիւրի մօտ քանի՞ հատ մնաց:

801. Երեք երեխայ միասին առան 600 կահալ. դո-  
րա համար մինը տուեց 30 կոպէկ, միւսը 25 կոպէկ, իսկ  
երրորդը 45 կոպէկ: Ամեն-մինը քանի՞ կահալ պէտք է վերցնի:

802. Քուչան քարում էր 2 խումբ մշակ հաւասար  
թւով. առաջին խմբի ամեն-մի մշակը օրէնը ստանում էր  
70 կոպէկ, իսկ երկրորդինը 60 կոպէկ. Քուչայի քարելը  
աւարտեցին 10 օրումը և առաջի խումբը 8 մանէթ ա-

և ին ստացաւ երկրորդ խմբից: Խւրաքանչիւր խումբը քանի՞ հոգի էր:

**803.** Շողենաւը և մակոյիը միասին դուրս եկան և գնում էին մի տեղ. շողենաւը մի բոպէումը գնալով 40 սաժէն՝ 25 բոպէից յետոյ հասաւ նշանակեալ տեղը. բայց մակոյիը տակաւին հեռու էր այդ տեղից 400 սաժէն: Մակոյիը մի բոպէումը քանի՞ սաժէն էր գնում:

**804.** Սուբհանշախը դուրս եկաւ մի քաղաքից առաւօտեան 11 ժամին և իւրաքանչիւր ժամումը գնում էր 12 վերստ. իսկ երեկոյեան 9 ժամին նորա ետեկցը դրնաց միւս սուբհանդակ, որ մի ժամումը գնում էր 15 վերստ: Երկրորդը քանի՞ ժամից յետոյ և քաղաքիցը որքան հեռու կ'հասնէր առաջինին:

**805.** Շունը ընկաւ նապաստակի ետեկց, որ 200 Ֆուտ հեռու էր նորանից. երբ շունը գնում էր 10 Ֆուտ, նապաստակը գնում էր 8 Ֆուտ: Շունը քանի՞ ոստումնից յետոյ կ'հասնի նապաստակին, եթէ որ նորա ոստումը հաւասար է 2 Ֆուտին:

**806.** Մրդավաճառը ունէր 12 զրվանքայ խաղող, որի զրվանքան արժէր 20 կոպէկ. էլի ունէր 8 զրվանքայ ուրիշ տեսակից, որի զրվանքան արժէր 15 կոպէկ. նա այդ խաղողները միմեանց հետ խառնեց: Նա խառնածի իւրաքանչիւր զրվանքան որքանով պէտք է վաճառի, որ ոչ վնաս անի, ոչ օգուտ:

**807.** Գիւղացին առաջին տարին իւր արտիցը վերցրեց 10 տոպրակ զարի, ամեն-մի տոպրակումը կար 2 չեովերտ, իսկ երկրորդ տարին վերցրեց 70 տոպրակ, որոնց ամեն-մէկումը կար 3 չեովերիկ: Նա որ տարին աւելի վերցրեց և որքան:

**808.** Կշռի մի թաթումը դրած էր 110 զրվանքայ,

միւսումը 150 զրվանքայ: Կշռի ամեն-մի թաթումը քանի՞ զրվանքայ պէտք է նորից դնել, որ երկուսումն էլ հաւասար լինի և բոլորը միասին լինի 8 փուտ:

**809.** Երկու երեխայ թոկերով չափում էին դաշտի երկարութիւնը հակառակ ծայրերից. մէկի թոկի երկարութիւնը էր 5 սաժէն, իսկ միւսինի երկարութիւնը 12 արշին, երբ առաջին երեխան իւր թոկը ձգեց 30 անգամ, իսկ երկրորդը 40 անգամ, այն ժամանակը էլի մնաց 70 արշին տեղ: Քանի՞ արշին էր դաշտի երկարութիւնը:

**810.** Ուսումնարանի համար առան 3 զրվանքայ 12 մխալ թէյ. այդ թէյը դուրս գնաց 5 շաբաթումը, ամեն-մի երեխայի համար շաբթէնը գնում էր 3 մխալ: Քանի՞ երեխայ կար այդ ուսումնարանումը:

**811.** Ական շրջապատն է 2 սաժէն և նա 3 վայրկենում անում է մի պտոյտ: Ո՞րքան տեղ կերթայ նա 10 բոպէումը:


**812.** Չիաների համար առան երեք տոպրակ զարի. որոնց մէկումը կար 2 չեովերտ, միւսում 1 չեովերտ և 6 չեովերիկ, իսկ երրորդումը 1 չեովերտ և 2 չեովերիկ: Քանի որ բաւական կ'լինի այդ զարին, եթէ որ օրէնը դուրս է գնում 1 չեովերիկ և 2 զարնց:

**813.** Արհեստաւորը ունէր 260 զրվանքայ պղինձ. նա դորանից շինեց այնքան խողովակներ, որքան կարող էր դուրս գալ, մինը 1 փութից և 30 զրվանքից, իսկ մնացած պղինձը վաճառեց փուտը 16 մանէթով: Նա որքան փող ստացաւ մնացած պղնձի համար:

**814.** Ժամացոյցը մի ժամումը յետ էր մնում 3 բոպէ. առաւօտեան 8 ժամին նորան ուղիղ կանգնեցրին: Նա որքան ցոյց կտայ կէս օրին, 3 ժամին 30 բոպէին, 6 ժամին և 40 բոպէին:

**815.** Ես դուրս եկայ կէս օրից յետոյ 6 ժամին և 40 թուղէին և մանեկայ 2 վերստ. ամեն-մի թուղէում ես անում էի 30 քայլ և իմ քայլը հաւասար է 1 արշինին: Ես ո՞ր ժամին վերադարձայ տուն:

**816.** Հեռագրական լարը քաշած է 4 վերստ տեղ: Քանի՞ սիւն կայ ցցած այդ տարածութենում, եթէ որ մի սիւնը հեռու էր միւսից 20 սաժէն:



Բ.

Գրաւոր խնդիրներ չորս գործողութեան իւրաքանչիւրի վերայ առանձին:

### Գ Ո Ւ Ս Ա Ր Ո Ւ Ս Ն

**817.** Մի շոգեկառքում դրած էր 345 փուտ ավեր, միւսում 498 փուտ, իսկ երրորդում 518 փուտ: Ընդամենը քանի՞ փուտ էր դրած:

**818.** Երկաթուղի շինելու համար վարձեցին 728 հողհատ, 354 որմնադիր, 128 դարբին, 157 հիւան և 98 ջրբեր: Ընդամենը քանի՞ մարդ էր վարձած:

**819.** Պատերազմումը մասնակցում էին հինգ զորաբաժին. կովեցը յետոյ մի զորաբաժնում մնաց 736 զինուոր, միւսում 925, երրորդում 637, չորրորդում 798, իսկ հինգերորդում 589: Ո՞րքան զինուոր մնաց կովեց յետոյ:

**820.** Ճանապարհորդը ձիով գնաց 3586 վերստ, շողենաւով 8964 վերստ, իսկ երկաթուղով 9576 վերստ: Նա քանի՞ վերստ մանեկաւ:

**821.** Մի մարդ իւր տունը ծախեց 35640 մանեթով և միջ աշխատեց 7960 մանեթ: Նա ո՞րքանով ծախեց առելը:

**822.** Հինգ վաճառական միասին առուտուր սխեցին. մինը դորա համար վեր եկաւ 7580 մանեթ, միւսը 14890 մանեթ, երրորդը 24560 մանեթ, չորրորդը 23540 մանեթ, իսկ հինգերորդը 37430 մանեթ: Նոքա բոլորը միասին ո՞րքան փող վեր եկան:

**823.** Երկաթուղին առաջի տարին բերեց 36829 մանեթ զուտ արդիւնք, երկրորդ տարին 54367 մանեթ, երրորդ տարին 82754 մանեթ և չորրորդ տարին 127586 մանեթ: Բոլոր չորս տարումը ո՞րքան արդիւնք ստացվեց:

**824.** Մի նահանգ 9 դաւառ ուներ. մի դաւառի բնակիչները թիւն էր 599418, միւսինը 100586, երրորդինը 80817, չորրորդինը 77454, հինգերորդինը 57894, վեցերորդինը 103068, եօթերորդինը 38560, ութերորդինը 57978 և յններորդինը 45155: Ընդամենը քանի՞ բնակիչ կար այդ նահանգում:

**825.** Եւրոպական Ռուսաստանում համարվում է 65 միլիօն 500 հազար բնակիչ, Յինդանդիայումը 2500 հազար, Վիսլեան երկրներում 5 միլիօն, Սիբիրիայում 4500 հազար և Կովկասում 3500 հազար: Ռուսաց բոլոր կայսերութեան մէջ ո՞րքան բնակիչ կայ:

**826.** Առաջին քաղաքից մինչև երկրորդը 1362 վերստ է, իսկ երկրորդից մինչև երրորդը 604 վերստ է: Ճանապարհորդը քանի՞ վերստ պէտք է անի, որ առջին քաղաքիցը հասնի երրորդ քաղաքը և կրկին վերադառնայ:

**827.** Մի կայուածատէր իւր խոտհարքիցը վերցրեց 32568 փուտ խոտ, իսկ միւսը 9564 փուտ նորանից աւելի: Երկուսը միասին քանի՞ փուտ խոտ վերցրին:

**828.** Հօր թողած ժառանգութիւնից առաջին որդին վերցրեց 7560 մանեթ, երկրորդը 6470 մանեթ, իսկ

աղջկեր այդ երկուսի չափ: Ո՞րքան էր բոլոր ժառանգութիւնը:

**829.** Այլուածատէրը մի տեղ ունէր 2348 օրավար հող, միւս տեղ 456 օրավար առաջնից աւելի, իսկ երրորդ տեղում այդ երկուսիցը 938 օրավար աւելի: Նա ընդ ամենը քանի՞ օրավար հող ունէր:

**830.** Շաքարի գործարանը առաջի տարին տուեց 23648 մանէթ արդիւնք, իսկ իւրաքանչիւր հետեւեալ տարին 4578 մանէթ աւելի էր բերում նախորդ տարուց: Ընդամենը որքան արդիւնք ստացվեց 6 տարումը:

**831.** Մի շոգենաւի վերայ բարձած էր 5846 չեւ վերտ ցորեն, միւսի վերայ 356 չեւ վերտ առաջնից աւելի, երրորդի վերայ առաջին երկուսի չափ, իսկ չորրորդի վերայ 748 չեւ վերտ երկրորդիցը աւելի: Ընդամենը որքան ցորեն էր բարձած չորս շոգենաւի վերայ:

**832.** Այլուածատէրը իւր մի կալուածը ծախեց 56780 մանէթով, իսկ միւսը 3 անգամ դորանից աւելով, էլ ծախեց միտուն 18960 մանէթով և մի մահուտի գործարան դորանից 2 անգամ աւելով: Այդ բոլորը որքանով ծախեց:

**Հ Ա Ն Ո Ւ Մ Ն**

**833.** Երկու ուսու մնարանում միասին կային 936 աշակերտ և դոցանից մէկում 428 հոգի էին: Քանի՞ մն էին միւսումը:

**834.** Առաջին քաղաքից մինչև երկրորդը 489 վերստ էր, իսկ մինչև երրորդ քաղաքը 1093 վերստ էր: Ճանապարհորդը առաջին քաղաքից հասաւ երկրորդը: Քանի՞ վերստ էր մնացել, որ նա հասնէր երրորդ քաղաքը:

**835.** Լճի խորութիւնը չափելու համար 1257 սաժէն թռկի ծայրիցը քար կապեցին և շոգենաւի վերայից թողեցին ջրի մէջ, երբ թռկի ծայրը հասաւ յատակին,

շոգենաւի վերայ էլի մնաց 439 սաժէն թռկ: Ո՞րքան էր լճի խորութիւնը այդ տեղում:

**836.** Շինութեան համար առան 150 հազար աղիւս, բայց դորժ դրին միայն 128596 հատ: Քանի՞ աղիւս մնաց:

**837.** Մի մարդ երկու տուն առաւ 72640 մանէթով, որոնցից մինը արժէր 23560 մանէթ: Ո՞րքան արժէր միւս տունը:

**838.** Մի նահանգում կար 1160930 բնակիչ, իսկ միւսում 1678784 բնակիչ: Երկրորդ նահանգի բնակիչները քանի՞ սով էին աւելի առաջնից:

**839.** Վաւօղի մի գործարանումը մի տարվայ ընթացքում պատրաստեցին 82564 զրվանքայ վառօդ, իսկ միւսում 115623 զրվանքայ: Երկրորդ գործարանումը քանի՞ զրվանքայ առաջնից աւելի պատրաստեցին:

**840.** Ամբողջ նահանգի բնակիչները 1521577 հոգի էին, որոնցից զաւառներումը 1395935 հոգի էին: Քանի՞ բնակիչ կար նահանգական քաղաքումը:

**841.** Սուրհանդակը չորս օրումը զնաց 1100 վերստ, առաջի օրը զնաց 256 վերստ, երկրորդ օրը 283 վերստ և երրորդ օրը 272 վերստ: Նա քանի՞ վերստ զնաց չորրորդ օրը:

**842.** Քուչայի երկարութիւնը 485 սաժէն էր, դորան քարեցին 4 ամսումը, առաջին ամսումը քարեցին 126 սաժէն, երկրորդում 97 սաժէն, երրորդում 135 սաժէն, իսկ մնացածը աւարտեցին չորրորդ ամսումը: Քանի՞ սաժէն քարեցին չորրորդ ամսումը:

**843.** Վաճառականը երեք մարդի պարտ էր 82546 մանէթ. մէկին պարտ էր 9645 մանէթ, միւսին 27966 մանէթ, իսկ մնացածը պարտ էր երրորդին: Նա որքան էր պարտ երրորդին:

**844.** Վաճառականը առուտուր սկսեց 58600 մա-

նէթով և առաջի տարին աշխատեց 2375 մանէթ, երրորդ տարին մնաս արաւ 3647 մանէթ, երրորդ տարին աշխատեց 1258 մանէթ, իսկ չորրորդ տարին մնաս արաւ 4567 մանէթ: Նա այժմ քանի՞ մանէթ ունի առուտուրի մէջ:

**845.** Եւրոպան 180 հազար քառակուսի մղոն է, Ասիան 880 հազար, Ափրիկան 545 հազար, Ամերիկան 672 հազար, Աւստրալիան 160 հազար. իսկ երկրագնդի բոլոր մակերևոյթն է 9 միլիոն և 250 հազար քառակուսի մղոն: Քանի՞ քառակուսի մղոն տեղ են բռնում ովկիանոսները:

**846.** Մի նահանգ ունի 1497995 բնակիչ, դոցանից մի գաւառում կար 279408 բնակիչ, միւսում 136359, երրորդում 353312, չորրորդում 257666, հինգերորդում 134805, իսկ մնացածն էր վեցերորդում: Քանի՞ բնակիչ կար վեցերորդ գաւառում:

**847.** Մի նաւով բերին 426 սաժէն փայտ, միւսով 38 սաժէն դորանից աւելի, իսկ երրորդով 69 սաժէն սպիտակ երկրորդից: Այդ բոլոր փայտից վաճառեցին 897 սաժէն: Ո՞րքան փայտ մնաց նաւերի վերայ:

**848.** Հայրը իւր երեք աղին և երկու աղջկանը 56420 մանէթ ժառանգութիւն թողեց. դորանից մորդին վերցրեց 10840 մնթ, միւսը 12560 մանէթ, երրորդը 3849 մանէթ երկրորդիցը պակաս. մի աղջիկը ստացաւ 8570 մանէթ, իսկ երկրորդ աղջիկը մնացածը: Երկրորդ աղջիկը ո՞րքան ստացաւ:

**849.** Կապալառուն շինեց երեք երկաթուղի և այդ բոլորի համար ստացաւ 16578342 մանէթ. դոցանից մէկի համար ստացաւ 8274375 մանէթ, միւսի համար դորանից 2896587 մանէթ պակաս, իսկ մնացածը ստացաւ երրորդի համար: Նա ո՞րքան ստացաւ երրորդ ճանապարհի համար:

Բ Ա Ջ Մ Ա Պ Ա Յ Կ Ո Ւ Մ Ն

**850.** Քաղաքի 8 քուչան լուսաւորվում է վառելանաւթով և իւրաքանչիւր քուչայի համար մի զիշերում գուրս է գնում 136 գրվանքայ: Ո՞րքան նաւթ է գնում մի զիշերում այդ բոլոր քուչաների համար:

**851.** Երկաթուղին ամսէնը բերում է 82564 մանէթ արդիւնք: Ո՞րքան արդիւնք կ'բերի 9 ամսումը:

**852.** Շողենաւը մի օրումը գնում է 289 վերստ, իսկ երկաթուղու գնացքը 567 վերստ: Մի շաբաթվայ ընթացքում երկաթուղու գնացքը ո՞րքան աւելի կերթայ շողենաւից:

**853.** Մի մարդ ամսէնը ստանում էր 138 մանէթ 60 կոպէկ ուժիկ և զորանից մխտում էր 89 մանէթ 45 կոպէկ: Նա ո՞րքան փող յետ կ'զցէր 6 ամսումը:

**854.** Կալուածատէրը իւր 8 օրավարի ամեն-մէկից վեր տուեց 145 փուտ խոտ, իսկ 9 օրավարի ամեն-մէկից վեր տուեց 137 փուտ: Նա ընդամենը ո՞րքան խոտ վեր տուեց:

**855.** Աղբւսի դործարանում օրէնը պատրաստում են 3865 աղիւս: Քանի՞ աղիւս կ'պատրաստեն 16 օրումը:

**856.** Կալուածատէրը գնեց 24 դեսետափն հող, իւրաքանչիւր դեսետափնը 36 մանէթով և 98 կոպէկով. Ո՞րքան տուեց նա բոլոր հողին:

**857.** Վաճառականը 38 արկղ թէյ առաւ և ամեն-մի արկղին տուեց 286 մանէթ 40 կոպէկ. բերելու վորձ էլ տուեց իւրաքանչիւր արկղի համար 3 մանէթ 68 կոպէկ: Բոլոր թէյը ճանապարհավարձով միասին ո՞րքան նստեց նորան:

**858.** Գործարանումը բանում էին 56 տղամարդ և

49 կինարմատ, Ամեն-մի տղամարդը շաբթէնը ստանում էր 10 մանէթ 65 կոպէկ, իսկ կինարմատը 8 մանէթ 75 կոպէկ: Բոլոր տղամարդիքը 39 շաբթում ո՞րքան աւելի կ'ստանան կինարմատներէ:

859. Գիրքը բաղկացած է 58 թերթից, իւրաքանչիւր թերթը ունի 16 էրես, իւրաքանչիւր էրեսումը կայ 38 տող և իւրաքանչիւր տողում 42 տառ: Ընդամենը քանի՞ տառ կայ այդ գրքում:

860. Բերդը սլաշարած ժամանակ 198 թնդանօթի իւրաքանչիւրը արձակեցին 36 անգամ և ամեն-մի արձակելիս մի թնդանօթի համար զնում էր 15 գրվանքայ վաւոր: Բոլորը քանի՞ գրվանքայ վաւոր դուրս զնաց:

861. Վաճառականը գնեց 675 տակառ վառելու նաւթ, իւրաքանչիւր տակառումը կար 36 փուտ: Ո՞րքան արժէ այդ բոլոր նաւթը, եթէ որ գրվանքան արժէ 12 կոպէկ:

862. Երկաթուղու իւրաքանչիւր վերտի շինութիւնը նստում էր 17835 մանէթ: Ո՞րքան կ'նստէր ամբողջ ճանապարհի շինութիւնը, եթէ որ նա 157 վերտ էր:

863. Մահուտի գործարանի վերայ օրէնը ծախս է լինում 138 մանէթ 74 կոպէկ, իսկ ամէնը նա բերում է 7546 մանէթ 86 կոպէկ արդիւնք: Այդ գործարանը տարէն ո՞րքան զուտ արդիւնք է տալի:

864. Վաճառականը 786 դեսեասին անտառին տուեց 95742 մանէթ, իսկ ինքը իւրաքանչիւր դեսեասինը ծախեց 178 մանէթով 45 կոպէկով: Նա ո՞րքան աշխատեց:

865. Պէտքէր հեռադրալար քաշել 736 վերտ տեղ. իւրաքանչիւր վերտի համար զնում էր 247 փուտ լար. դորանից 93846 փուտ արդէն պատրաստ էր: Ո՞րքան լար պէտքէր դարձեալ պատրաստել:

866. Մի ամալայ ընթացքում 360 շոգեկառք սարանք ուղարկեցին. ամեն-մի շոգեկառքով 536 փուտ: Ո՞րքան ճանապարհավարձ ստացան այդ սարանքները ուղարկելու համար, եթէ որ մի փուտի համար ստանում էին 45 կոպ:

867. Ֆրանսիան 9594 քառակուսի մղոն է և իւրաքանչիւր մղոնի վերայ սարում է 3836 բնակիչ: Ո՞րքան բնակիչ ունի Ֆրանսիան:

868. Մի քաղաքից տարվայ ընթացքում արտասահման ուղարկեցին 2568 փուտ ծխախոտ: Ո՞րքան արժէր այդ բոլոր սպրանքը, եթէ որ փուտը արժէր 56 մանէթ 38 կոպէկ:

869. Եւրոպայում իւրաքանչիւր քառակուսի մղոնի վերայ սարում է միջին թւով 1550 բնակիչ: Եւրոպայի 180000 քառակուսի մղոնի վերայ ո՞րքան բնակիչ է սարում:

870. 1858 թուին Անգլիայում հանեցին 7254 միլիոն բերկովեց քարածուխ, Ամերիկայի Միացեալ Նահանգներում 360 միլիոն ցենաներ, Բելժիայում 992 միլիոն բերկովեց, Պրուսիայում 8432 միլիոն փուտ, Ֆրանսիայում 100 միլիոն ցենաներ, Աւստրիայում 35 միլիոն ցենաներ: Այդ թուին Անգլիայում ո՞րքան քարածուխ աւելի է հանած քան թէ վերոյիշեալ բոլոր տէրութիւններում, եթէ որ ցենաները 62 փուտ է:

871. Երկաթուղի շինող ընկերութիւնը դորան վերաբերեալ հարկաւոր իրեղէններին վճարեց 4 միլիոն հետեւեալ կերպով՝ առաջին տարին իւրաքանչիւր ամիս վաճարեց 48560 մանէթ, երկրորդ տարին իւրաքանչիւր ամիս 73896 մանէթ, երրորդ տարին իւրաքանչիւր ամիս 86745 մանէթ, իսկ մնացածը վճարեց չորրորդ տարին: Զորրորդ տարին նա ո՞րքան փող վճարեց:

Բ Ա Յ Ա Ն Ո Ւ Ս Ն

872. Ութ հաւասար քթոցի մէջ կար 2120 խնձոր: Քանի՞ խնձոր կար իւրաքանչիւր քթոցում:

873. Ճանապարհորդը 7 օրում երկաթուղով գնաց 2436 վերստ: Նա միջին թւով օրէնք քանի՞ վերստ էր դնում:

874. Ինը վերստ երկաթուղի շինելու համար վճարեցին 128502 մանէթ: Ո՞րքան նստեց ամեն-մի վերստը:

875. Չինուորաների համար 4109 արշին մահուտից վերարկուներ կարեցին և ամեն-մի վերարկուի համար դնաց 7 արշին: Քանի՞ վերարկու դուրս եկաւ:

876. Մի այգեպան քաղեց 3234 վարունի, իսկ միւսը 6 անդամ նորանից պակաս: Նոքա երկուսը միասին ո՞րքան քաղեցին:

877. Տասնութ սայլով բերին 2250 աղիւս: Իւրաքանչիւր սայլն վերայ քանի՞ աղիւս դրին:

878. Քսանուշորս անտառահատ իւրեանց աշխատանքի համար ստացան միասին 177 մանէթ 12 կոպէկ: Ամեն-միւսը ո՞րքան ստացաւ:

879. Գործարանումը պատրաստեցին 11424 մանէթի հրացան. ամեն-մի հրացանը արժէր 48 մանէթ: Քանի՞ հրացան էր պատրաստած:

880. Գրքի մէջը կայ 401760 տառ: Քանի՞ երեսից է բաղկացած այդ գիրքը, եթէ որ իւրաքանչիւր երեսում կայ 36 տող և իւրաքանչիւր տողում 45 տառ:

881. Գործարանատէրը ամեն-մի մշակին տարէնը վճարում էր 96 մանէթ: Քանի՞ մշակ ունէր նա, եթէ որ բոլորին վճարում էր տարէնը 45696 մանէթ:

882. Երկրագնդի հասարակածը բաժանվում է 360

աստիճան և մի աստիճանի երկայնութիւնը է 105 վերստ: Եթէ որ մի ժամումը դնան 45 վերստ, քանի՞ ժամանակումը կ'պտտեն երկրագունդը:

883. Խճուղին ունի 26 իջևան մէկը միւսից 25 վերստ հեռաւորութեամբ և դորա շինելը նստել է 7436 հազար մանէթ: Ո՞րքան է նստել իւրաքանչիւր վերստը:

884. Մի մարդ մի նահանգում գնեց 126 դեսետին հող, իսկ միւսում 28 դեսետին դորանից աւելի և բոլորին վճարեց 12880 մանէթ: Ամեն-մի դեսետինը ո՞րքան նստեց նորան:

885. Գինեվաճառը 299 մանէթով և 20 կոպէկով առաւ 2 տակառ զինի, ամեն-մի տակառիցը դուրս եկաւ 247 շեշ: Նա իւրաքանչիւր շեշը ո՞րքանով պէտք է վաճառի, որ բոլոր զինու մէջ աշխատի 120 մանէթ 70 կոպ:

886. Փայտավաճառը տարվայ ընթացքում 784 սաժեն փայտ ծախեց 2548 մանէթով: Նա իւրաքանչիւր սաժէնը ո՞րքանով ծախեց:

887. Գործարանը օրէնք պատրաստում է 285 արշին հեռադրալար: Քանի՞ օրումը կ'պատրաստի նա 95 վերստ լար:

888. Գրաշարը մի ժամումը շարում է 992 տառ: Քանի՞ ժամումը նա կ'շարի մի գիրք, որ ունի 248 երես, ամեն-մի երեսում 36 տող և ամեն-մի տողում 46 տառ:

889. Մի շաբաթվայ ընթացքում երկաթուղով 38 շոգեկառք ուղարկեցին սպրանքով, ամեն-մի շոգեկառքում կար 356 փուտ և այդ բոլոր սպրանքի համար ճանապարհավարձ ստացան 9740 մանէթ 16 կոպէկ: Ամեն-մի փուտից ո՞րքան ճանապարհավարձ էին ստանում:

890. Մի նահանգ ունէր 2198 քառակուսի մղոն

և 1017674 բնակիչ: Իւրաքանչիւր քառակուսի մղոնին քանի՞ բնակիչ է ընկնում:

891. Վաճառականը 23001 մանէթով և 4 կոպէկով առաւ 2386 տակառ ճրագու: Ո՞րքան արժէր ամեն-մի տակառը:

892. Գործարանատիրոջը 1000 շոգեկառքի համար վճարեցին 4348560 մանէթ: Ո՞րքան պէտք է վճարել այդպիսի 175 շոգեկառքի համար:

893. Տէրութեան բոլոր զօրքը բողկանում էր 600 գնդից. ամեն-մի գնդումը կար 2400 զինուոր, բայց յետոյ այդ բոլոր զօրքը բաժանեցին 1000 հաւասար գնդի: Այժմ ամեն-մի գնդումը քանի՞ զինուոր կայ:

894. Երկրագնդիցը մինչև արեգակը 144732840 վերստ է և դա մտաւորապէս հաւասար է երկրի 24042 շառաւիղին: Երկրի շառաւիղը քանի՞ վերստ է:

895. Լուսնի մակերևոյթը 185000 քառակուսի մղոն է, իսկ երկրի մակերևոյթը 9250000 քառակուսի մղոն: Երկրի մակերևոյթը քանի՞ անգամ է մեծ լուսնի մակերևոյթից:



Գ.

### ԳՐԱՒՈՐ ՎՃՌԵԼՈՒ ԽԱՐԸ ԽՆԳԻՐՆԵՐ

#### Չորս գործողութեան վերայ:

896. Ոսկերիչը մի տարուայ ընթացքում վաճառեց 100 հատ ոսկէ շղթայ, ամեն-մինը 30 մանէթով և 100 կոճակ, որոնց ամեն-մինը 10 անգամ արժան էր շղթայից: Նա ընդամենը ո՞րքան փող ստացաւ այդ տարի:

897. Բերդը վերցնելու համար տարան 5 գունդ զօրք:

ամեն-մի գնդումը կար 12 հարիւր մարդ, զնոնքը բաժանեցին զօրաբաժիններ, որոնց իւրաքանչիւրումը կար 30 տասնեակ: Յարձակմունքի ժամանակը 7 զօրաբաժին բողոքովին ջարդուեց, մնացածները մտան բերդը: Քանի՞ զինուոր մտաւ բերդը:

898. Վաճառականը ստացաւ 10 արկղ կիտրոն, որոնց իւրաքանչիւրի մէջ կար մէկ ու կէս հաղար. կիտրոնի հարիւրը նա առել էր 3 մանէթով. դոցանից 25 մարդի վերայ վաճառեց ու թու թ տասնեակ, տասնեակը 40 կոպէկով. 300 հատ էլ փչացաւ, իսկ մնացածը վաճառեց տասնեակը 50 կոպէկով: Նա ո՞րքան աշխատեց:

899. Մրգավաճառը ստացաւ 10 տոպրակ խնձոր, որոնց ամեն-մէկում կար 2 հաղար և 4 տասնեակ. այդ խրնձորները աճեց ուրիշ տոպրակների մէջ. 40 մեծ տոպրակներից ամեն-մէկի մէջ աճեց 2 հարիւր և 6 տասնեակ: Իսկ մնացածը աճեց 100 մանր տոպրակների մէջ: Մանր տոպրակներից իւրաքանչիւրի մէջ քանի՞ խնձոր մտաւ:

900. Հեղինակը պպեց իւր շարադրութիւնից 4 հաղար օրինակ. դորանից նա վաճառեց 8 հարիւր, մինը 50 կոպէկով. 24 հարիւր էլ առեց դրավաճառին, մինը 60 կոպէկով, իսկ մնացածը կամենում է վաճառել 10 հատը 5 մանէթով և 50 կոպէկով: Նա ո՞րքան կ'աշխատէր, եթէ որ պակու ծախք արել էր 800 մանէթ:

901. Գրավաճառը 3400 մանէթով առաւ երկու տեսակ զիրք, մի տեսակից 2500 օրինակ, տառը հատը 4 մանէթով, իսկ միւս տեսակից 12 հարիւր: Նա երկրորդ տեսակ զրքի իւրաքանչիւր օրինակին ո՞րքան տուեց:

902. Վաճառականը ստացաւ 10 արկղ կիտրոն, ամեն մի արկղումը կար 12 հարիւր և տասնեակը արժէր 40 կոպէկ. դորանից 30 մարդի վերայ վաճառեց, ամեն-մէկի վերայ 10-ը

տասնեակ, տասնեակը 5 կողէկով և մի վաճառականի վերայ 4 հազար, 100-ը 5 մանէթով, իսկ մնացածը վաճառեց՝ տասնեակը 60 կողէկով: Վաճառականը որքան աշխատեց:

**903.** Մրգավաճառը գնեց 3456 խնձոր, հարիւրը 4 մանէթով, իսկ ինքը վաճառեց տասնեակը 50 կողէկով: Նա որքան աշխատեց:

**904.** Այգեպանը 8 մարկից վարունէի քաղեց. ամեն-մի մարկից 1800 հատ, էլ ը քաղեց 10 մարկից, ամեն-մէկից 560 հատ և վաճառեց հարիւրը 2 մանէթով: Նա որքան փող ստացաւ:

**905.** Վաճառականը ստացաւ 96 հազար կիտրոն արկղներով, իւրաքանչիւր արկղն մէջ կար 24 հարիւր և ամեն-մի արկղին տուեց 154 մանէթ, իսկ ինքը իւրաքանչիւր 1000-ը վաճառեց 84 մանէթով: Նա որքան աշխատեց:

**906.** Ութ մշակ միտին ստացան վարձ 9 հատ 10 մանէթանոց, 9 հատ մանէթանոց, 4 հատ 2-շայանոց և 4 հատ կողէկանոց: Ամեն-մէկին որքան փող կ'ընկնէր:

**907.** Վաճառականը ստացաւ 6 արկղ կիտրոն, ամեն-մէկումը կար 165 հատ. այդ կիտրոնից 6 մարդի վերայ վաճառեց, ամեն-մէկին 125 հատ, հարիւրը 4 մանէթով, իսկ մնացածը կամենում էր վաճառել մինը 6 կողէկով: Նա որքան կ'աշխատէր բոլորի մէջ, եթէ որ ամեն-մի արկղին ինքը տուել էր 6 մանէթ:

**908.** Մրգավաճառը ունէր 2 արկղ միրգ. մէկի մէջ կար 2 հարիւր խնձոր և 60 տասնեակ տանձ, այդ բոլորը արժէր 46 մանէթ, միւս արկղումը միւսնոյն մրդից կար 2 հարիւր խնձոր և 90 տասնեակ տանձ. այդ բոլորն էլ արժէր 64 մանէթ: Որքան արժէր խնձորի և տանձի տասնեակը:

**909.** Գիւղացին տարաւ վաճառելու 6 թոց ձու.

ուսումնարանի լուսաւորութիւնը 4 շաբաթում, եթէ որ 4 մոմը քաշում է 28 լոտ:

**957.** Վեց մղոնը 3 վերստը և 234 սաժէնը քանի՞ շիւիմ է:

**958.** 124 միլիօն և 416 հազար վայրկեանը քանի՞ տարի է, եթէ որ տարին հաշուենք 12 ամիս, ամիսը 30 օր:

**959.** Երկիրը 31556928 վայրկեանում պտտելով արեգակի շուրջ՝ կազմում է աստեղաբաշխոտիան տարի: Ս. յդ քանի՞ օր է անում, քանի՞ ժամ, քանի՞ րոպէ և քանի՞ վայրկեան:

**960.** Երկիրը պտտում է արեգակի շուրջը 365 օրում 5 ժամում 48 րոպէում և 46 վայրկեանում, իսկ լուսինը պտտում է երկրի շուրջը 27 օրում 7 ժամում 43 րոպէում և 5 վայրկեանում: Երկիրը լուսնից որքան ժամանակ է աւելի գործ զնում իւր շրջանը կատարելու համար:

**961.** Ուսումնարանումը 12 շաբաթումը դուրս է գնում 8 փուս 30 զրվանքայ 20 լոտ շաքար: Որքան շաքար դուրս կ'երթայ ամբողջ տարումը:

**962.** Պէտք էր հեռագրական լար ձգել 10 վերստ տեղ. գորա համար վերցրին 16 կտոր, որոնց ամեն-մէկի երկարութիւնը էր 85 սաժէն և 1 արշին, էլ ը վերցրին 24 կտոր, որոնց ամեն-մէկի երկարութիւնն էր 82 սաժէն և 2 արշին: Ելն որքան լար պէտք է առնել, որ բաւական լինի:

**963.** Երկաթուղու վերայ պէտք է դարսելին երկաթէ զճեր 500 վերստ տարածութեամբ. իւրաքանչիւր շաբաթ դարսում էին 12 վերստ 257 սաժէն 4 Ֆուտ տեղ: Որքան տեղ կ'մնար դարսելու 35 շաբաթից յետոյ:

**964.** Սըրեայի անիւը մի պտոյտը անում է 18 վայր-

կենում: Նա քանի՞ անգամ կ'պտտի 2 ժամում 40 բու-  
պէում և 30 վայրկենում:

**965.** Գործարանումը պատրաստեցին 24 զանգակ,  
ամեն-մի զանգակի համար գնաց 87 փուտ 19 զրվանքայ  
72 մխալ պղինձ և 1 զրվանքայ 56 մխալ արծաթ:  
Ո՞րքան են քաշում բոլոր զանգակները և ո՞րքան արժեն,  
եթէ որ մինը արժէ 1974 մանէթ:

**966.** Պատերազմի ժամանակը 43 թնդանօթից իւ-  
րաքանչիւրը արձակեցին 12 անգամ: Ո՞րքան և քանի՞ ան-  
գամ արձակելու վառօդ մնաց, եթէ որ բոլոր վառօդն էր  
84 փուտ և 18 զրվանքայ և ամեն-մի արձակելու հա-  
մար գնում էր 6 զրվանքայ:

**967.** Մետաքսավաճառը գնեց 4 փուտ 18 զր-  
վանքայ 24 լոտ մետաքս: Նա ո՞րքան վճարեց դո-  
րա համար, եթէ որ 12 զրվանքան արժէր 103 մա-  
նէթ 68 կոպէկ:

**968.** Ուսումնարանի համար գնեցին 3 փուտ 10  
զրվանքայ 24 լոտ թէյ, որի ամեն-մի զրվանքան արժէր 1  
մանէթ 60 կոպէկ: Բոլոր թէյը ո՞րքան արժէր:

**969.** Գործարանումը 18 ժամում պատրաստում են  
308 սաժէն և 4 Ֆուտ հեռադրական լար: Ո՞րքան էր  
քաղաքային հեռադրալարի երկարութիւնը, եթէ որ նո-  
րան պատրաստեցին 3 օրումը 19 ժամումը 25 բուպէումը:

**970.** Վաճառականը ունէր 18456 լոտ պղինձ, որի  
փուտը վաճառեց 12 մանէթով և 80 կոպէկով: Նա բո-  
լորի համար ո՞րքան փող ստացաւ.

**971.** Երեխան մինչև այսօր ապրել է 98736 ժամ.  
Նա մտաւ ծխական ուսումնարան այն ժամանակը, երբ 7  
տարեկան էր 4 ամսական 18 օրական և այնտեղ մնալով

2 տարի 3 ամիս և 29 օր՝ մտաւ գիմնադիօն: Այժմ՝ քա-  
նի՞ տարի է, որ նա գտանվում է գիմնադիօնում:

**972.** Վաթսուն մարդի համար առան 15 տոպրակ  
ալիւր. ամեն-մի տոպրակումը կար 3 փուտ 18 զրվանքայ  
9 լոտ: Ո՞րքան ալիւր կ'մնար 3 շաբաթից յետոյ, եթէ որ  
ամեն-մի մարդին օրէնը տալիս են 1 զրվ. 14 լոտ ալիւր:

**973.** Պղնձէ հանքումը միջին թուով ամսէնը հա-  
նում են 72 փուտ պղինձ, 1 տարում և 10 ամսում  
հանած պղնձից շինեցին 24 թնդանօթ, որոնց ամեն-մինը  
քաշում էր 28 փուտ և 16 զրվանքայ և 4 զանգակ հաւա-  
տար ծանրութեամբ: Ո՞րքան էր քաշում ամեն-մի զանգակը:

**974.** Արհեստաւորը ունէր 3 զրվանքայ 10 լոտ և  
2 մխալ արծաթ, որից շինեց մամակալներ, մինը 10 լո-  
տից և 2 մխալից և վաճառեց ամեն-մի մամակալը 14  
մանէթով 50 կոպէկով: Նա ո՞րքան փող ստացաւ:

**975.** Հացթուխը 2 փուտ 10 զրվանքայ 8 լոտ ա-  
լիւրից հաց թխեց. ամեն-մի հացի համար գնաց 2 զր-  
վանքայ 12 լոտ և իւրաքանչիւր հացը վաճառեց 16 կո-  
պէկով: Նա բոլոր հացերի համար ո՞րքան փող ստացաւ:

**976.** Պղնձգործը 4 փուտ 25 զրվանքայ 20 լոտ  
պղնձից կաթսաներ շինեց. ամեն-մի կաթսայի համար գնաց  
3 զրվանքայ 12 լոտ և ամեն-մի կաթսան նա վաճառեց  
1 մանէթ 95 կոպէկով: Նա ո՞րքան փող ստացաւ բոլոր  
կաթսաների համար:

**977.** Չորս հարիւր վերստ ճանապարհ շինելու հա-  
մար բանեցին 1 տարի և 4 ամիս. ամսէնը շինում էին 15  
վերստ 240 սաժէն. իսկ մնացածը աւարտեցին 32 շաբաթումը:  
Վերջի ամեն-մի շաբաթումը ո՞րքան ճանապարհ էին շինում:

**978.** Բազի երկարութեամբ, որ էր 49 սաժէն 2 ար-

շին 12 վերջոյ, կանգնեցրին աշակերաններն հետևեալ կերպով՝ 8 երեխայի կանգնեցրին մէկը միւսից 3 սաժէն 2 արշին 12 վերջոյ հեռաւորութեամբ. 5 երեխայի կանգնեցրին մէկը միւսից 2 սաժէն 1 արշին 9 վերջոյ հեռաւորութեամբ, 4 երեխայի կանգնեցրին 1 սաժէն 2 արշին 11 վերջոյ հեռաւորութեամբ. իսկ մնացածներին կանգնեցրին մէկը միւսից 2 արշին 1 վերջոյ հեռաւորութեամբ մի աշակերտ էլ կանգնեց պատի մօտ: Քանի՞ աշակերտ կանգնեցրին:

**979.** Գործարանի համար առան 18 տուրակ ալիւր, որոնց ամեն-մէկունը կար 3 փուտ 12 գրվանքայ. դորանից օրէնը գործ էին դնում 1 փուտ 16 գրվանքայ. 4 շաբաթից յետոյ մնացածը վաճառեցին փուտը 80 կոպէկով: Ո՞րքան փող ստացան մնացած ալիւրի համար:

**980.** Զինուորների համար առան 18 կտոր մահճուտ, ամեն-մի կտորն էր 38 արշին 2 վերջոյ. այդ բոլոր մահճուտից կարեցին 85 սերտուկ, մինը 3 արշինից և 12 վերջոյից և 56 վերարկու: Ո՞րքան մահճուտ գնաց իւրաքանչիւր վերարկուի համար:

**981.** Վառօղի գործարանում պապրաստեցին 1491 փուտ 30 գրվանքայ վառօղ. դորանից 918 փուտ ածեցին 72 հաւասար տակառի մէջ: Էլի քանի՞ այլպիսի տակառ պէտք է լինի, որ մնացածը վերցնի:

**982.** Աշակերտների համար առան 475 արշին մահճուտ, որից 346 արշին 12 վերջոյ գնաց 73 ձերք շորի համար: Մնացած մահճուտից քանի՞ ձերք այլպիսի շոր դուրս կ'գայ:

**983.** Շոգենաւը 100 օրումը գնաց 7840 վերստ և նաւապետը հաշուեց, որ եթէ նոյն արագութեամբ ճանապարհը շարունակի, տեղ կ'հասնի 60 օրից յետոյ: Ո՞րքան էր բոլոր ճանապարհի երկարութիւնը:

**984.** Արհեստաւորը 4 գրվանքայ 16 լոտ արծաթից շինեց մի դիւժին բաժակ և մի դիւժին սեղանի գդալ: Ո՞րքան էր քաշում ամեն-մի բաժակը, եթէ որ մի գդալը քաշում էր 5 լոտ 2 մխալ:

**985.** Երեսուն վեց սայլի վերայ դրած էր 288 շեւ վերա գարի, որի ամեն-մի շեւվերիկը քաշում էր 33 գրվանքայ: Ամեն-մի սայլի վերայ քանի՞ փուտ էր դրած:

**986.** Մի վաճառական միւսին տուեց 12 փուտ 15 գրվանքայ շաքար, որի փուտը արժէր 7 մանէթ 20 կոպէկի իսկ միւսը դորա փոխարէն տուեց քաթան, արշինը 18 կոպէկով: Քանի՞ կտոր քաթան տուեց երկրորդը, եթէ որ մի կտորն 45 արշին է:

**987.** Մի վաճառական տուեց միւսին 12 կտոր մահճուտ, ամեն-մի կտորն 36 արշին 12 վերջոյ էր և արշինը արժէր 4 մանէթ 80 կոպէկ, իսկ միւսը դորա փոխարէն տուեց թէյ, որի գրվանքան արժէր 2 մանէթ 40 կոպէկ: Երկրորդը ո՞րքան թէյ տուեց առաջինին:

**988.** Կալուածատէրը ունէր 520 շեւվերտ 4 շեւ վերիկի դարի. մի տարուայ միջոցում նա դորանից իւր ձիաներին ամէնը տուեց 14 շեւվերտ 5 շեւվերիկ և 6 գարնց, 280 շեւվերտ էլ վաճառեց, իսկ մնացածը ցանեց և ստացաւ մէկին եօթը: Նա ո՞րքան գարի վերցրեց:

**989.** Պղնձգործը հալեց 4 կտոր պղինձ, որի ամեն-մի կտորը քաշում էր 2 գրվանքայ 19 լոտ 1 մխալ, էլի հալեց 5 կտոր, որի ամեն-մի կտորը քաշում էր 4 գրվանքայ 16 լոտ 2 մխալ և այդ բոլորիցը շինեց լապտերներ, որոնց ամեն-մէկի համար գնաց 3 գրվանքայ 9 լոտ 2 մխալ: Քանի՞ լապտեր դուրս եկաւ:

**990.** Ալափը գնեց 12 տուրակ լաւ ալիւր և 16

տոպրակ հասարակ ալեր. այդ բոլորը միասին քաշում էր 161 փուտ և 32 գրվանքայ: Ո՞րքան էր քաշում լաւ ալերի մի տոպրակը, եթէ որ հասարակինը քաշում էր 5 փուտ 12 գրվանքայ և 10 լոտ:

991. Շողենաւը 8 ժամումը գնում էր 141 վերստ 276 սաժէն, իսկ առագաստաւոր նաւը կարող է գնալ այդ տարածութիւնը 18 ժամումը: Մի օրումը շոգենաւը ո՞րքան առաջ կ'ընկնի առագաստաւոր նաւից, եթէ որ երկուսն էլ դուրս գնան նաւահանգստից միևնոյն ժամանակը:

992. Մշակների համար առան 18 տոպրակ ալեր, ամեն-մի տոպրակումը կար 6 փուտ 24 գրվանքայ: Ո՞րքան ալեր կ'մնար 6 շաբաթից յետոյ, եթէ որ օրէնը դուրս էր գնում 34 գրվանքայ 16 լոտ 2 մսխալ:

993. Վաճառականը գնեց 12 տակառ նաւթ, ամեն-մի տակառումը կար 9 փուտ 12 գրվանքայ 7 լոտ. էլի գնեց 18 տակառ, որոնց ամեն-մէկումը կար 10 փուտ 15 գրվանքայ 19 լոտ և դարձեալ գնեց 24 տակառ, որոնց ամեն-մէկումը կար 8 փուտ 30 գրվանքայ 24 լոտ. այդ բոլոր նաւթը աճեց 65 հաւասար տակառի մէջ: Ամեն-մի տակառումը ո՞րքան նաւթ մնաւ:

994. Թռիկ երկարութիւնը էր 37 սաժէն 5 ֆուտ 8 դիւլիմ. դորանից կտրեցին 11 սաժէն 4 դիւլիմ. իսկ մնացածը հաւասար կտորներ արին և ամեն-մի կտորը դուրս եկաւ 3 սաժէն 2 ֆուտ 5 դիւլիմ: Քանի՞ այդպիսի կտոր դուրս եկաւ:

995. Մի մարդ ունէր 3 արծաթէ հին ջահ, որոնց ամեն-միւնը քաշում էր 6 գրվանքայ 15 լոտ. նա այդ բոլոր վաճառեց 465 մանէթով 75 կոպէկով: Գրվանքան ո՞րքանով վաճառեց:

996. Հեռագրական լարի 20 արշինը քաշում է 1 փուտ 12 գրվանքայ 16 լոտ: Ո՞րքան կ'քաշէ այդպիսի լարը, որի երկարութիւնն է 1 վերստ 206 սաժէն 2 արշին:

997. Բեռնակիր շոգեկառքում գրին 261 փուտ 25 գրվանքայ սպրանք հակներով. դոցանից 26 հակի ամեն-մէկը քաշում էր 8 փուտ 30 գրվանքայ 21 լոտ 1 մսխալ. իսկ մնացած հակների ամեն-միւնը քաշում էր 2 փուտ 4 գրվանքայ 7 լոտ 1 մսխալ: Ընդամենը քանի՞ հակն էր այդ սպրանքը:

998. Բեռնակիր շոգեկառքը 1 ժամում և 4 րոպէում գնում էր 22 վերստ 264 սաժէն: Ո՞րքան ժամանակումը կերթայ նա 4 մղոն 5 վերստ 396 սաժէն, եթէ որ ճանապարհին կանգնի ընդամենը 43 րոպէ:

999. Վաճառականը ունէր 48 տակառ շաքարաւազ, որ քաշում էր 91 բերկովեց 9 փուտ 30 գրվանքայ 30 լոտ. դոցանից 23 տակառի ամեն-մէկում կար 20 փուտ 10 գրվանքայ: Ո՞րքան շաքար կար մնացած ամեն-մի տակառումը, եթէ որ նոքա հաւասար էին:

1000. Պետերբուրգիցը մինչև Մոսկվա 600 վերստ է. բեռնակիր շոգեկառքը 1 ժամում 12 րոպէում գնում էր 24 վերստ. նա 7 տեղ կանգնեց, ամեն-մի տեղում 1 ժամ 25 րոպէ: Նա քանի՞ ժամանակում Պետերբուրգիցը հասաւ Մոսկվա:

1001. Ճանապարհորդը գնաց 192 վերստ. իւրաքանչիւր 15 վերստը նա գնում էր 1 ժամում 45 րոպէում և 9 իջևանից ամեն-մէկում հանգստացաւ 1 ժամ 14 րոպէ: Նա ո՞րքան ժամանակ էր ճանապարհորդում:

1002. Արհեստաւորը 30 գրվանքայ 16 լոտ արծաթից շինեց մի դիւլիմ բաժակ, որի մի հատը քաշում էր 18 լոտ 2 մսխալ և մի դիւլիմ գդալ, որի մի հատը

քաշում էր 13 լոտ 1 մսխալ, իսկ մնացած արծաթից շինեց մոմակալներ, մինը 24 լոտից և 2 մսխալից: Նա որքանով տուեց ամեն-մի մոմակալը, եթէ որ բոլոր մոմակալները վաճառեց 561 մանէթով և 60 կոպէկով:

1003. Դերձակը 58 արշին 8 վերշոկ ժապաւէնից շինեց կանանց զարդ, ամեն-մի զարդի համար զնաց 2 արշին 7 վերշոկ և իւրաքանչիւրը վաճառեց 5 մանէթով և 80 կոպէկով: Նա որքան աշխատեց, եթէ որ ժապաւէնի արշինը արժէր 1 մանէթ 92 կոպէկ:

1004. Արհեստաւորը 5 փուտ 20 գրվանքայ պղնձից շինեց ինքնաեռներ, ամեն-մինը 22 գրվանքայից և վաճառեց իւրաքանչիւրը 8 մանէթով 80 կոպէկով: Նա որքան շինելու վարձ ստացաւ բոլոր ինքնաեռների համար, եթէ որ պղնձի փուտը արժէր 10 մանէթ 80 կոպէկ:

1005. Ոսկերիչը ուներ 16 գրվանքայ 16 լոտ 2 մսխալ արծաթ. դորանից նա վերցրեց 6 գրվանքայ 24 լոտ 2 մսխալ և շինեց 25 բաժտի: Քանի՞ այրախի բաժտի զուրս կ'զայ մնացած արծաթից:

1006. Կապալառուն յանձնատաւ ձգել երկու հեռադրական լար, մինը 12 մղոն 5 վերստ տեղ, իսկ միւսը 58 մղոն տեղ: Նա որքան ստացաւ երկրորդ հեռադրական լարի համար, եթէ որ առաջինի համար ստացաւ 10502 մանէթ:

1007. Վաճառականը ուներ 11 փուտ 19 գրվանքայ վառելանաւթ. դորանից նա ածեց 48 ամանի մէջ, ամեն-մէկում 5 գրվանքայ 20 լոտ և ժաճառեց գրվանքան 15 կոպէկով, իսկ մնացածը ածեց մանր աճանների մէջ, ամեն-մէկում 3 գրվանքայ 12 լոտ և վաճառեց մի ամանը 54 կոպէկով: Նա որքան փող ստացաւ բոլոր նաւթի համար:

1008. Ուսուցիչը համար զնեցին 9 փուտ 24

ամեն-մի քթոցում կար 137 հատ. դորանից 245 հատ նա վաճառեց՝ տասնեակը 20 կոպէկով, իսկ մնացածը վաճառեց՝ հարիւրը 3 մանէթով: Նա որքան փող ստացաւ:

910. Այգեպանը առաջի շաբաթը քաղեց 258 վարունկ, երկրորդ շաբաթը 236, երրորդ շաբաթը 185 և չորրորդ շաբաթը 254 և վաճառեց հարիւրը 2 մանէթով: Նա ընդամենը որքան փող ստացաւ:

911. Այգեպանը քաղեց 4 քթոց խնձոր. որոնց մէկումը կար 256 հատ, միւսում 238, երրորդում 165 և չորրորդում 283. դորանից նա 369 հատ պահեց, իսկ մնացածը վաճառեց՝ տասնեակը 40 կոպէկով: Նա որքան փող ստացաւ:

912. Աղ զնելու համար զնեցին 3 սայլ վարունկ. առաջին սայլի վերայ կար 8 տուրակ, ամեն-մի տուրակում 236 հատ, երկրորդի վերայ կար 7 տուրակ, ամեն-մէկում 274 հատ և երրորդի վերայ կար 9 տուրակ, ամեն-մէկում 196 հատ: Այդ վարունկներից 190 հատ փչացել էր, մնացածը աղ զրին 10 հաւասար տակառում: Ամեն-մի տակառում քանի՞ վարունկ աղ զրին:

913. Մի շտեմարան շինելու համար առաջի անգամը բերին 9 սայլ աղիւս, ամեն-մի սայլումը 234 հատ, երկրորդ անգամը բերին 8 սայլ, ամեն-մի սայլումը 168 հատ: Այդ բոլոր աղիւսները դարսեցին 10 հաւասար կարգ: Ամեն-մի կարգումը քանի՞ աղիւս կար:

914. Պատերազմից յետոյ մի զօրաբաժնից մնաց 8 զունդ. ամեն-մի զնդումը 137 մարդ, իսկ միւս զօրաբաժնից մնաց 9 զունդ, ամեն-մի զնդումը 126 մարդ, այդ բոլոր զօրքը միացրին և կապմեցին 10 հաւասար զօրաբաժին: Ամեն-մի զօրաբաժինը քանի՞ մարդ մտաւ:

Եւտուշեակի. Ժողովածու թուաքանական խնդիրների Մասն 1. 9

**915.** Վաճառականը գնեց 8 տակառ վառելանութ, ամեն-մի տակառումը կար 1044 գրվանքայ և էլի առաւ 9 տակառ, ամեն-մէկում 1052 գրվանքայ. նա այդ բոլոր վառելանութը ածեց 10 հաւասար տակառի մէջ: Ո՞րքան վառելանութ մտաւ ամեն-մի տակառում և ո՞րքան արժէր 4 տակառը, եթէ որ գրվանքան արժէր 10 կոպէկ:

**916.** Մի մարդ ամսէնը ստանում էր 60 մանէթ 60 կոպէկ ռոճիկ. դորանից տան վարձ տալիս էր ամսէնը 12 մանէթ 50 կոպէկ, 4 ամսումը մնխում էր 5 սաժէն փայտ, որի սաժէնը արժէր 2 մանէթ 85 կոպէկ, կերակուրի տալիս էր ամսէնը 10 մանէթ 80 կոպէկ, շորի տալիս էր տարէնը 110 մանէթ և մանր ծախքի համար ամսէնը գնում էր 5 մանէթ 30 կոպէկ: Նա տարէնը ո՞րքան էր յետ գցում:

**917.** Ճանապարհորդը մանեկաւ ընդամենը 8994 վերստ. այսինքն 9 օր նա մանեկաւ ձիով, օրէնը 142 վերստ, 15 օր մանեկաւ երկաթուղով, օրէնը 356 վերստ, 24 օր մանեկաւ շոգենաւով օրէնը 98 վերստ, իսկ մնացածը մանեկաւ ոտով: Նա քանի՞ վերստ մանեկաւ ոտով:

**918.** Ութ զիւղացի 12 ձիով 36 չետվերտ գարի տարան քաղաք և ամեն-մի չետվերտը վաճառեցին 6 մանէթով և 28 կոպէկով. ստացած փողերիցը ամեն-մի ձիու համար մնխեցին 1 մանէթ 38 կոպէկ, իսկ ամեն-մի մարդի համար մնխեցին 75 կոպէկ և մնացած փողը հաւասար բաժանեցին իւրեանց մէջ: Ամեն-մէկին ո՞րքան ընկաւ:

**919.** Գործարանատէրը վաճառեց 58 թնդանօթ, ամեն-մինը 456 մանէթով և 17 զանգակ, որոնց ամեն-մինը 179 մանէթ պակաս արժէր թնդանօթից: Նա ո՞րքան փող ստացաւ:

**920.** Վաճառականը 38 դիւժին ւախէին տուեց 68

մանէթ 40 կոպէկ, ինքը դորանից վաճառեց 144 հատ. ամեն-մի դիւժինը 2 մանէթով և 40 կոպէկով, իսկ մնացածի ամեն-մի դիւժինը վաճառեց 2 մանէթով և 10 կոպէկով: Նա ո՞րքան աշխատեց:

**921.** Շոգենաւով բերում էին 49 տակառ շաքարաւաղ. այդ բոլորը արժէր 6468 մանէթ. ապրանքը շոգենաւիցը դուրս հանելու ժամանակը մի տակառ ջուրն ընկաւ և կտորվեց: Շոգենաւի տէրը ո՞րքան ճանապարհավարձ պէտք է ստանայ շաքարի համար, եթէ որ ամեն-մի տակառի համար նորան պէտք է տային 8 մանէթ 56 կոպէկ և կտորած տակառի զինը պէտք է նորանից դուրս գային:

**922.** Աշակերտը պէտք է արտագրէր 1348 բառ. 6 օր նա արագրեց՝ օրէնը 126 բառ, իսկ մնացածը արտագրեց 8 օրումը: Վերջին ամեն-մի օրումը նա քանի՞ բառ արտագրեց:

**923.** Ճանապարհորդը 2448 վերստ մանեկաւ երկաթուղով, սայլով մանեկաւ 4 անգամ դորանից պակաս, իսկ ծովով մանեկաւ 15 անգամ պակաս երկաթուղով և սայլով մանեկածից միասին: Նա ընդամենը քանի՞ վերստ մանեկաւ:

**924.** Երկաթուղու մի կտոր տեղի համար, որի երկարութիւնը էր 45 սաժէն, պէտք էր 1035 փուտ երկաթ. դորանից 29 սաժէն տեղի համար արդէն պատրաստել էին 4 քանի՞ փուտ էլի պէտք է պատրաստէին:

**925.** Ճանապարհորդը մի ամիս ճանապարհ գնաց, օրէնը 256 վերստ և նոյն ճանապարհով վերադարձաւ տուն 48 օրումը: Վերադառնալիս նա օրէնը քանի՞ վերստ էր գնում:

**926.** Երկու ճանապարհորդ միմեանց պատահեցին ճանապարհին և իմացան, որ նոցանից ամեն-մինը դուրս է եկել այն քաղաքիցը, որտեղ միւսը կամենում է գնալ.

նոցանից մինը մինչև պատահելը գնացել էր 15 օր, օրէնը 84 վերստ, իսկ միւսը 28 օր, օրէնը 90 վերստ: Նոցանից ամեն-մինը քանի՞ օրումը տեղ կ'հասնէր, եթէ որ գնար առաջվայ պէս:

**927.** Մշակը մի տարի բանեց դործարանումը, ամսէնը 28 մանէթով և 50 կոպէկով. նա այդ փողից շաբթէնը մնտում էր 4 մանէթ 95 կոպէկ. յետ զցած փողովը նա առաւ 36 չետվերտ գարի: Նա ամեն-մի չետվերտին ո՞րքան փող տուեց:

**928.** Տանտիկինը մի ծառայ վարձեց տարէնը 144 մանէթով և 84 կոպէկով. ծառան մնաց այդ տեղ 2 տարի 4 ամիս. նա իւր վարձումը ստացաւ 283 մանէթ 56 կոպէկ փող, իսկ մնացածին մի ձի: Ո՞րքան արժէր ձին:

**929.** Եոզնաւը շարթէնը գնալով 784 վերստ, 48 օրումը հասաւ իւր նշանակած տեղը, իսկ այն տեղից վերադառնալիս նա օրէնը գնում էր 96 վերստ: Նա քանի՞ օրումը վերադարձաւ:

**930.** Վաճառելու ուղարկեցին 16 սայլ շաքարաւաղ, ամեն-մի սայլումը դրած էր 3 տակառ և բոլոր շաքարը 1632 փուտ էր: Ո՞րքան արժէր իւրաքանչիւր տակառը, եթէ որ փուտը արժէր 6 մանէթ 82 կոպէկ:

**931.** Երկու շոգնաւ, որ հեռու էին միմեանցից 6656 սաժէն, գնացին միմեանց հանդէպ: Քանի՞ ժամից յետոյ միմեանց կ'պատահեն, եթէ որ մինը մի բոպէումը գնում է 14 սաժէն, իսկ միւսը 18 սաժէն:

**932.** Քաղաքիցը մինչև գիւղը 7945 վերստ է. երկու ճանապարհորդ միւկնոյն ժամանակ դուրս եկան այդ քաղաքներիցը միմեանց հանդէպ և պատահեցին միմեանց 35 օրից յետոյ: Քաղաքից գնացողը օրէնը գնում էր 136

վերստ: Օրէնը քանի՞ վերստ էր գնում գիւղից դուրս եկողը:

**933.** Քաղաքիցը մինչև գիւղը 1358 վերստ է. ճանապարհորդը 8 օր գնաց ձիով, իսկ մնացածը ոտով զընաց 9 օրումը, օրէնը գնալով 54 վերստ: Նա ձիով օրէնը քանի՞ վերստ էր գնում:

**934.** Մի վաճառական միւսին տուեց 7 փուտ շաքար, որի փուտը արժէր 6 մանէթ 82 կոպէկ, իսկ միւսը տուեց 9 զրվանքայ թէյ, որի զրվանքան արժէր 4 մանէթ 35 կոպէկ: Նոցանից ո՞րը և ո՞րքան պէտք է վճարի միւսին:

**935.** Վաճառականը ունէր երեք ամանում մուրաբայ. մի ամանումը կար 8 զրվանքայ և զրվանքան արժէր 1 մանէթ 20 կոպէկ, միւսումը կար 6 զրվանքայ և զրվանքան արժէր 75 կոպէկ, իսկ երրորդումը կար 10 զրվանքայ: Նա այդ բոլորը խառնեց միմեանց հետ: Ո՞րքան արժէր երրորդ ամանի մուրաբի զրվանքան, եթէ որ խառնածի զրվանքան արժէր 95 կոպէկ:

